

## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

2581



ԺԱՄՅԴՊՐՈՅՈՒՄ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ԹԻՖԼԻՍ - 1925

3K26  
L-35

07 JUN 2005

Արարատի Լուսմողկոմի Գլխավոր Սոցիալական Դաստիարակության  
Գրական-Գեղարվեստական Բաժին

3K26

L-35

20 NOV 2009

# ԼԵՆԻՆԻ ԺԱՄԸ

## ԴՊՐՈՑՈՒՄ

ՀՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԳԻՐՔ


Դ ԱՌԱՋԱԿԱՆ ՀԵՂԵՑԵՆՔԵՑԻ ԴՊՐՈՑԻ ՀՆԹԵՐՑ

Վ. Ն. ՇՈՒԼԳԻՆԻ ՅԵՎ Կ. Տ. ՍՎԵՐԴԼՈՎԱՅԻ  
ԽՄԲԱԴՐՈՒԹՅԱՄԲ

1008/397  
38471

Թռույլ ե տրված Պետական Գիտական Խորհրդի Գիտ.-  
Մանկավարժական սեկցիայի կողմից

ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆ ՊՈԽՍԵՐԵՆ 2-ՐԴ  
ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԻՑ



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Թիֆլիս — 1925

11 SEP 2013

2581

## Ն Ա Խ Ա Բ Ա Ն

Սիրելի փոքրիկ ընթերցողներ, այս գիրքը մենք  
լույս ենք ընծայում բանվորների ու գյուղացիների  
թանգագին առաջնորդ, մանուկների բարեկամ Վ. Ի.  
Հենինի մահվան տարեգարձի առիթով:

Այս գրքում գուշ կը կարդաք ու կը տեսնեք, թե  
ինչպես ոռւս բանվորների յերեխաները սիրում, հար-  
զում և հիշում են Լենինին:

Ռուս բանվորների և գյուղացիների յերեխանե-  
րի համար հեղափոխության այս վերջին յոթ տա-  
րիների ընթացքում Լենինը դարձավ հերոսական  
ձգտումների, նմանողությունների աղբյուր: Նրա  
կրանքի, գործունեյության, աշխատանքի յուրաքան-  
չյուր վարկյան և վերջապես մահը արտացոլում են  
նրանց ստեղծագործությունների մեջ:

Յերեխաները լիովին արտացոլում են այն սերն  
ու սերտ կապը, փոր այս վերջին տարիներում  
հաստատվել եր իլիչի և նրանց հայրերի ու մայրերի  
միջև. նրանք արտացոլում են աշխատավորության  
մեծ վիշտը Լենինի կորսույան առթիվ, նրանց ատելու-  
թյունը դեպի թշնամին ու նրանց պատրաստակա-  
մությունը պայքարելու իրենց սիրելի առաջնորդի  
պատվերները իրականացնելու համար:

Այն, ինչ փոր գուշ կը կարդաք այս գրքում,  
հնարավորություն կը տա ձեզ գատելու այն մասին,  
թե վորքան ուժեղ և խորն են ազգել նոր հովերը



48945-65




ոռւս յերեխաների վրա, ինչ իղձերով են ապրում նրանք, ինչի յեն ձգտում, ինչի համար են պատրաստվում. այս բոլորից հետո ձեզ համար պարզ կը լինի, թե վորքան դուք հարազատ ու մոտ եք մի-  
մյանց:

Դուք, Վրաստանի ու Հայաստանի յերեխաներ, ինչպես և ձեր հայրերն ու մայրերը, բանվորներն ու բանվորուհիները, գեղջուկներն ու գեղջկուհիները, խորն ապրեցիք այն մեծ դժբախտությունը, վոր հասակ մեր համրապետությունների աշխատավորության:

Դուք այժմ շատ եք խոսել, զրել նրա մասին, նկարել նրան՝ և լավ կը լիներ, յեթե այդ բոլորը ժողովեր ու մի այսպիսի գիրք հրատարակեր թանգագին Լենինի հիշատակին:

Ձեզ մոտ, դպրոցներում ու մանկապարտեզներում կան պատի թերթեր, ամսաթերթեր, նկարներ, վոտանավորներ. հարկավոր ե ժողովել դրանցից քիչ թե շատ պետքականներն և ուղարկել Վրաստանի Լուսժողկոմի Գլ. Սոց. Դաստ. Գրական-Գեղարվեստական Բաժնին: Մենք կը վերցնենք բոլոր արժեքավորներն ու լավերը և մի գիրք կը հրատարակենք, վորպես զի դուք, յերեխաներ, կարողանաք շատ ու շատ կարգալ Լենինի մասին և իմանալ, թե ինչպես եր ապրում և աշխատում Լենինը և փորպեսզի ոռւս բանվորության յերեխաներն իմանան, վոր դուք ել նըրանց պես սիրում ու գնահատում եք Լենինին և դուք ել սովորում ու շատ եք աշխատում, վորպեսզի ինքներդ ել գառնաք այնպիսի մեծ, լավ, ոգտակար մարդ, ինչպիսին եր Լենինը:

Մարիա Ռախիելաշվիլի



### ԼԵՆԻՆԸ - ՅԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ

«Քիչ ե այն, վոր դուք պետք ե միացնեք ձեր բոլոր ու յժերը բանվորա-գյուղացիական իշխանությանը նեցուկ լինելու համար: Այդ դուք պետք ե անեք: Բայց այդ բավական չե: Դուք պետք ե կառուցեք կոմմունիստական հասարակություն»:

Լենինի Անկօնին

Ա. Թ Զ Ա. Յ Ա. Գ Ր Ա Կ Թ Յ Ա Կ Յ

6 կըտսեր խմբակների կոմիտեականների 1924 թ. հունիսի 29-ի նիստի:

Ժողովի որակարգս. լ. Լենինի անկյուն սարքելու մասին:

Վորոշեցին. սարքել Լենինի անկյունը դահլիճում: Ով կարող ե՝ պետք է բերի լրագրներից կտրած կտորներ, Լենինի պատկերները, գրքույկներ նրա մասին, սեփական պատմվածքներ, հիշողություններ, նկարներ:

Բնարել ամեն մի խմբակի ներկայացուցիչներից մի հանձնաժողով անկյունը սարքելու համար:

Նախագահ Գալյա Անդրիանովա  
Քարտուղար Միշա Մինին

ՃԱՌԻ ԻԼԻՉԻ ՀԻՋԱՏԱԿԻՆ

Թանգաղին ընկերներ, այս առաջին անգամն ե, վարմեր մեծ առաջնորդի մահից հետո մենք հավաքվել ենք այս դահլիճում: Թանգաղին ընկերներ, յես ձեզ կը պատմեմ Լենինի մասին: Լենինը շատ եր սիրում յերեխաններին: Ընկեր-յերեխաններ, Լենինը մինչև իր կյանքի վերջին ըուղեն աշխատում եր: Մենք ել, յերեխաններ, որինակ վերցնենք Լենինից և աշխատենք:

Յե. Ղյուքիմովա

## ՄՈՍԿՎԱ ՈՒՂԱՐԿՎԱԾ ՆԱՄԱԿ

28 հունվարի

Այս նամակը գրում եմ ձեզ, վոր դուք մանրամասն գրեք մեզ ընկ. Լենինի մասին: Մենք այստեղ ապրում ենք փոքրիկ քաղաքում: Մեզ հաղորդեցին Լենինի մահվան մասին հունվարի 23-ին, ցերեկվա ժամը 12-ին: Հունվարի 24-ին մենք սգահանդես կատարեցինք Լենինի մահվան առիթով Կարմիր հրապարակում. այնտեղ ճառեր խոսեցին նրա մասին, վոմանք մինչև անդամ լաց եյին լինում: 27-ին պատվեցինք Լենինի թաղումը: Յերեկոյան ժամը 6-ին Կարմիր հրապարակում կերոններ վառեցին, նվազում եր փողավոր յերաժշտախումբը և թնդանոթներ եյին գցում: Բայց մենք շատ կուզեյինք ընկ. Լենինի մասին իմանալ ամեն բան մանրամասնաբար: Դուք ապրում եք Մոսկվայում, ամեն բան գիտեք և, անշուշտ, տեսել եք նրան: Մենք ել շատ կուզեյինք տեսնել նրան, բայց մենք շատ հեռու յենք ապրում ձեզանից և շատ քիչ բան գիտենք ընկ. Լենինի մասին: Շատ լավ կը լիներ, վոր մեզ մանրամասն նկարագրեյիք ամեն բան:

Սպասում ենք պատասխանի:

Նինա Զավյալովա

## ՄԵՐՑՈԺԱ ՓԱԼԵՅԵՎԻ ՆԱՄԱԿ

Հունվարի 22-ին, այսինքն այն արյունակի կիրակվատարելեցին, յերբ ցար Նիկոլայ յերկրորդի հրամանով Պետրոգրադում գնտակահարեցին բանվորներին, յես լսեցի, վոր մեռել ե մեծ ուսուցիչը — Վլադիմիր Իլյչ Լենինը: Յես շատ խղճացի նրան. յես յերբեք չեմ տեսել նրան կենդանի ժամանակ, բայց նրա պատկերները շատ եմ տե-

սել: Յես նրա պատկերը կրում եյի կրծքիս վրա. Նրա մասին իմացել եյի Լյուից, քրոջս ամուսնուց, վոր նա լավ մարդ ե, փրկել ե բանվորներին բուրժուաներից: Յես շատ եմ սիրում նրան Մորաքույրս փող տվավ ինձ. այդ վողը պահեցի և այժմ ուղարկում եմ անխնամ յերեխաներին:

Սերյոժա Փալեյեվ

## ԼԵՆԻՆԸ ՎԵՐԱԴԱՌՆՈՒՄ Ե ՌՈՒՍՍՈՒԹՅԱՆ 1917 ԹՎԻՆ

Շվեյցարիայից մենք դուրս յեկանք առաջին խմբի հետ, վորի մեջ եյին ընկեր Լենինը, կրուպսկայան, Զինովիը, Սոկոլնիկովը, Ռադեկը և ուրիշներ: Գալիս եյինք վագոնով, վորտեղ լավ և ուրախ ժամանակ եյինք անցկացնում: Ճանապարհին կայարաններում դիմավորում եյին մեզ ընկերները դրոշակներով և յերաժշտությամբ: Ռուսական սահմանին վոր մոտեցանք, յես վախեցա, — տեսառուս ժամանակին. նրանք այնպես չեն, ինչպես Շվեյցարիայում վստիկանները: Մեզ ամենքիս խուզարկեցին և բաց թողին: Պետողադադար հասանք զիշերվա ժամը տասներկուսին: Մեզ դիմավորեցին դրոշակներով և յերաժշտությամբ: Ընկ. Լենինին բարձրացրին ձեռքերի վրա և տարան դեպի ամբողնը, ուր նրան վողջունում եյին ամենքը մինչև առավոտ:

Ռոբա Ռոգովսկի

## ԽԼԻՉՔ ԹԱՐԱՎՈՒՄ Ե

1917 թվի հոկտեմբերին, Հոկտեմբերյան հեղափոխությունից առաջ, ուշ գիշեր, յերբ յես ու քույրս նստած եյինք մենակ, զուռը սաստիկ ծեծեցին: Մայրիկն այն ժա-



Անդրեա Վերապարձը առևտութեանից 1917 թվին

մանակ կոռապերատիվումն եր (կարծեմ վարիչ եր), բակումը: Մենք վազեցինք դեպի գուռը և հարցրինք՝ «Ո՞վ ե»: Անձանոթ մի ձայն սկսեց խնդրել, վոր գուռը բաց անենք: Չեյինք բաց անում, բայց անձանոթը կարողացավ ապացուցել, թե ուզում է տեսնել մայրիկին, և մենք, չնայելով վոր մայրիկն արգելել եր, գուռը բաց արինք: Ներս մտավ մի ծերունի կապույտ ակնոցներով: Շատ սիրալիր ժպտալով՝ նստեց, իսկ մենք զարմացած նայում եյինք նրան: Մայրիկը, սեղանատանը ճրադ տեսնելով, վազելով յեկալ: Հանդիմանեց մեզ, հետո նայեց անձանոթ ծերունուն և հարցրեց նրա անունը: Ծերունին, այսինքն ընկ. Լենինը (յես հետօ իմացա, վոր նա յեր) զարմացած հարցրեց՝ «Միթե չեք ճանաչում»: Մայրիկը յերկար դիտում եր և, վերջապես, ճանաչեց: Հետո սկսեցին խոսել, իսկ մեզ մայրիկն ասաց, վոր գնանք քնենք: Յես համառեցի (հետաքրքրվում եյի, թե ով է այդ անձանոթ մարդը), բայց ծերունին նայեց ինձ և ասաց՝ «Գնա քնի: Տես աշքերդ փակվում են»: Ել ի՞նչ կարող եյի անել: Քանի վոր աշքերս փակվում եյին, կը նշանակե՝ պետք ե գնայի քնեյի:

Վավլովա

## ՄՈՍԿՎՅԻ ԽՈՐՉՅՈՒՄ

Յես դեռիս շատ փոքր եյի: Հինգ տարեկան եյի: Մայրս տարավ ինձ ցույցին, յերը սպանել եյին կարլ Լիբէնեխտին և Ռոզա Լյուքսեմբուրգին: Սոսկվայի Խորհրդում հանդիպեցինք ընկ. Լենինին և Սվերդլովին: Ընկեր Սվերդլովը ձեռքից բռնեց, մոտ տարավ ընկ. Լենինին և ասաց թե՝ սա Յեմելյանի աղջիկն է: Ընկ. Լենինը խտաց ինձ և ասաց, թե սա իսկական կոմմունիստունի կը դառնա: Հետո ելի բաներ ասաց և թողեց:

Մարիաննա Կիրսանովա



ԱՅ Մայուսի (Առաջ)

## «ԽՓԵԼ-ՓԱԽԶԵԼ»

Մի անգամ հայրիկս գնաց սանատորիա Վլադիմիր Բլիշի մոտ, ինձ ու յեղբորս ել գերգրեց իր հետ։ Յես ու Աղյան սկսեցինք խաղալ այգում, իսկ հայրիկը խոսում եր Վլադիմիր Իլիչի հետ զանազան գործերի մասին։ Հետո սկսեցինք «ԽՓԵԼ-ՓԱԽԶԵԼ» խաղալ Վլադիմիր Իլիչի հետ, և յես բռնեցի նրան թերց։ Նա թեր խլեց ձեռքիցս, սկսեց ծիծաղել ինձ վրա և ասաց։

«Չբռնեցիր, չե»։ Յես հարցրի. «Ի՞նչպես թե չբռնեցի»։ Բայց նա պատասխանեց.

«Դու բռնեցիր իմ բաճկոնը, և վոչ թե ինձ», ու վագեց։

Այդ ժամանակ Վլադիմիր Իլիչի ձեռքը վիրավորված եր, և նա բաճկոնի թեր չեր հագնում։ Այդպիսով յես ստիպված եյի նորից վագել նրա յետեկց, վոր բռնեմ։

Վերա Սվերդլովա

## ԿՐԵՄԼԻ ԲԱԿՈՒՄ

Այս 1921 թվին եր։ Յես, Շուրիկը, Վիտյան և Գոռտյան գնում եյինք մանկապարտեզ։ Ճանապարհին Կրեմլում հանդիպեցինք Լենինին։ Յես հարցրի Շուրիկին՝ «Այս լենինն ե, չե»։ Այն ժամանակ Վիտյան ասաց՝ «Յեկեք մոտենանք»։

Վլադիմիր Իլիչը կանգնած եր Ժողկոմիորհի դռան մոտ, ձեռքերը զրպանում։ այդ ժամանակ նրան լուսանրկարում եյին։ Մենք չեյինք վստահանում մոտենալ միանգամից, վախենում եյինք խանգարել, բայց յերբ Վլադի-

միը իլիչին լուսանկարեցին, մենք մոտ գնացինք։ Նա հարցը մեզ. «Ուր եք գնում, յերեխայք»։ Մենք ասացինք՝ «Մանկապարտեղ»։ Նա հարցը հեռաւ և վարտեղ եմեր մանկապարտեղը։

Իզոր Պետերան

## ՄԱԿԱՊԱՐՏԵՂՈՒՄ

Յես գնում եյի մանկապարտեղ։ Սինտեղ շատ ընկերներ ունեյի։ Մի անգամ արդեն պատրաստվում էլինք տուն գնալու, յերբ ընկերներիցս մեկն ասաց, թե մի ինչ գոր մարդ ե յեկել։

Մենք հարցը մեր դաստիարակչունուն՝ ով ե այդ։ Նա ասաց մեզ, թե այդ վլաղիմիր իլիչ Լենինն ե յեկել։ Բարեկելով նրան, սկսեցինք պատմել, թե ինչ ենք անում մանկապարտեղում։ Մեզ մոտ մի քիչ մնալուց հետո նա ասաց մեզ.

— Յերեխայք, պետք ե գնալ աշխատելու։

Յես, Շուրիկն ու Վիայան ճանապարհ զրինք նրան մինչև կրեմլ։

Ճանապարհին նա դարձյալ շարունակ հարցուվորձ եր անում մեզ մանկապարտեղի, մեր խաղերի և պարագլունքների մասին։

Իզոր Պետերան

## ՏՈՒԾԱԽ ԺՈՂԿՈՄԽՈՐՀՈՒՄ

1922 թվին Ժողկոմխորհում տոնածառ եր սարքած կրեմլում ազրող յերեխաների համար։ Յես ել պիտի գնայի։ Բոլոր յերեխաները վոր հագաքվեցին, վարժուհին ասաց մեզ, թե այս բոպեյին կը գա մեզ մոտ վլաղիմիր

իլիչ Լենինը։ Մենք ուրախացանք և սկսեցինք անհամբեր սպասել նրան։ Շուտով դուրս յեկավ մեզ մոտ վլաղիմիր իլիչը և սկսեց ինչ-վոր բաներ ասել մեզ, միտու չե ինչ բայց ուրախ ծիծաղում եր խոսելիս, և մենք ել ուրախանում եյինք։ Հետո մենք ամենքս շուրջպար բռնեցինք և սկրսեցինք յերգել տոնածառի յերգը։ Լենինը նույնպես շուրջպար եր բռնել մեզ հետ։ Մենք ամենքս ուզում եյինք նրա կոփքին լինել, այն ժամանակ հերթ զրինք և ամենքս միքանի բոպե պտտվում եյինք առնածառի շուրջը նրա ձեռքից բռնած։ Նա ուրախ ծիծաղում եր, և մենք ամենքս ել ծիծաղում եյինք և շատ ուրախ եյինք։ Հետո յես տեսա նրան գարձյալ մի քանի անգամ կրեմլի բակում։ Մի անգամ ել յես գնում եյի հայրեկիս հետ և հանդիպեցի նրան։ Նա բարեկեց հայրեկիս և հարցը ցա՝ «Իսկ ուս ով ե»։ Հայրիկս ասաց՝ «Սա իմ աղջիկն ե»։ Իսկ Լենինը հարցը ցա՝ «Կոմմունիստուհի յի»։ Յեկ ծիծաղեց։ Յեկ վերջին անգամ յես նրան տեսա գագաղի մեջ Միությունների Տանը։ Նա այլևս չեր ծիծաղում, այլ պառկած եր փակ աչքերով, և յես շատ տխրեցի. յես իմացա, վոր նա այլևս չի ժպտա։ Յես հաղիվ եյի զսպում արտասուբներս, իսկ շատ յերեխաներ լալիս եյին։

Դալյա Անդրիանովա

## ՅԵՐԵ ԳՆՈՒՄ ԵՅԻՆՔ ԳԵՏՆԱԽՆՉՈՐ ԲԵՐԵԼՈՒ

1921 թվին յես ու մայրս զետնախնձոր բերելու համար գնում եյինք Գորկի գյուղը, ուր առաջին անգամ տեսա վ. ի. Լենինին։ Մենք գնում եյինք սայլով մի գյուղացու հետ։ Գետի մոտով անցնելիս դյուզացին ցույց տվակ մեզ ձուկ վորսացողների, վորոնց մեջ նստած եր ընկ-

Լենինը: Նա հագած եր իր սև պիջակը և կեղին։ Նա ել եր ձուկ՝ վորսում, ինչպես և նրան շրջապատող բոլոր գյուղացիները։ Յերկրորդ անգամ յես տեսա նրան Կարմիր հրապարակում ճառ ասելիս։ Իսկ յերրորդ անգամ տեսա դագաղում պառկած Միությունների Տան Սյունազարդ դահլիճում։

Ի՞նչքան ցավալի յե, վոր մեր թանգարին պարագլուխը մեռավ. բայց նրա գործը կենդանի յե. մենք կըշարունակենք այդ գործը և ավելի կը սեղմենք Ռ. Կ. Կ. շարքերը։

Ա. Դմիտրիյեվ:

## ՍՎԵՐԴԼՈՎՑԱՆ ԴԱՀԼԻՃՈՒՄ

Յես բնակվում եյի Կրեմլում, Զուդովի մենաստանում։ Մի անգամ գնացի Յա. Մ. Սվերդլովի անվան դահլիճը։ Այդ դահլիճը գտնվում եր Կրեմլում, Համառուսական կենտրոնական Գործադիր Կոմիտեյի շենքում։ Յերբ գնացի այնտեղ, դռան մոտ կային շատ յերեխաներ և հասուն մարդիկ։ Զարմացա, թե ինչու այսոր այդքան շատ ժողովուրդ ե հավաքվել։ Ինձ ասացին, թե այսոր այստեղ ճառ է խոսելու Վ. Ի. Լենինը։ Ուրախացա, վորովհետև Վլադիմիր Իլիչին գժվար եր տեսնել, և յես պարծենում եյի, վոր կը տեսնեմ նրան։ Յես տարգել եյի խոսակցությամբ և չտեսա, թե ինչպես մոտեցել եր մեզ Վլադիմիր Իլիչը։ Յես յերկար ժամանակ յետ չեյի նայում, մինչեւ վոր չասացին, Վլադիմիր Իլիչը հարցրեց մեզ. «Յերեխայք, ինչու յեք կանգնել այստեղ, կը մըսեք»։ Պատասխանեցինք, թե մեզ չեն թողնում։ Վլադիմիր Իլիչն ասաց. «Յեկեք, յես ձեզ կը պահեմ վերարկուիս տակ», ու ծիծաղեց։ Մենք հասկացանք, վոր նա կատակ ե անում, և նույնպես ծի-



142/3947  
387/1  
65  
142/3947

Վ. Բ. Լենինը յեվ Յ. Ա Խուզակայան յերեխանց հետ  
ծաղեցինք։ Նա ուզում եր ելի ինչ-վոր ասել, բայց նրան կանչեցին, և նա գնաց։ Բայց ինձ այսուամենայնիվ աշողվեց մանել դահլիճ և լսել Վլադիմիր Իլիչ Լենինի ճառը։

Գ. Պրոկոֆիեվ

## ԻԼԻՉԸ ՅԵՎ ԲԱՆՎՈՐՆԵՐԸ

Այս սրանից յերկու տարի առաջ եր։ Յես գնացի մայրիկի մոտ, նա աշխատում եր Դփրցովայա փողոցում Կրեմլում ուրիշ բանվորների հետ։ Գարուն եր, փողոցում տաք

եր, գարնանային արել արագ հալում եր ձյունը։ Բանվորները մաքրում եյին ճանապարհ։ Անցավ մի քանի ժամանակ, բանվորները նստեցին հանգստանալու և սկսեցին զրոյց անել իրար հետ։ Հանկարծ բանվորներից մեկն ասաց. «Տեսէք, լենինը գալիս ե»։ Յես վոշ մի անդամ չեի տեսել այդ մարդուն, բայց շատ եյի լսել նրա մասին և յերեակայում եյի, թե խիստ լուրջ մարդ և Ռւ Բնչ, յերբ բանվորներին մոռեցավ, բոլոր բանվորները մեկ մարդու պես բարե տվին. «Բարե ձեզ, Վլադիմիր Իլիչ»։ Նա ժպատաց, բարեց ու, մի քիչ կանգնելով, սկսեց խոսել բանվորների հետ։ Այսուեղ բանվորներն սկսեցին թամբաքու ծխել։ Վլադիմիր Իլիչը նույնպիսի հանգիստ քայլերով ճանապարհ շարունակեց։ Բանվորները զրանից հետո յերկար ժամանակ խոսում եյին իրենց պարագլիխ մասին. «Այս, աշխարհիս յերեսին քիչ կան այդպիսի մարդիկ»։ Այս առաջին հանդիպումը Իլիչի հետ յերկար ժամանակ, մինչև իր կյանքի վերջը կը մնա հիշողությանս մեջ։

Սոլովիեվ.

## ԻԼԻՉԸ ՋԱԲԱԹՆՈՐՅԱԿՈՒՄ

Մի գեպք ել պատմեցին ինձ Իլիչի մասին, թե ինչպես նա աշխատում եր մայիսի մեկին։ Բանվորները գերաններ եյին կրում։ Մի քնչ-վոր բանվոր Իլիչի հետ մի շատ մեծ ու ծանր գերան եր բարձրացնում։ Իլիչը, յերեի, վատ եր բանել գերանը և ձեռից բաց թողեց։ Այս ժամանակ նրա հետ գերանը բարձրացնող բանվորը հայտնեց նրան.

«Դե, ընկեր, թե վեր ես քաշում, կարգին վեր քաշի»։ Շփոթված Իլիչն ասաց, թե վատ եր բանել. «Սպասիր, ընկեր»։

Հետո, յերբ բանվորին ասացին, թե այդ նա լենինին եր նկատողություն արել, բանվորը գլուխը քորեց և կառկարմիր կարեց խեցգետնի պես, — անշուշտ ցավում եր իր ասած խոսքերի համար։

Սոլովիեվ

## ԻԼԻՉԻ ԲՆԱԿԱՐԱՆԸ

Յես բնակվում եյի կրեմլում Վլադիմիր Իլիչի հետ միևնույն շենքում։ Յես շատ եյի ուղում տեսնել նրան իրեն և իմանալ, թե ինչպես ե ապրում նա։ Յես յերեակայում եյի Վլադիմիր Իլիչի բնակարանը բաղկացած բազմաթիվ սենյակներից թանգարին կահավորանքով։

Բայց հետո յես իմացա հայրիկից, վոր Վլադիմիր Իլիչը ապրում ե շատ, շատ հասարակ։ Ահա թե ինչպես եր այդ։ Հայրիկս մոնայոր ե և ելեքտրականություն ե անցկացնում։ Ահա մի անգամ նա գալիս ե տուն և ասում, թե բանել ե Վլադիմիր Իլիչի տանը։ Յես ու յեղբայրս սկսեցինք խնդրել հայրիկին, վոր պատմի մեզ այդ մասին։ Հայրիկն ել սկսեց պատմել. «Բանում եյի Վլադիմիր Իլիչի տանը, զանգակ եյի անցկացնում սենյակից։ Հարկավոր յեղավ մի աթոռակը բայց չկարողացա վերցնել, վորովհետեւ ձեռքիս գործիքներ կային։ Նույն այդ սենյակում կանգնած եր Վլադիմիր Իլիչը և խօսում եր հեռախոսով։ Յերբ վերջացրեց ու աեսավ, վոր յես դժվար գրության մեջ եմ, ոգնեց ինձ, գուռը բաց արագ և մի աթոռակ բերեց տվավ»։ «Իսկ ի՞նչ տեսակ ե Վլադիմիր Իլիչի բնակարանը», հարցրի յես հայրիկին. «Բնակարանը շատ հասարակ ե, բաղկացած ե չորս սենյակից, կահավորանքն ել հասարակ ե»։ Հետագայում յես տեսա այդ կահա-

Վորանքը, յերբ մաքրում ելին. Նա բաղկացած եր սեղան-ներից, հյուսած աթոռներից և կաշեծածկ հին բաղկաթոռ-ներից:

Յես տեսա նույնպես վլադիմիր Իլիչի ամանեղենը, վոր հայրիկը բերում եր կոծկելու; Շատ անգամ ծիծաղս գալիս եր, վոր Վլադիմիր Իլիչը չի կարողանում իր հա-մար նոր ամանեղեն գնել: Ահա թե ինչպես պարզ եր ապ-րում մեր պարագլուխ վլադիմիր Իլիչը:

Կորգանովա Ա.

## ԽՈՂԻՆԿՈՒՄ

Յես առաջին անգամ հանդիպեցի Իլիչին 1920 թվին: Մայիսի մեկի պարզ առավոտ եր: Հորս հետ ման ելի գա-լի Խողինկում և, ըստե առ ըստե բարձրացնելով գլու-խըս, նայում ելի դեպի վեր սլացող սավառնակներին: Դաշտում շատ ժողովուրդ եր ման գալի: Բեռնակիր և մարդատար ավտոմոբիլները սուրում ելին ամբոխի մեջ, թնդացնելով ողն իրենց բազմաձայն շշակներով: Սկզբում յես ուշադրություն չելի դարձնում, վոր ավտոմոբիլների վրա, վորոնք սուրում ելին կողքովս, տեղափորված ելին լուսանկարչական գործիքներ: Զարմանում ելի, վոր նրանք խելագարի պես թռչում ելին մերթ այս, մերթ այն կողմը: Մինչ յես, հայրիկիս յետեից քայլելով, դիտում ելի, չը նկատեցի, թե ինչպես մոտեցանք մի փայտաշեն բուրգի, վորի մոտ հայրս հանդիպեց մի ծանոթի: Այս ծանոթի հետ մենք բարձրացանք բուրգը: Յես բարձրացա բուրու-վին վեր և սկսեցի նայել ամբոխին: Ավտոմոբիլները շա-րունակում ելին սուրալ դաշտում, մի քանիսը կանգ ելին առնում մի քանի վարկյան և նորից առաջ վազում, կար-

ծես մեկի յետեից ընկած: Հետաքրքրությունս աճում եր և յես ուզում ելի հարցնել հայրիկիս, թե ինչու նրանք այդպես անդադար սուրում են Խողինկում: Այդ միջոցին նկատեցի, վոր բոլոր ավտոմոբիլներն արշավում ելին զա-նազան կողմերից դեպի բուրգը: Ինձ այս խիստ հետա-քրքրեց: Այս, մտածում ելի յես, զարմանալի յե, վոր ավ-տոմոբիլները կանգ առան բուրգի մոտ: Յես յետ նայեցի և ուզում ելի հարցնել հորս այդ մասին: Այդ միջոցին նը-կատեցի մի անձանոթ մարզու, վորը խոսում եր հայրիկիս հետ: Նրանց շուրջը հետզհետե սկսեցին հավաքվել ընկեր-ները: Նրանք խոսում ելին և բարձրածայն ծիծաղում: Մի ինչ-վոր հաստ մարդ ինչ-վոր ծիծաղելի բան եր պատ-մում, և ամենքը ծիծաղից թուլանում ելին ու խփում նրա ուսին իբրև հավանության նշան: Իմ ուշադրությունը կենտրոնացավ անձանոթի վրա, վորի հետ, չեմ իմանում ինչու, ուզում ելի խոսել: Դա միջահասակ մի մարդ եր շատ համակրելի զեմքով: Ամենաուրույնը նրա զեմքի վը-րա աչքերն ելին, վոր նա շարունակ կկոցում եր: Շուտով խումբը ցըվեց: Մնաց անձանոթը, վորը շարունակում եր խոսել հայրիկիս հետ: Հետո մոտեցավ պատուհանին, վորը բացված եր ամբողջ պատի յերկարությամբ, և սկսեց նա-յել ժողովրդին: Աչքս չելի հեռացնում նրանից: Անձանո-թը յերեկի տեսավ, վոր յես նայում եմ իրեն, և ինձ հա-մար անսպասելի կերպով մոտեցավ, ժպտաց ու հարցրեց: «Մա ձեր ճուտի՞կն ե»: Յեզ առանց պատասխանին սպա-սելու, դիմեց ինձ. «Ի՞նչ ես աչքերդ չոել»: Յես շփոթ-վեցի: Անձանոթը ծիծաղեց և ասաց. «Յեկ ինձ մոտ հայ-րիկիդ հետ, կը խաղանք»: Յես սրտապնդվեցի. «Իսկ դուք վորածեղ եք ապրում»: Անձանոթը նորից ծիծաղեց և ա-սաց. «Հայրիկդ կը բերի քեզ, նա գիտե»: Տուն դառնալիս հարցը հայրիկիս՝ ով եր այդ անձանոթը, և ինչքան զար-

մացա, յերբ իմացա, վոր դա Լենինն եր: Հետո հարցը, թե ինչու Խոդինկում սուբում եյին ավտոմոբիլները, հայրիկս պատասխանեց, թե Լենինին ուզում եյին լուսանկարել, իսկ նա թաքնվեց նրանցից: Յես ելի հաճախ հանդիպում եյի Լենինին, և նա միշտ նոր ու նոր խաղեր եր ցույց տալիս ինձ: Այժմ ընկեր Լենինն այլևս կենդանի չե:

Ա. Սմիրնովա

## ՈՎ ԳՏԱՎ ԻՄ ԶԵՌՆՈՅԸ

Վլադիմիր Իլիչին յես տեսա Կրեմլում մի խիստ սառնամանիք որ: Նա անցնում եր Կրեմլով, մի կնոջ հետ խոսելով: Նրա դեմքը ցրտից կապտել եր, իսկ ոձիքը բարձրացրած եր: Սառնամանիքը շատ խիստ եր և Վլադիմիր Իլիչը մրսում եր, վորովհետեւ մուշտակը շատ ել տաք չեր: Յերբ նայեցի նրան, նրա գեմքը ծանոթ թվաց ինձ, կարծես ամեն որ տեսել եյի: Բայց վոչ մի կերպ չեյի կարողանում հիշել, թե ով կարող եր լինել դա: Նրան համար արդյոք, վոր յես չափաղանց ուշադիր եյի դիտում նրան, թե մի ուրիշ պատճառով,—նա նայեց ինձ և ժըստաց: Յես շարունակեցի ճամբաս ու մտածում եյի, թե ով կարող եր լինել, բայց մեկ ել հանկարծ յետելից լսեցի նրա ձայնը. «Աղջիկս, այս դժւ յես կորցրել ձեռնոցդ»: Յես դարձա և տեսնեմ նա կանդնած և ձեռնոցս ձեռքին բռնած: Շուտով մոտեցա և առա ձեռնոցս: «Վլադիմիր Իլիչ, ինչու յետ մնացիք», ասաց նրա հետ գնացող կինը:

«Վլադիմիր Իլիչ», կրկնում ելի յես: «Վլադիմիր Իլիչ Լենին»—յեկավ լեզվիս ծայրին և հանկարծ այնպիսի մի հաճույք զգացի, վոր Վլադիմիր Իլիչը ժպտաց ինձ և ձեռքով շոշափեց ձեռնոցս: Ձեռնոցս հազա և ձեռքս կոխեցի մուշտակիս տակ:

Փրում կինա

## ԻՆՉ ԳԻՏԵՄ ՅԵՍ ՊԼԱԴԻՄԻՐԻ ԻԼԻՉԻ ՄԱՍԻՆ

Նա գործում եր դեռ ևս ցարի ժամանակ: Նա թաքընվում եր խոտի մեջ, նկուզներում հավաքում եր բանվորներին: Ասում եր. «Վոչ թե հաց պիտի ինդրեք ցարից, այլ զենք պիտի առնեք և յենեք ցարի դեմ»:

Բանվորները հասկացան, վոր իրենք պետք ե ույժերը հավաքեն և գլորեն բուրժուաներին: Յեվ Հոկտեմբերյան հեղափոխության ժամանակ նրանք քշեցին բուրժուաներին ու հիմնեցին Խորհրդային իշխանություն:

Վ. Կարսով

## ՊԼԱԴԻՄԻՐԻ ԻԼԻՉԻ ՃԵՌԸ

Յես լսեցի ընկ. Լենինի ճառը Պետրոգրադում 1918 թվին: Յես յոթը տարեկան եյի, սակայն ընկ Լենինի ճառն առմիշտ մնացել և հիշողությանս մեջ: Յես անցնում եյի Կամեննոստրովսկի պլոսպեկտով, յերբ հանկարծ փողոցներից մեկի անկյունում տեսա մի ահազին ամբոխ: Յերբ հարցը ինչ կա այնտեղ, ասացին, թե այնտեղ խոսում երնկ Լենինը: Սկսեցի ամբոխի միջից ճանապարհ բաց անել ինձ համար դեպի փողոցի անկյունը, վորի ժամանակ մի ինչ-վոր մարդ ոգնեց ինձ: Յերբ հասա անկյունը, տեսա, վոր մոտակա տան պատշամբում կանգնած ե ընկ. Լենինը: Վլադիմիր Իլիչը խոսում եր տաքացած: Ամբոխի մեջ կարելի յեր լսել ճանձի բզզոցը. վոչ վոք չեր շարժվում, ամենքը կանգնած եյին կարծես բարացած. յես ինքս ել մի տեսակ արձանացել եյի: Ընկ. Լենինը խոսում եր բուրժուագիտիցի դեմ և ապացուցում, թե միակ սիջոցը դեպի համաշխարհային հեղափոխություն՝ բանվորների և գյուղա-

ցիների կապն և Ընկ. Լենինը վերջացրեց։ Ահազին ամբոխը լուռ եր, և հանկարծ ցնծագին ծափերի և աղաղակների մի ահազին վորոտ թնդաց։ Ընկ. Լենինը գլուխ տվավ և չքացավ, իսկ ամբոխը սկսեց ցրվել։ Դա առաջին խթանն եր իմ մտքերի հետադա զարգացման համար։

Վ. Դրոզդով

## ԻՆՉ ԳԻՏԵՄ ՅԵՍ ԼԵՆԻՆԻ ՄԱՍԻՆ ՀՈՐՍ ՊԱՏՄԱԾԻՑ

Հայրս ճանաչում եր Լենինին վաղուց, յերբ յերկուսն ել գտնվում եյին սոցիալ-դեմոկրատական կուսակցության մեջ։ Ասում եր, թե Վլադիմիր Իլիչը միշտ շատ պարզ մարդ և յեղել։ Հայրս այդ ժամանակի մասին քիչ ե պատմել, և յես հիշում եմ նրա պատմածն արդեն վերջին ժամանակի մասին։

1921 թվին Վլադիմիր Իլիչը հրավիրել եր հորս իր մոտ։ Յերբ հայրս գնացել եր և Նագեժդա կոնստանտինովնան սկսել եր-թեյ լցնել, հայրս տեսել եր, վոր նրանց սեղանի վրա կար հեշտայեռ, մի կտոր սև հաց ու մի կտոր պանիր։ Կարագ ամենակին չկար։ Այսպես եր ապրում մեր պարագլուխը։

Վ. Մարտինս

## ՀԻԾՈՂՈՒԹՅՈՒՆ ԼԵՆԻՆԻ ՄԱՍԻՆ ՀՈՐԵՂԲՈՐՍ ՊԱՏՄԱԾԻՑ

Մի գեղեցիկ որ հորեղբայրս, վոր շոֆեր ե, Կրեմլ եր գնացել ավառոմբիլով։ Նրա ավտոմոբիլը խրվել եր ցեխի մեջ, և նա չեր կարողացել առանց կողմանակի ողնության

դուրս հանել։ Բայց, գԺբախտաբար, մոտիկ վոչ վոք չկար։ Ահա մի ինչ-վոր տղամարդ ե գալիս հնացած վերարկուով։ Հորեղբայրս դիմում է նրան և խնդրում, վոր ոգնի։ Տղամարդը պատրաստակամությամբ սկսում է հորեղբորս հետ ավտոմոբիլի անիվը դուրս քաշել ցեխից։ Հորեղբայրս նըստում է և շարունակում իր ճամբան։ Մի քանի ըռպղեցից հետո հորեղբայրս իմանում է, վոր դա վոչ թե հասարակ բանվոր և յեղել, այլ ժողովրդական կոմիսարների Խորհրդի նախագահը։ Հորեղբայրս հաճախ պատմում եր այս դեպքի մասին, սիրով հիշելով Լենինին։

Վ. Զանոգինա

## ՀԱՆԴԻՊՈՒՄՆ ԼԵՆԻՆԻ ՀԵՏ

1.

Մի անգամ դուրս յեկա տնից և տեսա, վոր Վլադիմիր Իլիչն անցնում է ընկերոջ հետ։ Յես առաջ անցա, չիմանալով, վոր դա Վլադիմիր Իլիչն ե։ Հետո հարցըի ընկերոջս՝ «Այդ, կարծեմ, Լենինն ե»։ Ընկերս ասաց՝ «Այս, այդ Վլադիմիր Իլիչն ե»։ Իսկ նա լսել եր, թե ինչպես յես ու ընկերս խոսում եյինք և, կանչելով մեզ իր մոտ, հարցըեց մեր անունն ու ազգանունը։ Մենք հայտնեցինք մեր ազգանունը, վազեցինք յերեխաների յետեկից և սկսեցինք խաղալ։ Այդ միջոցին արձանի մոտ զբոնում եր Վլադիմիր Իլիչը։ Նա մոտեցավ և սկսեց նայել, թե ինչպես եյինք խաղում։ Հետո մոտեցավ մի ավտոմոբիլ, Վլադիմիր Իլիչը նստեց և գնաց։ Դրանից հետո յես այլևս չտեսա նրան։ Իսկ յերբ տեսա դադաղի մեջ, հիշեցի Վլադիմիր Իլիչին, թե ինչպես մոտեցավ մեզ և նայում եր մեր խաղին։

Վ. Ստուդենեցկի

Դեպք յեղավ, վոր յես առաջին անգամ տեսա ընկ. Լենինին: Այս սրանից մոտ յերեք տարի առաջ եր: Առավոտյան թեյ խմելուց հետո գնացի ժողկոմիորհ՝ մայրիկիս հանդիպելու: Այստեղ դռնից դուրս գալիս տեսա Վլագիմիր Իլիչ Լենինին իր կնոջ հետ: Յես նրան ճանաչեցի պատկերից:

Նրան տեսնելուցս յերեք որ հետո յես զբոսնում եյի Կրեմլում բլրի տակ՝ Տայնինյան պարտեզում: Սահում եյի սահնակով բլրից ներքև: Տեսնեմ՝ յերկու տղամարդ: Բղավում եմ՝ «Ե՛յ, գենը, կը ճխլեմ»: Մոտեցա և ինչ եմ տեսնում. աչքիս առջև կանգնած ե ընկ. Լենինը և իր կուրյերը: Նա յետ քաշվեց և ասաց՝ «Խնդրեմ, անցեք»: Յես ամաչեցի նրանից:

Վ. Սիմոն

Այս բանը Հոկտեմբերյան հեղափոխությունից մի քիչ հետո յեր: Յես այն ժամանակ 11 տարեկան եյի: Մեզ մոտ, Սոկոնիկում, ռայկոմը ուրբաթ որերը հասարակական միտինգներ եր սարքում բանվորների համար: Այդ ուրբաթ որերից մեկում հայրս (այժմ նրան սպանել են սպիտակ-գվարդիականները) գալիս և ռայկոմից և հաղորդում, թե միտինգին խոսելու յե Լենինը: Նկարագրել իմ մանկական, բայց արդեն գիտակցական ուրախությունը չեմ կարող: Հիշում եմ միայն, վոր անդադար շտապեցնում եյի հորս միասին գնալու:

Հասանք վորոշյալ ժամանակից մի ժամ առաջ: Դեռ սա շատ մարդ չկար: Հայրս նստեցրեց ինձ քեմի վրա, իսկ ինքը գնաց ժողոված մարդկանց շարքերը: Մի քանի ժա-

ամնակից հետո մեր ույսնական յերկու ընկերների ուղեկցությամբ, վորոնց ազգանունները չեմ իշում, մտավ Իլիչը:

Առաջին իսկ հայացքից ճանաչեցի նրան: Ուզում եյի վեր կենալ, բարեկել, չկարողացաւ: Սիրոս սաստիկ խփում եր, կարծես մեխում եր ինձ աթոռին, իսկ աչքերս հառած եյին մնացել Իլիչի վրա: Տեսնելով, վոր հայրս մոտեցավ նրան, յես սիրտ առաւ: Վեր կացա բարեկցի: Լսեցի, թե ինչպես՝ Իլիչը խնդրեց, վոր թեյ տան իրեն: Ընկերներից մեկը գնաց և մի քանի բոպեյից հետո մի մեծ մատուցարանով 10 բաժակ թեյ բերեց, իսկ շաքարը մի փոքրիկ կտոր եր:

Հիշում եմ, վոր յես մի ինչ-վոր բան ասացի շաքարի այդ «մեծ» կտորի մասին: Իմ նկատողությունը ծիծաղ պատճառեց շրջապատօղներին և Իլիչին: Դրանից հետո յես արդեն բոլորովին հանդիսաւ կանգնած եյի Իլիչի կողքին: Սաստիկ ուզում եյի խոսել նրա հետ, բայց արդեն ուշ եր. նախագահը հայտնեց, թե միտինգը կարիլի յե սկսել:

Յես նստեցի մի կողմը: Իլիչն սկսեց խոսել: Յես ավելի հետեւում յի վոչ թե նրա ճառին, այլ շարժումներին, գեմքի արտահայտությանը:

Յերկրորդ անգամ Լենինին տեսա բոլորովին պատհական կերպով:

Այդ ռայկոմումն եր:

Յեկել եյի մորս մոտ: Նա աշխատում եր կուսակցական գրադարանում: Գրադարանում նստելուց և լրագրներ կարդալուց հետո, միջանցքով անցա բուֆետի սենյակը: Բուֆետում այն ժամանակ ամեն մի կուսակցականի տալիս եյին ձրիաբար մի կտոր հաց (յերբեմն կարգով կամ հասարակ խավարով) և թեյ: Յես գնացի այստեղ, վորպեսզի բաժին ստանամ մորս համար:

Բուֆետին վոր մոտեցա, տեսա, թե ինչպես դուռը բաց-

վեց, և սանդուկքից միջանցք մտավ Իլիչը։ Յես բարեկեցի։ Նա պատասխանեց զլիի շարժումով և անցավ սենյակը չեմ իմանում քարտուղարի մոտ, թե ագիտբաժինը։ Յես կանգնեցի պատի մոտ և սպասում եյի, թե յերբ դուրս կը գա։ Շուտով Իլիչը դուրս յեկավ մի ինչ-վոր ընկերոջ հետ, և յերկուսն ել արագ քայլերով դուրս գնացին ռայկոմից։

Յու. Հոգովսկի

## ԿԸՐՄԻՐ ՀԲԱՊԵՐԱԿՈՒՄ

Լենինին յես տեսա մի անգամ կարմիր հրապարակում։ Այդ ժամանակ պատերազմ եր Լենաստանի հետ։ Լենինը խոսում եր պատերազմի մասին։

Հիշում եմ, թե ինչպես հազարավոր ժողովուրդ սպասում եր նրան։ Մի կերպ մոտեցա ամբիոնին ուրիշների հետ։ Հասակավորների միջից յես համարյա թե վոչինչ չեյի տեսնում, բացի կապույտ յերկնքի մի կտորից գլխիս վերև։

Հանկարծ լսում են աղաղակներ. «Ի՞լիչը, Ի՞լիչը։ Բոավո Իլիչ։ Կեցցե ընկեր Իլիչը»։

Յես ամեն կերպ աշխատում եյի, վոր բարձրանամ մի գորևե բանի վրա։ Շուրջս վոչինչ չկար։ Ինձ բոթբթում եյին։ Մինչև անգամ լաց յեղա, վորովհետև շատ եյի ուղում տեսնել Լենինին։ Վերջապես, բոնեցի մի բանվորի ուսերից, վորս դրի նրա զրպանը և ձիու պես նստեցի ուսերին։ Սպասում եյի, թե բանվորն իսկույն դես կը շպըրտի ինձ և մի լավ ել կը տա վզակոթիս։ Բայց վորքան զարմացա, յերբ նա գուրգուրեց ինձ և ասաց, վոր պինդ բոնեմ վզից։ Այժմ յես յերկու գլուխ բարձր եյի ամենքից և տեսա վլագիմիր Իլիչին։ Նա գալիս եր գեպի ամբիոնը։ Բանվորները դժվարությամբ յետ-յետ եյին քաշվում, վոր

ձանապարհ տան։ Հիշում եմ, շատ զարմացա, վոր Լենինը զնում եր առանց պահապանների, հազիվ ճանապարհ բաց անելով իր համար ամբոխի միջից։ Յարին պահպանում եյին զինվորները և ժանդարմերը, հասարակ ժողովուրդը մոտ չեր թողնվում, իսկ Լենինն ամբոխի մեջ անցնում ե հանգիստ ժպտալով և աչքերը կկոցելով արելից։

Նա ամբիոն բարձրացավ։ Հազած եր մույգ գույնի (կարծեմ՝ սկ) կոստյում, շապիկ յետ ծալած ոձիքով և փողպատով, իսկ զլիին ծածկած եր կեպի։ Ամբիոն բար-



Լենինը ամբիոնի վրա

ձրանալով, զրպանից հանեց սպիտակ թաշկինակը և սրբեց ճակատն ու ճաղատ գլուխը։ Հիշում եմ, թե ինչպես արեի տակ պլազաց նրա ճաղատ գլուխը։ Զեմ հիշում, թե ինչ եր խոսում Լենինը։ Յես ավելի հետեւում եյի այն բանին, թե ինչպես եր խոսում նա։

Յերբեմն խոնարհվում եր ամբիոնից դեպի ցած, ձեռքերը մեկնում եր գեղի առաջ՝ թաշկինակը բռնած, և շուտ-շուտ սրբում եր ճակատը։ Հաճախ ժպտում եր։ Չեմ իմանում ինչու—փորձում եյի վորսալ նրա աչքերը, բայց չեր աջողվում։ Դիտեցի նրա ամբողջ գեմքը՝ քիթը, շրթունքները, փոքրիկ միրուքը, և ինձ թվաց, թե Լենինի գեմքը շատ հասարակ է։ Ու կարծես թե հիասթափվեցի։ Շատ եյի ուզում ինչ-վոր մի արտասովոր բան տեսնել, այն ինչ տեսա մի հասարակ մարդ։ Լենինի ճառը հաճախ ընդհատում եյին ծափեր և ինչ-վոր աղաղակներ։ Այդ բռպիներին յես ափելի եյի չուում աչքերս նրա վրա և նույնակես աղաղակում եյի։

Այն բանփոք, վորի ուսերին նստած եյի յես, ցած գրավ ինձ։ Ցած գալիս յես շարունակում եյի նայել Լենինին։

Տուն գնալիս յես շարունակ կրկնում եյի ինքս լինձ՝ «Լենին, Լենին, Լենին»…

Ցես կանգ եյի առնում Լենինի ամեն մի պատկերի առջև, վորոնք ցուցադրված եյին աների պատռաններում, և ուշադիր դիտում եյի նրա գեմքը։ Այստեղ արդեն տեսնում եյի բոլոր դիմագծները, և նրա գեմքն ինձ թվում եր արտասովոր։

Վ. Յանուշեպսկի

## ԱՎՏՈՄՈՅԻԼԻ ՄԵԶ ԼԵՆԻՆԻ ՀԵՏ

Լենինի հետ ունեցած հանդիպումներից յես հիշում եմ մեկը։ Այդ 1920 թվին եր։ Ցես հորս հետ Համառուսական

Արհեստակցական Միությունների կենտրոնական Խորհրդի ֆրակցիայի գանվակ նիստումն եյի. քննվում եր շատ լուրջ ինդիք, չեմ հիշում ինչի մասին։ Հրավիրված եր իլիչը։ Նիստը կես գիշերից ել անցավ. խոսեց իլիչը և նրանից հետո խոսեցին դարձյալ յերեք չորս հոգի։ Հետո իլիչը պատրաստվեց զնալու. հայրս մոտեցավ նրան և խնդրեց, վոր ինձ ել վերցնի իր հետ։ «Հաճությամբ կը վերցնեմ ինձ հետ վոքրիկ պրոֆեսիոնալիստին», պատասխանեց նա։ Մենք նստեցինք ավտոմոբիլ և զնացինք. յես ինձ անհարժար եյի զգում։ Սկզբում իլիչը լուսմ եր և նայում ինձ։ Բայց նեզորինի թարոնի մոտով անցնելիս հարցրեց. «Թու յեղել յես այս թարոնում»։ — ՛՛ չեմ յեղել, պատասխանեցի։ «Ցես ել չեմ յեղել», ասաց նա։ Այդ միջոցին անցնում եյինք Ախոտնի ոյազի մոտով։ Հեղափոխության տարեղարձի առնակատարության որից անցել եր վոչ ավելի քան յերկու ամիս, և Ախոտնի ոյազը հանդիսանում եր իբրև ցուցանիշ ֆուտուրիստների արվեստի, վորոնց թույլ եր տրված զարդարել քաղաքը։ «Հավանում ես», հարցրեց ինձ իլիչը։ «Վոչ, չեմ հավանում. իսկ դուք հավանո՞ւմ եք», իմ կողմից հարցրի յետ։ — «Վոչ, չեմ հավանում. ասենք, ձիշտն ասած, լավ չեմ հասկանում, թե ինչ է նկարված»։ Ամբողջ ձանապարհին մենք խոսակցում եյինք այսպես։ Տուն վոր հասանք, արգեն բարեկամ եյինք իրար։ Այսուհետեւ հաճախ, կիշի հետ նրա զբոսանքի ժամանուկ հանդիպելիս, յես չեյի վստահանում նրան բարեկ, կարծելով, թե մոռացած կը լինի ինձ։ Բայց նա, նկատելով ինձ, սովորաբար ասում եր. «Բարե, պրոֆեսիոնալիստ»։

Վ. Տոմակի

## ԻՆՉՊԵՍ ՅԵՍ ՅԵՂԱ ԼԵՆԻՆԻ ՄՈՏ

Յես ուղում եմ պատմել այն դեպքերից մեկը, թե ինչպես եր վերաբերվում ընկ. Լենինը դեպի մեզ, յերեխաներս: Այս բանը 1921 թվի գարնանն եր: Յես տասներկու տարեկան եյի: Պատահմամբ ընկել եյի Լուսժողկոմատում տեղի ունեցած ժողովը: Լուսժողկոմատն այն ժամանակ Կրիմակայա հրապարակումն եր, Ռոտոժենկայի անկյունում: Այդ ժողովում խոսեց ընկ. Լենինը: Ժողովից հետո ամենքն սկսեցին ցըվել, և ընկ. Լենինը նստեց իր համար պատրաստված ավտոմոբիլը մի քանի ընկերների հետ, վորոնց թվումն եր ընկ. Սաֆոնովան: Վորովհետև յես պետք ե գիշերեյի ընկ. Սաֆոնովայի մոտ Կրեմլում, ուստի ինձ ել ասացին, վոր նստեմ ավտոմոբիլ: Յես բարձրացա և կանգնեցի ավտոմոբիլի ձախ կողքին, վորովհետև նստելու տեղ այլևս չկար: Ընկ. Լենինը տեսավ, վոր յես կանգնած եմ, խոսեց ինձ հետ և առավ ինձ իր ծնկների վրա: Յերբ մեկն իջավ, ինձ նստեցրին նրա տեղը, և յես ավտոմոբիլի որորից քնեցի:

Կրեմլ վոր հասանք, ինձ զարթեցրին և տարան նազեթդա կոնստանտինովսայի մոտ, ուր ասլում եր և ընկ. Լենինը մի փոքրիկ բնակարանում: Յես քաղցած եյի, նազեթդա կոնստանտինովսան թեյ խմեցրեց ինձ, վորոնեց գտավ թանձրացըած կաթի պնակը և տվավ ինձ: Յեվ յես գնացի քնելու ընկ. Սաֆոնովայի մոտ:

Միշա Պավլով

## «ՄԵՐ ԻԼԻՇԲ»

— Վասյա, յեկ ինձ հետ գնանք անտառը փայտ բերելու, — ասաց ինձ հայրս:  
— Զե՞ վոր արդեն բերինք, — պատասխանեցի յես:

— Մեզ համար չենք բերելու, ընծա պիտի տանենք:

Շատ եյի ուղում իմանալ, թե ում համար պիտի տանեյինք, և յես գնացի հորս հետ: Թեթև վազքով վազում եր մեր Սավրասկան: Սառնամանիքը վառում եր այտերս և կծում ականջներս: Անտառում աշխատում եր տասը մարդ մեր գյուղացիներից: Արագ վայր եյին զցում սպիտակ կեչի ծառերը, սղոցում, կտրատում կոճղերը:

— Խելոք բան են մտածել, — խոսում եյին իրար մեջ գյուղացիները, — թե չե կը մրսի, դժվար կը գրի... մեր իլիչը... լենինը:

Շատ անգամ եյի լսել... լենին... լենին... Ո՞վ ենա: Ինչո՞ւ յեն գյուղացիք ուղում նրա համար փայտ տանել... Թող փայտ գնի, ելի, իր համար:

— Ապի, ով ե նա... լենինը, — հարցըի հորս, յերբ գյուղացիք նստեցին գերանների վրա հանգստանալու, և գոլորշին բարձրանում եր նրանցից սառնամանիքի մեջ:

— Դա, բալիկս, մեր մեծն ե, բանվորների և գյուղացիների բարեկամը, մեր ազատիչը: Հարցըու վերա իվանովնային դալրոցում: Նա մեզնից լավ կը պատմի ձեղ լենինի մասին: Իսկ մենք եգուց, ծեղին, փայտը կը տանենք, թե չե՞ նա կը սառի քարաշեն սենյակում:

— Բայց դու այսուամենայնիվ պատմիր մեզ, ապի, Մոսկվայից վոր վերադառնաս և փայտը տանես լենինի համար: Կը տեսնես, չե՞ նրան:

— Յես առանց այն ել տեսել եմ նրան, յերբ գնացել եյի համագումարին Մոսկվա: Նա խոսում եր այն մասին, թե վորքան թշնամիներ ենք ունեցել մենք և ինչպես ամենքին ել ջարդուփշուր ենք արել: Այնքան հասկանալի կերպով եր խոսում, վոր հիմա մենք վոչոքի առաջ վիզներս չենք ծոփ, խոսքից յետ չենք մնա, մեկին տասը պատասխան կը տանք:

Գյուղացիները հիշեցին, — նրանցից յերկումն ել ելին յեղել համագումարին, — թե ինչպես կեսինը ծիծաղեցը ել եր ժողովականներին: «Սիրում ե ծիծաղել», ասում ելին նրանք:

Յես այդ ժամանակ մտածում ելի ահա թե ինչ. — Յես այդ ժամանակ մտածում ելի ահա թե ինչ. — Պյուղացիները փայտը կը տանեն, իսկ յես ու վասյան պյուղացիները փայտը կը տանեն, իսկ յես ու վասյան պյուղացիները փայտը կը տանեն: Յես հենց այդպես ել գրեցի նրան յերեկոյան.

«Մեր գյուղում ամենքը ձեզ անվանում են «Մեր իլիչը»:

### ԽՆԴՐԱԳԻՐ ԻԼԻՉԻՆ

Այս բանը 1920 թվին եր կրեմլում: Այնտեղ ապրելով, յես հաճախում ելի Համառուսական կենտրոնական գործադրի կոմիտեյի և ժողովրդական կոմիտարների Խորհրդապետի կոմիտեյի և ժողովրդական կոմիտարների Խորհրդապետի անվան դպրոցը, վորը գտնվում եր կրեմլում: Ամառանքի անվան դպրոցը, վորը գտնվում եր կրեմլում: Ամառանքի անվան դպրոցը, վորը գտնվում եր կրեմլում: Այս նպաշատ ելինք ուզում ունենալ ֆուտբոլի գնտակ: Այս նպաշատ ելինք ուզում ունենալ ֆուտբոլի գնտակ: Այս նպաշատ ելինք ուզում ունենալ ֆուտբոլի գնտակ: Այս նպաշատ ել շատ գործեր ունի», և նույնիսկ ծիծաղում ելին մեզ վրա: Բայց բանից ինչ գուրս յեկավ. — յերկու որ հետո դպրոցական խորհրդի անունով յեկավ այն թուղթը, վորով իլիչից ինդրել ելինք գնտակ տալ մեզ: Այդ թղթի վրա վլադիմիր իլիչը, վորքան հիշում եմ, այսպիսի մակարդություն եր արել. «Հանրապետության Քաղաքական Վարչության խանութին: Ըստ հնարավորության պետք ե գոհացում տալ յերեխանց խորքին: Ժողկոմիորհի նախագահ Վ. Ռույանով (Լենին): Ամենքիս աշքերը վառվեցին, յերբ տեսանք Իլիչի ձեռքը. չե վոր ամենքըս սպասում ելինք անհամբեր, թե ինչ պատասխան կը կը: Զի կարելի նկարագրել այն ուրախությունը, վոր մենք, յերեխաներս, զգում ելինք այն բոպեյին: Հետեւյալ որը մեր պատվիրակությունը իլիչի մակարդությունը կը ըստ թուղթը ձեռքին գնաց հանր. Քաղ. Վարչության խանութը և բերեց ֆուտբոլի մի լավ կաշվի գնտակ:

Ճի դարձնի: Այնուամենայնիվ վճռեցինք նամակ գրել իլիչին: Բայց մվ պիտի գրեր: Տղերքը խնդրեցին, վոր յես գրեմ, վորովհետև յես ավագ դասարանումն եյի: Յես համաձայնեցի գրել, միայն տղերքը պետք ե թելագրեյին: Տասնհինգ բոպեյից հետո նամակը պատրաստ եր: Ությերեխաների ստորագրությամբ նամակը վճռեցինք ուղարկել Վլադիմիր իլիչին, խնդրելով, վոր Փուտաբոլի գնտակ տա դոլրոցին: Դասերից հետո դիմեցինք գեպի այն դուռը, վոր տանում եր գեպի իլիչի առանձնասենյակը: Մուտքի մոտ պահապան զինվոր եր կանգնած, վորը, ի հարկե, թույլ չտվակ մեզ մտնել առանձնասենյակ: Նամակը տվինք նըրան, վոր հանձնի Վլադիմիր իլիչին: Մենք միանգամայն մխալվել ելինք, կարծելով, թե իլիչը վոչ մի ուշադրություն չի դարձնի մեր նամակի վրա. վոմանք ասում ելին. «Միթե նա այդպիսի մանը գործերով կը զբաղվի. Նա առանց այն ել շատ գործեր ունի», և նույնիսկ ծիծաղում ելին մեզ վրա: Բայց բանից ինչ գուրս յեկավ. — յերկու որ հետո դպրոցական խորհրդի անունով յեկավ այն թուղթը, վորով իլիչից ինդրել ելինք գնտակ տալ մեզ: Այդ թղթի վրա վլադիմիր իլիչը, վորքան հիշում եմ, այսպիսի մակարդություն եր արել. «Հանրապետության Քաղաքական Վարչության խանութին: Ըստ հնարավորության պետք ե գոհացում տալ յերեխանց խորքին: Ժողկոմիորհի նախագահ Վ. Ռույանով (Լենին): Ամենքիս աշքերը վառվեցին, յերբ տեսանք Իլիչի ձեռքը. չե վոր ամենքըս սպասում ելինք անհամբեր, թե ինչ պատասխան կը կը: Զի կարելի նկարագրել այն ուրախությունը, վոր մենք, յերեխաներս, զգում ելինք այն բոպեյին: Հետեւյալ որը մեր պատվիրակությունը իլիչի մակարդությունը կը ըստ թուղթը ձեռքին գնաց հանր. Քաղ. Վարչության խանութը և բերեց ֆուտբոլի մի լավ կաշվի գնտակ:

Վ. Կ-ով

## ԼԵՆԻՆԸ ՄԻՏԻՆԳՈՒՄ

Այս այն ժամանակ եր, յերբ պրոլետարական հեղափոխության փոթորիկը ցնցել եր մեր ամբողջ Ռուսաստանը, յերբ բանվոր զանգվածները, մի գաղափարով միացած, միաձուլվել մի ամբողջություն եյին կազմել: Ամենքը գիտեյին, վոր կոփվը բուրժուազիայի հետ անխուսափելի յեւ Ամեն տեղ գումարվում եյին միտինգներ, ուր ծանրության կենտրոնը քաղաքացիական պատերազմի խնդիրն եր: Միտինգից մեկում, Պրոխորովի գործարանում, պետք ե խոսեր ընկ. Լենինը: Բանվորներն անհամբերությամբ սպասում եյին իրենց պարագլիմին, հուզվելով և շարունակ նայելով դռանը: Հանկարծ լսվեց. «Լենինն յեկավ»: Այս խոսքն իսկույն ազդեցություն ունեցավ բանվորների վրա. սկսվեցին յերկարատև վորոտալի ծափեր, ամենքը ձգտում եյին մոտենալ բեմին թանգագին ընկերոջը տեսնելու համար: Յեվ ահա բեմի վրա յերեաց իլիչը: Նորից ծափերի կարկուտ և ինտերնացիոնալի հանդիսավոր նվագ: Ու թվում եր, թե վոչինչ չպիտի կարողանար լուցնել տալ պրոխորովցիներին: Բայց իլիչը ձեռքով մի շարժում արագ—և ամեն ինչ լոեց: Նա խոսում եր պարզ, յուրաքանչյուր բանվորին հասկանալի կերպով: Նա կոչ եր անում նրանց կովելու բուրժուազիայի դեմ, վրեժ եր հրահրում դեպի պրոլետարիատի բոլոր թշնամիները: Նրա խոսքերը վոգեսրվում եյին ամենքին: Թվում եր, թե այդ յերեքնազարանոց ամբոխն իսկույնեթ կովի կը նետի, յետ շպրտելով անձնական կյանքը, կանանց, յերեխաներին:

Իլիչը վերջացրեց իր ճառը: Թնդաց յերաժշտությունը, և ամբոխն յերգեց ինտերնացիոնալը: Ժողովրդական յերգի հնչյունները ցնցում եյին ապակիները, թափանցում որտերը, լցնում ամբողջ եյությունը ուրախական, լավ

զգացումով: Վոչ մի մռայլ գեմք—ամենքն ուրախ եյին, վոր տեսան թանգագին իլիչին: Հետո հանդես յեկան մեր տղերքը: Բեմ թափվելով, մենք շրջապատեցինք իլիչին, հպարտանալով այն գիտակցությամբ, վոր նա մեզ հետ ե: Մեր աղջկերքից մեկը ճառ արտասանեց, վորի վերջում ասաց, թե մենք, յերիտասարդ պրոլետարներս, կը փոխարինենք ծերերին, հոգնած ընկերներին և կը պայքարենք կոմմունիզմի մեծ գաղափարի համար: Իլիչի գեմքը փայլեց ժպիտով: Նա գիտեր, վոր դրանք դատարկ խոսքեր չեյին, այլ այն իրականությունը, վոր պիտի լինի: Ճառից հետո տղերքն յերգեցին մի քանի հեղափոխական յերգեր: Իլիչը կանգնած եր մեր մեջ, փայփայում եր տղաներին և հարցուափորձ անում մեր կյանքի մասին: Միտինգի ժամանակ նա մեծ առաջնորդ եր, վոր տանում եր իր յետեկոց աշխատավորների բոլոր զանգվածները, իսկ այստեղ հայր եր մեզ համար:

Բայց ահա իլիչը պատրաստվում է գնալու: Ամենքը վերջին անգամ յերգեցին ինտերնացիոնալը ավելի մեծ վոգեսրվությամբ, ավելի մեծ հանդիսավորությամբ: Իլիչը մնաք բարյավ ասաց ու գնաց:

Տիկումիրովա

## ՄԱՅՆ Ի.

### ՎԼԱԴԻՄԻՐ ԻԼԻՉԻ ԹԱՂՈՒՄԸ

Յես տեսա, թե ինչպես Վլադիմիր Իլիչի դադաղն իջեցնում եյին գերեզման։ Խիստ շատ ժողովուրդ կար։ Եյին լինում կանայք և մինչև անգամ տղամարդկան ցից վոմանք։ Յերբ նրան գերեզման եյին իջեցնում, յերկար ժամանակ հնչում եյին շշակները և վորոտում թնդանոթները։

Ա. Պետրով

### ԻՆՉՊԵՍ ԻՄԱՑԱՆՔ ԼԵՆԻՆԻ ՄԱՀԸ

1.

Մի անգամ յերեկոյան մենք հայրիկի հետ նստած եյինք տանը, և հանկարծ գալիս ե մորաքույրս և ասում, թե Լենինը մեռել ե։ Այնպես ցավեցինք, վոր յես քիչ մնաց լինելի։ Մորաքույրս ասաց, վոր նա մեռել ե յերեկոյան ժամը 6-ին 50 րոպեյին։ Նա յերեխանց հետ շատ քաղցր եր վարդում և ծննդյան տոնին տոնածառ եր սարքել նրանց համար, և այժմ Գորկիում դրված ե այդ տոնածառը։

Սիմոնովս

2.

Այդ տիսուր նորությունն յես իմացա հունվարի 22-ի ժողովից հետո։ Այդ նորությունն ինձ վրա սաստիկ ազգեց։ Յես այդ իմացա վոչ թե տանը, այլ Տուկայի մոտ։ Ամբողջ յերեկոն, վոր յես անցկացրի այնտեղ, սիրո չկար խոսելու, ման եյինք գալիս միջանցքում ստվերների պես և ականջ դնում մեծերի խոսակցություններին։ Տուն վոր գնում եյի, արդեն բավական մութն եր։ Որը քամոտ եր, և ինձ թվում եր, թե աների վրա ցցած գրոշակները, վորոնց շուրջը սկ կտորներ եյին կարած, մի տեսակ ուրիշ կերպ եյին նայում։ Յերբ քամին փչեց նոր ուժով, ինձ թվաց, թե գրոշակներն իրենց յերկար ձեռքերը տարածեցին վեր, կարծես ինչ-վոր բան եյին խնդրում։ Այդ յերեկո յես պատրաստ եյի հարձակվելու ամեն մեկի վրա, ով կը համարձակվեր մի վատ բան ասել լենինի մասին։

Անկողնումս պառկած ժամանակ արդեն յես շարունակ մտածում եյի, թե այդ ինչպիսի բան ե—ապրեց, ապրեց ու մեռավ։

3.

Հունվարի 22-ին յես ու ընկերս առավոտյան գնացել եյինք Գեղարվեստական թատրոն «Կապույտ թոշուն»-ի ներկայացմանը։ Առաջին գործողությունն անցավ։ Հանկարծ մի տղամարդ դուրս ե գալիս և ասում, թե Լենինը վախճանվել ե։ Իրարանցում ընկավ, շատերն սկսեցին դուրս գնալ դահլիճից։ Վորը լաց եր լինում, վորն ընկավ, և այնպիսի մոայլ տեսարան եր։ Այդ տիսուր պատկերից սիրոս ճմլվում եր ցավից և տիսրությունից։ Հետո կարգադրիչն ասաց, թե նորից պիտի մտնել դահլիճ։ Ամենքը մտան, բայց մեծ մասն արդեն գնացել եր բոլորովին։

Յերբ մի քիչ հանգստություն ախրեց, բեմ դուրս յեկավ ակումբի վարիչը և ասաց, թե ներկայացումը դադարեց- վում է Վ. Ի. Լենինի մահվան պատճառով։ Տիուր, լա- յակումած աշքերով հասարակությունը սկսեց դուրս դալ։ Յես ու ընկերս վազեցինք տուն։ Կարծում ելինք, թե Յես ու ընկերս վազեցինք տուն։ Հենց վոր մտանք, տեսանք տղերքը քարշ են տալիս ընկերներից մեկին, վորը լաց լինելուց համարյա թե ուշագնաց եր յեղել։ Բանից յերեաց, վոր տանն ամենքն արգեն իմա- ցել ելին իլիչի մահը։ Յերեխաները վոր իմացել ելին այդ լուրը, շատ ելին լաց յեղել և ման ելին գալիս գլուխները կորցրած։ Յես յեկա և չգիտեյի ինչ անեմ. մեկ պառկում ելի մահճակալիս վրա, մեկ գնում խոհանոց, ու փոշինչ չեյի գտնում, կարծես թե մի ինչ-վոր բան պակաս եր։ Այսպես ուրեմն, մենք կորցրինք մեր մեծ առաջնորդին։ Այս մասին մի որում ամբողջ ժողովուրդն իմացավ։ Բայց չպետք ե հուսահատվենք, պետք ե ավելի պինդ սեղմենք մեր շարքերը և պաշտպանենք մեր մեծ, թանգագին, պրո- լետարիատի համաշխարհային առաջնորդի ավանդները։ Պետք ե ձեռքներումս պինդ պահենք իլիչի ավանդների դրոշակը։ Բուրժուազիան յերեխ մտածում եթե՝ հիմա վոր առաջնորդը մեռավ, բանվորների միությունը կը թու- լանա, և մենք հեշտությամբ կարող ենք հաղթել Խորհրդային Ռուսաստանը։

Վոչ, այդ ճիշտ չե. մենք, ընդհակառակը, ավելի ա- մուր կը միանանք, կապրենք իրար հետ համերաշխ և միա- ձույլ, հավիայան հավատարիմ կը մնանք լենինյան ավանդ- ներին և յերբեք, յերբեք թույլ չենք տա, վոր կատարվի այն, ինչ վոր յերազում ե փտած բուրժուազիան։

Սոլոդկին 8.

4.

Հունվարի 22-ին մեզ մոտ ակումբում ներկայացում եր նշանակված։ Յես ուզում եյի գնալ և պատրաստվում եյի, յերբ յեղբայրս յեկավ և ասում ե. «Մեռավ մեր իլիչը»։ Զիմացա, թե բանն ինչումն ե, և հարցըի. «Ի՞նչ ես ասում»։ Այն ժամանակ նա պատմեց մեզ, թե ինքը յերկաթուղու կայարանումն եր և իմացել ե այդպիսի մի լուր։ Ամենքս տիրեցինք և փոխանակ ներկայացում գնա- լու գնացինք հարգելու իլիչի հիշատակը։ Ժամը 9-ին ամենքն սկսեցին ցրվել և խոսք տալ իրար, վոր վաղն ամենքը միասին գնան Գորկի, վորտեղից պիտի դուրս բերեցին նրան։ Յես, իհարկե, ամեն կերպ աշխատում եյի, վոր քույրս վերցնի ինձ իր հետ։ Նա համաձայնեց, և յես շատ ուրախացա։ Ժամը 7-ին վեր կացանք և գնացինք նայելու արտակարգ գնացըները։ Նրանք զարդարված եյին տոնածառերով, իսկ այն վագոնը, վորի մեջ պետք ե պառկած լիներ լենինը, ծածկված իր կարմիր կտորով։ Ժամը 8-ից առաջ սկսեցին հավաքվել բոլոր գնացողները։ Սառնամանիքն անտանելի յեր, բայց մեկ ե, յես վճռել եյի թեկուզ սառչել, միայն թե վերջին անգամ աեմսեյի իլի- չին։ Ժամը 8-ին ճանապարհ ընկանք, անցանք մոտ մեկու- կես վերստ, տեսնենք յետևներս անթիվ ժողովուրդ ե գալիս։ (Այդ գործարանից եր)։ Թեև նրանք մեր յետևն եյին, բայց շատ արագ եյին գնում և շուտով կարեցին մեր առաջը, Մենք գեռես չեյինք հասել, այն ինչ վոմանք արդեն յետ եյին գալիս և ասում եյին մեզ, թե արդեն դուրս են բերում, բայց մենք չեյինք լսում և ուզում եյինք, վոր մի կերպ շուտ գնանք տեսնենք նրան։ Յես շարունակ առաջ եյի վազում մերոնցից։ Ժողովուրդը խիստ շատ եր։ Ամենից առաջ գնում եր մի ձի, վորի վրա

բարձված եյին լուսանկարչական գործիքներ լուսանկարներ հանելու համար. հետո գալիս եր ժողովուրդը և պատկներ եյին տանում զյուղացիների կողմից, իսկ հետո բերում եյին Վ. Ի. Լենինի մարմինը. Մոտենալ չեր կարելի, վորովինետե շուրջը շղթա եյին կազմել իրար ճեռքից բռնած: Յետեից գալիս եր պատվո պահակախումբ: Այո, իսկապես այդ սպի. որ եր ամենքի համար: Ամենքը խիստ տխուր եյին և գնում եյին գլուխները կախ: Վորալեսզի տեսնեյինքնրան դագաղի մեջ, մենք բարձրացանք մի բլուր, և այնտեղից կարելի յեր տեսնել նրա դեմքը: Ինձ շատ դյուր յեկավ, վոր առջեկց յերկու ալեոր ծերունի մի մեծ պասկ եյին տանում զյուղացիների կողմից: Բայց ահա շուտով յերևաց կայարանը. այնտեղ կանգնած ե գնացքը, վորով իլիչը պետք ե մեկնի Մոսկվա և այլս չի վերադառնա մեզ մոտ: Ահա արդեն դրին նրա դագաղը, և յես ամեն բան տեսնում եմ, վորովինետե աշխատում եմ շարունակ առաջ ընկնել. նրա մերձափորներն ամենքը նստում են: Ահա և շարժվում ե գնացքը, և յես ձայներ եմ լսում. «Գնաս բարյավ, իլիչ»: Ինչքան տիրալի յե, ինչ-վոր բան պակասեց: Յեվ ամենքն սկսեցին ցըվել: Ժամը 3-ին յես տուն յեկա:

Հապշինա Ռայա

5.

1924 թվի հունվարի 23-ին իմացանք Վլադիմիր իլիչ մահը: Դպրոց վոր գնացինք, մեզ ասացին, թե Վլադիմիր իլիչը վախճանվել և հունվարի 21-ին ժամը 6-ին 50 րոպեյին: Ամենքիս ճեռքերը թուրացան, սիրտներս կանգ առան. չկարողացանք դիմանալ և լաց յեղանք: Նույն յերեկոյան յեկավ մեր վարիչը և խորհրդակցություն սկսվեց Վլադիմիր իլիչի մահվան մասին: Վարիչը Մոսկվայից լրա-

վեր բերեց, վորի մեջ գրված եր, թե ինչպես եր վախճանվել Վլադիմիր իլիչը: Մենք սկսեցինք կարդալ այդ լրագիրը: Կարդալուց հետո մենք, բոլոր պատկոմներս սկսեցինք խնդրել վարիչին, վոր մեզ տանեն Վլադիմիր իլիչի դագաղի մոտ: Բայց յեթե փող չկա, մենք պատրաստ ենք ամբողջ որը վոչինչ չուտել և ծախել մեր կերակուրը, վորպեսզի այդ փողով կարողանանք գնալ դագաղի մոտ: Յեվ յեթե այդ չի կարելի անել, այն ժամանակ մեր պատկոմների կազմակերպությունը պատրաստ ե վոտով գնալ, միայն թե տեսնենք մեր առաջնորդին, թե կուզ մեռած: Վարիչն ասաց բոլոր պատկոմներին, թե փող կա և կարելի յե գնալ, բայց թե ինչ կասի Դյուշենը: Մյուս որը յեկավ ընկ. Դյուշենը, և բոլոր պատկոմները սկսեցին խնդրել նրան, վոր Մոսկվա գնան մեր թանգարին ուսուցչի մոտ: Նա զեկուցում արավ մեզ Վլադիմիր իլիչի մասին: Հետո ասաց, թե անկարելի յե գնալ, վորովինետե շատ խիստ սառնամանիք ե և շատ մեծ հերթեր են: Յեվ մենք վշտացած տուն գնացինք:

Ծորա Կորոտինա յեվ Կլավդիա Կոլոդինա

ԴԵՊԻ ԽԼԻՉԻ ԴԱԳԱՂԸ

Իլիչի մահը վոր իմացանք, յես չհավատացի և ամենքին ասում եյի, վոր այդ ճշմարիտ չե: Բայց յերբ մեզ հավաքեցին, վոր տանեն նախկին Գուչկովի ամարանոցը, յես չգնացի: Շատ տխուր եյի, սիրտ չունեյի: Հետո գիտեյի, վոր Գուչկովի ամարանոցում լաց կը լինեյի ամենքի առաջ, իսկ այդ չեյի ուզում, ու չգնացի: Մանը սրաով սկսեցի ինչ-վոր զրել: Շատ եյի ուզում տեսնել բանվորների համաշխարհային առաջնորդին: Սպասում եյի, վոր

մեզ կը տանեն, բայց յեթե չի կարելի, այնուամենայնիվ ուզում եյի գնալ յեղբորս մոտ և նրա հետ միասին գնալ դադաղի մոտ:

Որը մթնեց. մտնում եմ յես մեծ աղջիկների մոտ: Գալիս ե ինձ մոտ նրանցից մեկը և ասում. «Գնանք մեզ հետ իլիչի դադաղի մոտ»: Ուրախությունից սիրտս թրթուց, բայց հիշեցի, վոր փող չունեմ: Աղջիկներն ասում են. «Մենք ել հո չունենք, գնանք առանց տոմսակի»: Համաձայնեցի և սկսեցինք պատրաստվել: Գնացի ննջարան և պատմեցի ընկերուհիներիս, բայց նրանք հավանություն չունին: Բոլորովին պատրաստվելուց հետո գնացինք տղաներին ասելու, վոր նրանք ել գան մեզ հետ: Մի քանի տղաներ նույնպես համաձայնեցին, իսկ մնացածները չհավատացին մեզ: Յերբ ամենքը պատրաստ եյին, գնացինք հերթապահ դաստիարակչի մոտ: Նա մեզ թույլ տվավ, և մենք ճանապարհ ընկանք: Կայարանում ստիպված եյինք շուտ յերկար սպասել, սառանք. գնացքը մի ամբողջ ժամ ուշացավ և ժամը 9-ի տեղ յեկավ 17-ին: Գնացքն յեկավ, մենք ամենքս ել նստեցինք մի վագոնի մեջ: Նոր եյինք նստել և սկսել մեր խոսակցությունը, յերբ մտան յերկու կոնդուկտոր. մենք վախեցանք և փախանք: Բայց հետո վլճռեցինք, թե մեկ ե՝ փախչել չենք կարող և կանգ առանք: Կոնդուկտորը մտեցավ և սկսեց տոմսակ հարցնել. մենք պատասխանեցինք, թե տոմսակ չունենք և թե գնում ենք հրաժեշտ տարու իլիչին: Կոնդուկտորը հեռացավ և մենք մնացինք վագոնում:

Մենք հերթի կանգնեցինք. այս ժամը  $11\frac{1}{2}$ -ին եր: Մեզ թվում եր, թե հեռու չենք Միությունների Տնից: Բայց սիսալվեցինք, դեռ ևս շատ հեռու եյինք: Յետ դարձանք և շարունակ յետ ու առաջ եյինք գնում, բայց ահա հերթը քանդվեց և մենք կտրվեցինք մի քանի մարդուց:

Սկսեցին իրարու բոթբթել և յերկար ժամանակ վոչ մի կարգ չկար: Քուններս տանում եր և շարունակ նստուտում եյինք սանդուխքի աստիճանների վրա: Ժամը չորսին միացանք մի կազմակերպության հետ. մեզ չեյին ուզում ընդունել, բայց հետո ընդունեցին: Բանից յերևաց, վոր այդ կազմակերպությունը գնալու յե ամենից վերջը: Նրանից հեռացանք և միացանք ավելի առաջ կանգնած մի ուրիշ կազմակերպության հետ: Վերջապես առաջ շարժվեցինք: Ներսը շատ լույս եր և մաքուր: Վոչ մի ձայն-ձայն ժամանեցինք: Յերբեմն-յերբեմն միայն հեկեկանք եր լսվում:

Շատ տիսուր եյի զգում ինձ: Այսպես յես հրաժեշտ տվի Վլադիմիր իլիչին: Այժմ մենք կաշխատենք գնալ նրա շավղով:

Շուրա Պրիխողկո

## ԻՆՉՓԵՍ ԴԻՄԱՎՈՐԵՑԻՆՔ ԻԼԻԶԻ ՄԱՐՄՆԻՆ

Հունվարի 23-ին, յերեկվա ժամը 12-ին յես գնացի Պավելեցկի կայարանը: Յերբ հասա, շատ ժողովուրդ կար այնտեղ: Ավտոմոբիլից իջա և մտա պերընը, վորը ամբողջովին պատած եր սեռվ: Այստեղ կանգնած եյին խիստ շատ պատվիրակություններ և յերաժշտական խմբեր: Ժամը յերկուսին հնչեց շշակը և յերաժշտությունը նվագեց թաղման քայլերգը: Յերբ գնացքը մոտեցավ պերընին, ամենքը վերցրին գլխարկները և յերգեցին «Դուք զո՞նացիք»: Գնացքը կանգ առավ: Վագոնից դուրս յեկավ պատվո պահակախումբը և կանգնեց այս ու այն կողմը: Հետո սկսեցին գուրս բերել պատկերն ու դրոշակները: Դրոշակների վրա լոգունգներ եյին գրված: Պատկերից և պատվիրակներից հետո վագոնից յերևաց իլիչի դադաղը,

վոր կրում եյին ընկերներ Բուխարինը, Ստալինը, Կրասինը, Կամեները: Դագաղն ամբողջապես կարմիր եր, միայն խուփը ապակուց եր: Սգերթն առաջ շարժվեց: Առջեկց տանում եյին պսակներն ու դրոշակները, իսկ նրանց յետեից իլիչի դագաղը: Դագաղի յետեկց գնում եր նրա կինը՝ Կրուպսկայան և քույրը՝ Մարիա Իլինիչնան: Սգերթն անցավ Պյատիշեցկայա փողոցը, հետո Բալչուգ, հետո կամըրջով Կարմիր հրապարակը, Ոխոտնի ոյազը գեպի Միությունների Տունը: Բոլոր փողոցներում, մանավանդ Միությունների Տան մոտ կարմիր-բանակայինները շղթա եյին կազմել, վորի միջով անցնում եյին կազմակերպությունները և Իլիչի դագաղը: Իլիչի դագաղը ներս տարան, և յես գնացի մեր տուն:

Թեղրին

## ՄՈՍՎԱՅԻ ՓՈՂՈՑՆԵՐԻ ՏԵՍՔԸ ՀՈՒՆՎԱՐԻ 27-ԻՆ ՄԳԻ ՈՐԸ

Հունվարի 27-ին սպի որ եր: Թաղում եյին պլուետարիատի մեծ առաջնորդ Ռույանովին (Լենինին), վորն իր ամբողջ կյանքում աշխատում եր լավացնել բանվոր դասկարգի դրությունը: Յեվ անա, յերբ ամբողջ բանվոր ժողովուրդն իմացել եր Վլադիմիր Իլիչ Լենինի մահը, հագաֆկել եր Ռուսաստանի բոլոր ծայրերից հրաժեշտ տալու վերջին անգամ թանգարին առաջնորդին: Դժբախտաբար, այդ որը շատ խիստ սառնամանիք եր, բայց, չնայելով դրան, փողոցները լիքն եյին ժողովրդով, վորը գնում եր գեպի Կարմիր հրապարակը, ուր տեղի յեր ունենում թաղումը: Բոլոր փողոցները զարդարված եյին սերվ և կարմիր դրոշակներով, վորոնց մոտ կախված եյին պլա-

կատներ: Ամեն մի քայլափոխին խարույկներ եյին վառվում, բոլոր փողոցներում, վորոնցով անցնում եր ժողովում, բոլոր փողոցներում, վորոնցով անցնում եր ժողովում:



Սգի որ Մոսկվայում

վուրդը, մաս եյին գալիս ձիավոր միլիցիոններներ և շրջում եյին զինվորներ: Ահա թե ինչպիսի տեսք ունեյին Մոսկվա քաղաքի փողոցները Վլադիմիր Իլիչ Ռույանովի (Լենինի) թաղման որը:

Տամարկին

## ԻՆՉՊԵՍ ՀՐԱԺԵԴՏ ՏՎԻՆՔԻ Վ. Ի. ԼԵՆԻՆԻՆ

Հունվարի 25-ի առավոտյան մեզ դպրոցից տարան Միությունների Տան Սյունազարդ դահլիճը վ. ի. Լենինին հրաժեշտ տալու: Խիստ սառնամանիք եր, ձյունը ճրթճըրթում եր վոտների տակ: Վերջապես հասանք Միություն-

ների Տուն, վորի առջև կանգնած եյին Վլադիմիր Իլիչին հրաժեշտ-տալու ցանկություն ունեցողների մեծ հերթեր։ Հրապարակում խարույկներ եյին վառվում։ Մեզներս թողին ավելի շուտ, քան թե մեծերին։ Սանդուխը վոր բարձրացանք, տեսանք հրացաններով զինվորներ։ Առաջին դահլիճը մտնելիս տեսանք Վլադիմիր Իլիչի բրոնզի կիսարձանը. նա ծածկված եր սև շղարշով և շրջապատված եր դափնյա ծառերով։ Զահերը նույնպես ծածկված եյին սև շղարշով։ Անցնելով դահլիճների մի յերկար շարք, թեքվեցինք ձախ դեպի Սյունազարդ դահլիճը և տեսանք դադաղի մեջ համաշխարհային պրոլետարիատի առաջնորդ Վ. Ի. Լենինին։ Դահլիճը լույսերի ծով եր ներկայացնում, դագաղը շրջապատված եր ահագին արմավենիներով։ Կարմիր դագաղի պատվանդանի վրա և այունաշարի մոտ դըրված եյին բազմաթիվ և բազմատեսակ պսակներ. վերնարկի բարձրությունից հոսում եյին թաղման քայլերգի հեկեկացող ձայները. Դագաղի մոտ կանգնած եր պատվո պահակախումբ, զինվորական և քաղաքացիական։


Անսովոր եր այն խաղաղությունը, վոր տիրում եր դահլիճնում, յերբ միալար ժաղավենի պես անցնում եյին իրենց առաջնորդին վերջին պարտքը տվողները։ Դառնալով դեպի դուռը, մենք շարունակ յետ եյինք նայում, աշխատելով վերջին անգամ տեսնել մեզնից հեռացող Վլադիմիր Իլիչի թանգագին դիմագծերը։

Տ. Ցիալյոնկովա

2.

Հունվարի 26-ին ժամը 8-ի մոտերքը մենք հավաքվեցինք գլուխություն, վորպեսզի վերջին անգամ հրաժեշտ տանք Վ. Ի. Լենինին։ Միությունների Տանը վոր մոտեցանք, այնտեղ արդեն բավական հերթ կար կանգնած։

Մի քիչ սպասեցինք և, վերջապես, մոտեցանք դռանը, մտանք Միությունների Տունը. այնտեղ դեռ ևս այնքան ել լուսվում չեր տիրում. սանդուխը բարձրանալիս լսում եյինք այսպիսի հարցմունքներ. «Ի՞նչ, զլիարկներս վերցնենք. վոր դահլիճումն ե դրված. իսկ ի՞նչպես ե այսակղ, վախենալու խո չե»։ Մեր առջև տանում եյին մեռած ծաղիներից մի պսակ ապակյա արկղով։ Առաջին դահլիճում



Լենինի դագաղի մոտ

կանգնած եր Լենինի արձանը բրոնզից, ծաղիկներով ծածկված։ Հանկարծ զգացի, վոր ամենքը մի անգամից լոեցին. դեռևս այստեղ ու այնտեղ խոսում եյին, բայց նրանց լոեցնում եյին «որ, որ» անելով։ Կարծես հեռվից լսվեց որկեսարի մեղմ ձայնը, վոր նվազում եր թաղման քայլերգը. Վերջապես հասանք առաջին դահլիճի ձայրը. կարմիր բարձ

ըավանդակի վրա պառկած ե այն մեծ մարդը, վորը նախապատրաստեց Հոկտեմբերյան հեղափոխությունը և իրագործեց: Նա պառկած ե ամբողջովին գեղնած, կանաչ ֆըենչը հագին, և թվում ե թե ահա վարտեղ վոր ե՝ վեր կը կենա և կը խոսի:

Յես կարծես թե զարթեցի քնից, յերբ դուրս յեկանք փողոց:

Ա. Գլեզեր

3.


Սառնամամանիքը սաստկանում է, Գիշերը պարուրում ե քաղաքը, Միրաը դող գցող, արնագույն-սկ զանգվածի պես ցցվում ե մեր առջև Միությունների Տունը, Մենք մտնում ենք ամբոխի մեջ:

Սուակույան արդեն յեղել ենք իլիչի դագաղի մոտ, և այն միտքը, թե թույլ չեն տա, վոր յերկրորդ անգամ մտնենք, անհանգստացնում ե մեզ: Ամբողջ սրառվդ ուզում ես դրոշմել հիշողությանդ մեջ ամենքից սիրված առաջնորդի դիմագծերը: Դանդաղ շարժվում ե ամբոխը, — թվում ե թե վերջ չունի այդ կենդանի շղթան: Սառչում են ձեռքերն ու վոտքերը, բայց վոչոքի մտքովն անդամ չի անցնում, վոր տուն գնա: Լսվում են ձիավոր պահապանների կանչերը: Ճրթճրթում ե բոցավոր խարույկը, փորի մոտ տաքանում են պահապանները: Մարդկանց սկ ուրվագծերը շարունակ ծածկվում են պայծառ, արագ հանգչող ծով կայծերով: Մենակ ու վորբացած, կարծես արտասվելով, նայում ե պլաստ-սպիտակ լուսինը:

Սառնամանիքը սաստկանում է:

Սառչում ե ամբոխը:

Բայց վերջապես դոների մոտ ենք: Հայացքներս ընկան պլակատի վրա:



#### Արտնագարգ դահլիճում

«Պարագլիխի մահվան»

Կը պատասխանենք ավելի կուռ

Միաձուլությամբ, տոկունությամբ

Յեվ յերկաթի դիսցիպլինայով»:

Ավելի սերտ սեղմվեցինք գռներում: Մանում ենք: Լայն սանգուխքով բարձրանում ենք վեր: Քայլում ենք սուսուփուս: Սև ու կարմիր կտավները ձգված են պատերի յերկայնքով: Սև շղարշով ծածկված են կամբջակները: Հայելիները թաքնվել են սեերի յետերի: Պահապան զինվորները կանգնած են արձանացած: Թաղման քայլերզը մեղմորեն զեզում ե համաշխարհային վիշտը: Ահա արդեն Սյունազարդ դահլիճումն ենք: Ամեն տեղ կանաչ, պատկներ, դրոշակներ: Կարմիր դագաղի մեջ քնած ե Լենինը: Միրտս կոկծաց ցավագին: Մաքերը թռան զիխումս մեկը մյուսի յետերից:

Մեռավ նա: Ի՞նչ ե նշանակում այդ, ի՞նչը մեռավ: Խոսքերն ու գաղափարներն անմահ են, և չե՞ վոր այդ ե ամենից ավելի գնահատելին:

Կենդանի յԵ լենինիզմը:  
Չի մեռնի յերբեք:

Մ. Ռւազենսկայա

## Ա Ճ Խ Ա Տ Ե Ն Ք

Բարե, թանգագին Դորա:

Դորա, յես չեմ գրելու այս նամակի մեջ մեր անձնական գործերի մասին, կը գրեմ միայն այն ապրումների մասին, վոր ունեցա այս որերը: Հունվարի 22-ի սուզի որն անցկացրինք այսպես: Առավոտյան հանդիսավոր նիստ եր. հիշատակում եյինք այն մարտիկներին, վորոնք ընկել եյին ազատության համար 1905 թվի հունվարի 9-ի արյունալի որը: Նիստին յես ճառ խոսեցի, ասում եյի. «1917 թ. անցավ. նա իր հետ տարավ շատ արյուն: Բայց և այնպես 1917 թ. բանվորները հաղթեցին: Կեցցե ազատությունը, կեցցե Վլադիմիր Իլիչ»: Յերեկոյան համերգ կար: Հետո, յերբ պառկեցինք քնելու, յեկավ ղեկավարուհին և ասաց, թե շատ տիսուր տեղեկություն են ստացել: Սկսեցինք հարցնել. «Ի՞նչ ե պատահել»: Այն ժամանակ նա լացակումած ասաց, թե Լենինը մեռել է: Սկզբում յես չհավատացի ականջներիս և վախեցած հարցրի. «Ի՞նչ եք ասում, Լենինը մեռել է»: Նա ասաց. «Այո, նա մեռել է»: Ել չեմ հիշում, թե ինչ ասաց հետո. սկսեցի լաց լինել և յերկար ժամանակ չեյի կարողանում հանգստանալ: Ամենքը ինչը ուներում եյին ինձ, վոր լաց չլինեմ, այլ ավելի լավ ե վորեե բան ասեմ Լենինի մասին, բայց յես յերկար ժամանակ չեյի կարողանում հանգստանալ: Ամբողջ գիշերը

չքննեցի և շարունակ մտածում եյի մեր թանգագին հայր Իլիչի մասին: Առավոտյան գնացի այն դասարանը, ուր պարապում ե Խմբակը: Այնտեղ զարդարում եյին Լենինի պատկերը կարմիր և սև կտորով: Նայեցի սևով պատած պատկերին և իսկույն լաց յեղա:

Մենք վճռեցինք այդ որը չպարապել, այլ նվիրել Լենինին, այսինքն՝ գրել վոտանավորներ և շարադրություններ Լենինի մասին, կարդալ նրա կենսագրությունը և գըրքեր նրա մասին: Ինչպես վճռեցինք, այնպես ել արինք: Իմ ունեցած բոլոր գրքերը տվի յերեխաներին, վոր կարդան: Ինքս գրեցի մի վոտանավոր, նվիրված մեր թագագին առաջնորդին, հետո՝ մի պատմվածք նրա կյանքից և շարադրություն՝ «Լենինը և արեելյան ժողովուրդը»:

Դորա, ինձ համար գրելը շատ դժվար եր, չեյի կարողանում լավ գրել, վորովհետև շարունակ լաց եյի լինում և չեյի կարողանում վոչ մի կերպ հիշել մեր թանգագին պարագին, ավելի շուտ՝ մեր հորը, Իլիչին:

Դորա, չե՞ վոր յես գիտեյի, վոր չպետք եր լալ, այլ, ընդհակառակը, պետք եր այն որը վորքան կարելի յեր կայտառ լինել, պետք եր ամբողջ վիշտը կրել քաջաբար և չհուսահատվել, ինչպես անում եր մեր թանգագին բարեկամ Իլիչը: Դորա, գործիր բոլոր ուժերովդ Խորհրդային իշխանության համար. մենք պետք ե հաղթահարենք անգրագիտությունը և Ռուսաստանը գարձնենք ծաղկած յերկիր: Չե՞ վոր այդ մեր թանգագին Իլիչն ել ուզումեր անել, բայց նա մեռավ, և այդ արդեն մենք ինքներս պիտի անենք: Մենք կաշխատենք, կաշխատենք անգարում և առանց հուսահատվելու:

Դորա, միայն թե յես շուտ առողջանամ և գնամ հեռու, հեռու Բաշկիրիա, ուր ձգվում են ավագոտ տափաս-

տաններ, ուր ապրում են յետամնաց և խեղճ մարդիկ և չգիտեն նույնիսկ, թե ինչ է դիտությունը:

Դորա, ասում եմ քեզ անկեղծորեն. յես ուզում եմ այդ գժբախտ և յետամնաց մարդկանց ոգնել՝ ինչով վոր կարող եմ: Իմ ցնորդն ե լինել բժշկուհի և կոմմոնիստուհի և գնալ այնտեղ: Դու, ի հարկե, հասկանում ես ինձ, Դորա:

Քո Կ. Ա.

## ԼԵՆԻՆԻ ՅԵՏԵՎԻՑԻՑ

Ահագին քաղաքի խուլ անկյուններից, իրար խաչաձեռ անհայտ փողոցներից հատու, համաշափ քայլերով գեղի կենտրոն են դիմում ոյունաշարերը... Սյդ մենք ենք... Գիշերը մեզ սև շղարշ ե հագջրել, ձմեռն անհասկանալի անկվածներ ե հյուսել մեր թերթերունքների վրա, շղթայել ե մեզ յերեսուն աստիճանի սառնամանիքով, միաձուլել ե մեզ, հազարավորներիս, լայն փողոցներում բոցավառ խարույկների կարմիր լույսերի մեջ...

Գնում ենք սևազգեստ տների մոտով, արնագույն խարույկների մոտով Միությունների Տունը, Սյունազարդ գահինը, վորտեղ սև-կարմիր գրոշակների շրջափակի մեջ մեր պարագուխը, մեր իլիչը վերջին զորատեսն ե կատարում:

Իլիչ:

Ամբողջ Մոսկվան գալիս ե քեզ մոտ շարեշար, սև յերիզով շղթայելով փողոցներն ու հրապարակը. ամբողջ Ռուսաստանը կը գար քեզ մոտ, ամբողջ աշխարհը:

Լենին:

Քո անունը անդրադարձ ե անհունության լուսար-

ձակի մեջ, քո անունը հրավառ սավառնակու՛ շրջել ե ամբողջ աշխարհը, ծնունդ տալով մեծ գաղափարին բոլոր ձնշվածների սրտերում:

Իլիչ:

Մենք կը գնանք կաղմակերպված շարքերով, ինչպես զալիս ենք այս բոպեյին հրաժեշտ տալու քեզ, Հնդկաստան, ուր աղոթում են քեզ—անհասանելի-հրաշագործիդ—միլիոնավոր ստրուկներ. կանցնենք փտած բռնակալության



ԼԵՆԻՆԻ ՅԵՏԵՎԻՑՆԵՐԻ ՅԵՎ ԳՐԱՎԱԳԻՒՆԵՐԻ ՄԵջ

Հինական պարսպի այն կողմը, ուր, կարեվեր ծանրությունից կուացած, շշնջում ե քո անունը ծեր - կուին (մշակը) անհուն հավատը խամրած աշքերի մեջ...

Մենք կը գնանք քարոզելու քո գաղափարը ամբողջ յերկրագնտում, մենք կը վառենք հեղափոխության խարույկները կարմիր աստղերով Աֆրիկայի անապատներում և Ամերիկայի քաղաքներում, մենք յերկաթի բռունցքնե-

բով կը ծեծենք Զինաստանի պատերը և կը ցցենք կարմիր դրոշակը Եփերեստում...

Իլի՛: Մենք լեզիոններ ենք... Քո ավանդները կը բորբոքեն կարմիր խարույկներով մեր շարքերը, մեր կոփառերը կը լինեն գտահ, անողոք, հաղթական...

Յուրաքանչյուրի թուլությունը կը կոփի կոլեկտիվի ուժով. — մենք կը քանդենք բռնակալության շղթան, քո գաղափարը իբրև կապույտ թուչուն կը սավանի գեղի արեց, կարմիր գրոշակը պինդ գրկախառնությամբ կը գոտուրի յերկրագունուր...

Իսկ այս բոպեյին մենք գալիս ենք իրար խաչաձեռզ անհայտ փողոցներից պողպատի ու շարքերով, գալիս ենք սուզի քայլերգով, ձմեռվա բուքին, բոցավառ խարույկների կարմիր լույսերի մեջ:

Վերա Գուկովսկայա

ԹԱՆԳԱՐԻՆ ԱՌԱՋՆՈՐԴ Վ. Ի. ԼԵՆԻՆԻ ՄԱՀԸ

Մեռավ հերոսը... Լենինը մեր...

Հզում ենք վերջին հրաժեշտի խոսքեր:

Մարմինը արդեն ցուրտ հողի գրկում,

Ցախս ու կսկիծը բանվորի սրտում...

Կերպենք մենք նրան թաղման մեծ քայլերդ.

Լենինը մերն ե, բանվորինն ե նա.

Ու չենք մոռանա ու չենք մոռանա...

Առլողինա

\*\*\*


Մենք քեզ միայն գագաղում տիսանք:

Դու խաղաղ եյիր ու լուռ, ինչպես ծաղիկները գունատ,

Վոր այնպես փարսիլ եյին ու փոփել վրադ...

Մեր մեծ առաջնորդ, դու մեռար...

— 56 —



Ա. Ի. Լենինի տունը Գուրկինում, վուտեղ ապրում եր յեզ վախճանվեց

Ա. Ի. Լենինի հուզակավորությունը

Բայց հայրենի յերկրում քո գեռ կապըն յերկար Ավանդներդ պայծառ...

Ահա յեկել ենք քեզ տեսնելու,

Յեկել ենք քո պատկերը սիրելի

Մեր մատաղ սրտերում հավերժ կերտելու...

Հյուդա Սերգեյեվա

\*\* \*

Լուռ եր, տխուր, ցուրտ եր սաստիկ,

Յերբ թաղելու նրան բերին:

Մութ եր իջել մի մութ ստվեր

Կըրեմլի հին աշտարակին:

Բայց, ո զարմանք, ուղիղ չորսին

Արել վառ փայլեց հանկարծ

— 57 —

Ու հրափայլ շողերն ուսին՝  
Աշտարակի գլխին ժպտաց:

Նրան հողում չթաղեցին:  
Ու ասես թե ապակու տակ,  
Վորպես հերոսն հեքյաթի մեջ,  
Քնած ե նա, լուռ ու մենակ:

Ըսկերները նրան դրին  
Դամբարանը մռայլ, տիսուր,  
Ու կըրեմի պատերի տակ  
Հանգչում ե նա, հանգչում ե լուռ...

## ՀՈՒՆՎԱՐԻ 27-ԻՆ

Քամին սուլում ե,  
Չյունը ցրում:  
Սև ոճանման ամբոխը հսկա  
Որորվում ե լուռ  
Ու խուլ քայլում...  
Ո՛, ինչպես ցուրտ ե,  
Վոտքեր ե կտրում...  
Ու չի նահանջում  
Սև ոճն անողորմ,  
Քայլում ե, քայլում...  
Իսկ քամին շաշում ե,  
Սուլում՝ ուհ, ու, ու...  
Սև յերիզներով դրոշներ կարմիր:  
Ողը սառել ե,  
Շունչը կտրվել...  
Սև ոճն որորվում ե,

Հուզվում...  
Դրոշները կարմիր, դրոշները սե...  
Կարմիր տառերը վառվում են արդեն.—  
«Գալիս են... բերում»...  
Սև հողմը հարձակում ձյան կույտերի վրա:  
«Մեռել ե զեկավարը»...  
Թող փոփի աշխարհով մեկ  
Մահվան լուրը նրա:  
Վոչինչ,  
Սյս հարվածն ել կտանենք.  
Զենք թողնի բուրժուական աշխարհը խնդա...  
Սյդպես, առաջ անցեք.  
Արագ,  
Սեղմենք շարքերը...  
Գնանք մեր վերջին հրաժեշտը տանք —  
Ղեկավարին...  
Յերբեք, յերբեք չի մեռնի նա,  
Ում անունն ապրում ե,  
Ով յեղել ե ժողովրդին — Ուսուցիչ.  
Հավերժ նա կապրի.  
Յեզ վոչ վոք չի մոռանա  
«Ելիչին», վոր մեզ ազատություն տվեց...  
Վիկտոր Զայդներ

## ԱՌԱՋՆՈՐԴԻ ՄԱՀՐ

Կարկամած ողի մեջ ձմեռվան  
Ճշում են շշակներն այն ահեղ,  
Կանչում են, կանչում են սեալուր՝  
«Մեռել ե առաջնորդն հանձարեղ»...

Փովում ե ահազանգն ամենուր,  
Ճիշերն ու կանչեր այն վերջին—  
«Թաղում ենք, թաղում ենք մենք ախուր  
«Դարերի Մեծ Վորդուն—իլիջն»:

Ամեն տեղ, ամեն ցեղ, ամեն ազգ  
Թող լսեն, թող հիշեն, խմանան,  
Վոր գործի պայքարի Մեծ Վորդին  
Անդոր եր բնության դեմ միայն...

Վոր դժբախտ վարկանին հուսահատ  
Նոր ուժով, հաղթ կամքովս յերկաթե  
Հանձարեղ Մեծ մարդը անվհատ  
Կերտում եր, դարբնում ՐՀՌ...

Կարկամած ողի մեջ ձմեռվան  
Ճշում են շշակներն այն ահեղ,  
Կանչում են, կանչում են սեալուր՝  
«Մեռել ե Առաջնորդն հանձարեղ»...  
Անատոլիյ Ալֆեյել

## ԱՆՓՈՓՈԽԵԼԻՆ

Իլիջը մեղ թողեց գնաց,  
Գնաց անդարձ, առնավետ,  
Բայց մենք կերթանք նրա ձամբով  
Ու կլինենք նրա հետ...

Կանցնեն դարեր ու տարիներ,  
Բայց սենք հաստատ ավանդին՝  
Մեզմ շարքերով վոտք կդնենք  
Համաշխարհի խորհրդին...

Իլիջը մեղ թողեց գնաց,  
Բայց մեղ հետ ընդմիշտ ՆԱ.  
Նրա ուղին անխախտ, հաստատ,  
Նրա գործը միշտ անմահ...

Անատոլիյ Ալֆեյել

## ԼԵՆԻՆԻ ՀԻՃԱՏԱԿԻՆ

Մեծ անտառի կողքին-մոտիկ բուսել եր մի դալար պուրակ,  
Նետել եր իր վոստիկները ու տենչում եր լույս-արեգակ,  
Բայց հողմերը շարագուշակ, մրրիկները խենթ ու վայրագ,  
Պայթում եյին նրա զլխին, թափում եյին հուր ու կրակ...

Իսկ անտառը ժպտում եր մեղմ իր հայրական ժպտով անուշ,  
Կուանում եր դեպինրան, գուրգուրում եր նուրբ ու քնքուշ,  
Իր հայրական հզոր կրծքով պաշտպանում եր ամեն կողմից,  
Պաշտպանում եր ամեն չարից, ամեն ցավից, ամեն հողմից...

Անցան որեր ու տարիներ. մեծ անտառի կողքին ահա  
Կանգնել ե հաղթ մի նոր անտառ, անխոցելի դառած հիմա.  
Ել վոչ մի հողմ չի սասանի, չի տատանի հիմքը նրա,  
Ել վոչ մի չար չի հանդգնի մատը շարժել նրա վրա...

Սակայն նրա մատաղ սրտին վիշտ մի սուր դանակ զարկեց—  
Կաղնին ընկավ անտառում մեծ, կաղնին հզոր, ամենամեծ...  
—Հեյ, ամրացիր, Ել ամրացիր, պուրակ ջահել ու համարձակ,  
Պատրաստ կանգնիր անտառի տակ, վորպես արթուն հզոր  
պահակ...

Թոստովսկացա Իրա

\* \* \*

*Մեռել ե...*

Լենինը, իլիշը...  
Ղեկավարը մեր Մեծ...

*Մահագդը*

Վորագես հուր, վորագես սուր  
Սրտիս մեջ ցցվեց:

*Մեռել ե...*

Բայց մահին ու հողին  
Մարմինն ե լոկ բաժին,  
իսկ հողին  
Յեզ գործը չի մեռնի  
Ու կապրի կրկին...

*Մաշա Կ.*

## ԼԵՆԻՆԻ ՀԻՋԱՏԱԿԻՆ

*Ել սարուկ չենք...*

Ազատության վորդիներն ենք մենք հիմի,  
Վորդիները աշխատանքի ու գործի:  
Իլիչը մեզ գերությունից ազատեց  
Յեզ առհավետ կապանքները փշրտեց...

Հեյ, դոդացեք, բռնակալներ աշխարհի,  
Լենինը կա, կենդանի յե, չի մեռնի,  
Յեզ դուք յերբեք, յերբեք ել մեզ չեք հաղթի,  
Մեր մեջ ե շունչն անմահ հզոր լենինի...

*Ա. Պետրով*

## ԻԼԻՉԻ ԹԱՂՈՒՄԸ

Զեն հնչում զանգերը տիսրածայն,  
Զեն յերգում հրաժեշտի մեղեղի.  
Սոսկ կանգնած շարքերը պահապան  
Զսպում են գրոհներն ամբոխի...

Ինչու յե ամբոխը հավաքվել,  
Միլիոններն ինչու յեն այսաեղ:  
Թաղում են, թաղում են իլիչին,  
Ղեկավար մեր հորը հանձարեղ...

Իջնում ե դազաղը... Լոռւթյուն...  
Սոսկալի, անավոր ըսպասում...  
Ու վորագես վիրավոր մի թռչուն,  
Եյրոպլանն ե վերում շառաչում...

Ընկերներ, ընկերներ թանգագին,  
Այս ուժն ենք ու հողին մենք հանձնում.  
Իլիչին, իլիչին մեր անգին,  
Մեր ուժը, մեր սիրտը, մեր հոգին...

*Ա. Վինոգրազովա*

## ՆՐԱ ԳԵՐԵԶՄԱՆԸ

Մոսկվայի մեջ աղմկոտ,  
Հին երբեմնի պատի տակ  
Կանգնել ե մի գերեզման  
Խորհրդավոր ու մենակ:

Այստեղ ննջում ե հանգիստ  
Մեր ընկերը անմեկին,  
Մեր ուժը մեծ, մեր հոգին,  
Մեր լենինը թանգագին:

Ու բանվորներն աշխարհի  
Բոլոր տեղի ու ցեղի  
Աչք ու հայացքն են հառել  
Դերեզմանին Մոռկովի...

Նա մեռել ե... Բայց անմահ  
Ավանդները նրա մեծ  
Ապրում են ու հուրհուրում  
Մասսաների սրտերում...

Ս. Մարգովս

\* \*

Չենք հավատում, չենք հավատում մենք կանչին,  
Հեռախոսի սուր ու ծակող սև կանչին:  
Վոչ, չի մեռել ու չի մեռնի առհավետ  
Լուսի գեմքով ծերուկը մեր խորագետ...

\* \*

Թործարանի թեժ ու թրծված ողակում  
Մենք չենք կարող քո կանչերին հավատալ,  
Թե կանգնել ե սիրոն իլիչի, չի խփում,  
Թե պառկած ե մեր լենինը դագաղում...

\* \*

Գիտեմ, գիտեմ—խուլ ժխորում ուազմական,  
Դաշտերում լայն, աղմուկի մեջ մաշինի

Հարյուր հազար դարերով դեռ հաղթական  
Կապրի անմահ անունն ընկեր լենինի:

\* \*

Հանգիստ, հանգիստ, վառարաններ Մարտենի,  
Լոեք, կանգնեք աղմկացունչ անիմսեր.  
Բավական ե տխուր զնգաս ու խոսես  
Հարապտույտ ու շատախոս հեռախոս...

### Հ Ր Ա Ժ Ե Ը

Առավոտյան ժամը ութին գաղտագողի ու հանդարտ  
Կայարանի կողմը ծըլկեց փոքրիկ տղան աննկատ.  
Դեմքը շատ լուրջ, ծանրակշիռ և գործունյա և խոհուն  
Գնում եր նա ու չեր նայում վոչ խոր ձնին, վոչ քամուն:

Հագել եր հ. ը վալինկեքը, ծածկել զլիտարկն ահագին,  
Զիգ քաշել եր կաշվե գոտին լայն կուրտիկի վրա հին.  
Եախաճաշն ել ծոցում դրած, հուշատեարը գոտիկին,  
Վորի վրա կարդացվում եր ցուցանիշը ահագին.—

«Թաղաքացի Պյոտր Ավդեյիչ Բուրովյին,  
Աշակերտ Ա խմբակի  
Կարլ Մարքսի անվան աշխատանքային  
10-րդ դպրոցի...»:

Իր մայրիկին մի բառ չասաց, վոչ ել դասի գնաց նա.  
Լենինն այսոր վերջին անգամ այս կայարան պիտի գա.  
Ու բարկացավ զինվորը խիստ.—Ո՞ւր ես գնում, եյ լակոտ:  
—Ընկեր, ընկեր, թույլ տուր տեսնեմ, թույլ տուր գնամ  
մի քիչ մոտ:

—

65

Գնտակի պես նետվեց Պետկան վոտքերի մեջ ամբոխի.  
Ըշտապում ե, ըշտապում ե, վոր ժամ առաջ տեղ հասնի;  
Կայարանը... Ըսպասում ե մեծերի մեջ թագնված,  
Խիտ հոնքերը ներքե թողած, ճակատը խիստ կնճռոտած...

Ու մահերզի տխուր, տխուր նվագի տակ համրաքայլ  
Բազմությունը լուս յերերաց՝ բարձր ուսած դագաղն ալ:  
Իր գլխարկը նետեց Պետկան, կանգնեց վոտքի մատներին,  
Չկարեցավ վոչինչ տեսնել... ու արցունքներն աչքերին

(Աչքերը խոր, տխուր-սիրուն, արտասուքի մի-մի լիճ)  
Կանչեց.—Ընկեր, իմ հորեղբայր, բարձրացրու ինձ մի քիչ.  
Այստեղ անտ ապակի յե... ցույց տուր, ցույց տուր, հաս-  
կանամ.  
Յեկել եմ յես վերջին անգամ նրան տեսնեմ՝ հրաժեշտ  
տամ...

Յեկ ծերուկը ակնոցավոր բարձրացրեց Պետկային,  
Վորի աչքը սուր ու ոլաք առավ կարմիր դագաղին:  
—Ահա... նա յե, կենինը մեր... ընկերը մեր թանգաղին...  
Իոկ ծերուկի այտերից վար արցունքները սահեցին...

Այսպես տարավ հավերժական հանգստարան  
Դեկավարին բանվոր դասի  
«Քաղաքայի Պյոտր Ավելիչև»,  
Աշակերտը Ռ-րդ խմբի»:

\* \* \*

Միթե պիտի սասի քուրան-հուրհրան,  
Միթե պիտի մենք ընկճիենք հուսահատ,  
Յեթե կարմիր թերը լայն-փողոցի  
Աև ու տխուր փետուրներով զարդարվի...

Թող սև հագած Մոսկվան տիրի ու ցավի-  
վիշտը... մեծ ե, սակայն ուշ և արտասվել.  
Պետք ե ամբողջ գծերով հին-վաղեմի  
Հոկտեմբերյան գնացքներով արշավել...

Միթե պիտի վիշտը սրտում մամոռախ,  
Արցունքները դառնան գետեր հարահոս,  
Յեթե ընկնի մեքենավարն քաջարի

Եմբոստացման գնացքի մեջ հրախոս...

—Առաջ, առաջ, դեպի կայանը վերջին,  
Մինչ կոմունան, համաշխարհի կոմունան՝  
Հեյ, լենինյան նորակոչներ շարքաշար  
Հոգին ձեր վառ, հոգին ձեր թարմ, հրատար:  
Գուղոկ

## Մ Ա Ն Ո Ւ Կ Ն Ե Բ Բ Ը

Հարկավոր չեն բառեր-խոսքեր՝ հսչուն-հզոր,  
Հարկավոր չեն խոսքի տարափ-ճառեր եսոր.  
Առանց գրանց ամեն մի խուլ հյուղում հիմի  
Արտասվում ե մեր զյուղացին աղի-աղի...

Առանց գրանց վիշտն ե սողում վողջ քաղաքում,  
Վիշտը հսկա ամեն մի տան դուռը թակում.  
Ու կոկորդում կըծկըվում ե մի ծանր բան,  
Սարսուներով ջղաձղում դեմք ու բերան:

Առանց գրանց ութ տարեկան Մանյան տիրած  
Արբեց փոքրիկ բռունցքներով աչքերը թաց,  
Կանչեց.—«Մայրիկ, յերանի թե յես մեռնեցի...  
Առանց գրանց չորս տարեկան Վանյան լցվեց,

Միրգ, խաղալիք մի կողմ հրեց ու թռթովեց.  
— «Յելանի թե բուզույները վոխց մենելին,  
«Յելանի թե մել տղելը վոխց մենելին,  
«Իսկ ընկել կենինը ապլել»...

Բարձր բոլոր շիրիմներից, կոթողներից,  
Բարձր ամեն մեծարանքից ու ճառերից  
Հուզումնալից թռթովանքն է այդ մանկական,  
Արցունքները փոքրիկների անապական...

Հնկեր, յեթե վիշտն այրել ե սիրտդ ջահել  
Ու կասկածը շաղափում ե ուղեղդ վառ,  
Նայիր,—միլիոն փոքրիկների սրտում անմար  
Իլիշը կա, կենդանի յե ու չի մեռել...

Մանե

## ԻԼԻՇԻ ՄԱՀՎԱՆ ԱՌԹԻԿ

(Կոլեկտիվ արտասանության քայլերգ)

Պատկոմներ,  
Լենինը չկա.—  
Կոչ նետեք աշխարհին  
Բարձրաձիչ...  
Պատկոմներ,  
Մեռել ե նա,  
Մեր պապը, մեր պապն  
Իլիչ:

Շարքերով խաղաղ ու լուս  
Իրենց ձեռքերի վրա  
Մեր հայրերն եյին տխուր  
Դագաղը տանում նրա...

Գլուխների ծով եր անծայլ,  
Ամենքն եյին լալիս...  
Պատկոմներ,  
Նա մեզ համար  
Ղեկավար եր,  
Ուսուցիչ,  
Բնկեր:

Վիշտը սիրտ եր ճըմլում,  
Թախիծը մեծ եր, ջերմ...  
Դա նրա ուղին իր վերջի,  
Ուղին վերջի  
Իլիչի...

Պատկոմներ,  
Լենինը չկա.—  
Կոչ նետեք աշխարհին  
Բարձրաձիչ...  
Պատկոմներ,  
Մեռել ե նա,  
Մեր պապը, մեր պապն  
Իլիչ:

Վոչինչ, առաջ կերթանք,  
Կլցնենք շարքերը ռազմիկ.  
Լոգունգ—  
Հիշեր նրան,  
Հիշեր նրան,  
Հիշեր  
Յեկ պատրաստ յեղիր.

Կհնչի ավելի ուժեղ  
Ռազմերթը, ռազմերպը մեր հաղթ,  
Դրոշը կարմիր ահեղ  
Կրոնենք բարձր ու զվարթ...

Պատկոմներ,  
Լենինը չկա.—  
Կոչ նետեք աշխարհին  
Բարձրածիչ...  
Դեպ կոիվ.—  
Այդպես եր կանչում  
Մեր պապը թանգագին—  
Իլիչ:

Անդրեյ Իրկուտով

## Լենինի ՄԱՀՎԱՆ ԱՌԹԻՎ

Յերկրաշարժի փոթորիկ չեր, գոռ, մոլեզին  
Մըրիկներով շանթահարող աշխարհն հսկա.  
Բոթն եր գուժկան՝ թե մեռել ե  
Լենինն անգին,  
Բոթն եր գուժկան՝ թե այլնս  
Լենին  
Չկա...  
Արև, կանդ առ,  
Հեյ, հուր արև, շնորհ արա  
Քիչ սպասիր, շող մի ձգիր ձյունի վրա,  
Դու չգիտե՞ս,  
Գեռ չգիտե՞ս մինչի հիմի,  
Վոր կանգնել ե հուրհածին սիրտն իլիչ...  
Աշխարհ, գործարան, ստանոկ իմ անդադրում,



Դուեկի գյուղը: Հուզաւկավորության սպասումը:

Այգի չի գալու այգեպանն անտրտում...  
Աշխարհ, լսիր.  
Եսոր հզոր գոռ տիտանին  
Կորցրել են բանակները բանվորական:  
Յերբեք, յերբեք չեն հեղեղվի հրդեհածիդ  
Կայծերը վառ նրա խոսքի՝ թեժ, պայթուցիկ.  
Հեռացել ե

Հեղափոխության թեժ հնոցից՝  
Հնոցավառը մեծ:

Ու դաշտերում, ուր զնզում ե յերգը անմար,  
Արձագանքվում հեռու-հեռու խոր ու յերկար,  
Տեսա

Տիսուր լաց եր լինում վորպես մանուկ

Մեր գյուղացին, վոր չեր թափել յերեք արցունք...

Պարզ ե, բոլոր ճնշվածները տարիների

Խոր հյուսվել են կոչերին Մեծ չոկտեմբերի.

Պարզ ե արդեն՝ պողպատաթել հանգույցներով  
Իլիչը մեր

Սերտ ձուլվել եր մասսաներին:

Ուրեմն նոր սերնդի մեջ ամբոխների,

Ուր լենինյան միխչն ե սուր ամուր զարկած,  
Միլիոնագուխ լենինը

Դեռ պիտի ապրի:

Ուրեմն նաև իլիչը մեր դեռ չե մեռած...

Ել ինչու յե յերկրաշարժով դու, մոլեղին

Ու մըրիկով ովկիանոսը շարժող հսկա

Բոթ սլանում՝ թե մեռել ե

Լենինն անգին,

Բոթը գուժում՝ թե այլիս

Լենին

Չկա...

Անքսանդր Ժարով

## ԹԱԶՄԱԿԱՆ, ԼԵՆԻՆՑԱՆ

Աշխատանք շեփորիր,

Աշխատանք

Շեփորիր.

Թունդ թնդա, թմբուկ, թունդ,

Թունդ թնդա,

Պայքարիր:

Տիրասուգ քայլերով դղրդաց կյանքը մեր:

Մեզ հետ ե լենինը:—Միք ցավի, միք ցավի:

Կոմյերիտ! սեղմամուր, մհակուռ, անյերեր,

Կենդանի սերնդի հաղթ քայլերդն վորոտանք:

Մենք պիտի կորստի ցավերից ուշքի դանք:

Հարգածին՝ նոր հարգած, պայքարին՝ պայքարով:

Քանդեցնք, բաց արեք դռները Դալթի:

Նոր որը՝ ամեն որ ձեռք բերեք նոր կովով:

Խարուսիկ անդունդներ—շուրջպարուր թշնամի:

Դարբնեք ձեր հոգում կամքը կուռ լենինի:

Կամքը կուռ և փոքրին, կամքը կուռ և մեծին:

Շենքի մեջ ամեն վոր իր քարը դեռ ունի:

Վհրտեղ ե սահմանը բանվորի ուժերի:

Յեկ միթե մեռել ե իլիչը յերբեք,

Յերբոր նա կերտել ե մեկ համար ՐԿՊ

Ռազմագոշն հաղթական ել բարձր վորոտանք,

Աշխարհն հին տրորենք, փշրտենք, հողմին տանք:

Իլիչն ապրում ե պրոլետարիատի մեջ,

Ու սահման, չափ չկա կամքին կուռ բանվորի:

Տիրասուգ քայլերդով դղրդաց կյանքը մեր,

Աշխարհը նորից-նոր մեկ գլխով ցած իջավ:

Կոմյերիտ, միասին, միակուռ, անյերեր:

Կոմյերիտ... ել մոտիկ, շարքերը սեղմամուր:

Այդ մենք ենք, նոր կյանքի, նոր որի կերտողներ:

Միասին — լենինի հետ, դեպի առաջ ՐԿՊ

Միասին — լենինի հետ դեպի վեպի վեհ կոմմունիզմ:

Աշխատանք շեփորիր,

Աշխատանք

Շեփորիր.

Թունդ թնդա, թմբուկ, թունդ,

Թունդ թնդա,

Պայքարիր:

Ա. Բեղիմյանսկի

ԹԱՂՄԱՆ ՔԱՅԼԵՐԳ

Դու ընկար փառքով քո դիրքում այսոր,  
Կախվ տանելով միլիոններին.

Դու մեռար, հլիձ... Դրոշը բռոսր  
Խոնարհում ենք քո գերեզմանին:

Ու հերթով կանցնեն անվերջ տարիներ,  
Մենք հավատարիմ քո ավանդներին.  
Քեզ հետ, Մեծ հլիձ, տեսանք Հոկտեմբեր  
Ու քեզ հետ հասանք խորհուրդներին:

Ուղեցույց աստղի պես շողացիր յերկար  
Ռուսիայում մեր պրոլետարական.  
Ավանդները քո, անզին զեկավար,  
Պահված են սրտում բանվորության:

Ծանր կորստի այս ախուր ժամին  
Ի՞նչպես չափել վիշտը բանվորի.  
Արցունք մեզ պետք չե. — սեղմեք շարքերը  
Պրոլետարական կուռ վաշտերի:

Դու մեռար, հլիձ, բայց կա ԲԿՄ—  
Պողպատ զորայուն բանվորական.  
Նրա հետ և գալիք ծանր պայքարում  
Քո կարմիր դրոշը ռազմական:

ՄԱՍՆ III.

ՎԼԱԴԻՄԻՐ ԻԼԻԶ ԼԵՆԻՆԻ ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Հունվար 21-ի յերեկոյան, ճակատագրական 6 ժամ  
50 բոպելին, մենք կորցրինք մեր թանգագին ու անոռ-  
ուանալի իլիչին: Ծանր ե մեզ համար այդ կորուստը: Մե-  
ռավ Լենինը: Բայց նրա գործն ապրում ե, և մենք, յերի-  
տասարդներս, կավարտենք այն:

Վլադիմիր Իլիչ Ռույանովը (Լենին) ծնվել ե Սիմ-  
բիրսկ քաղաքում 1870 թ. ապրիլ 23/10-ին: Նրա ըն-  
տանիքի անդամներն եյին հայրը, յերկու յեղբայրը — Ալեք-  
սանդր և Դիմիտրի Իլիչները, և յերեք քույրերը — Աննա,  
Մարիա և Ռոգա: Ռոգան 1891 թ. մեռած:

1887 թ. Վլադիմիր Իլիչը վերջացրեց Սիմբիրսկի  
Տղասյան գիմնազիան: Նույն թվին կախեցին նրա անդ-  
րանիկ յեղբայր Ալեքսանդրին - իբրև հեղափոխականի, վո-  
րը մահափորձ կատարեց Ալեքսանդր Ա կայսրի կյանքի  
դեմ: Այդ շատ խիստ աղդեց Վլադիմիր Իլիչի վրա, և նա  
սկսեց լուրջ մտահոգության առարկա դարձնել ժողովրդի  
վիճակը: Գիմնազիան ավարտելուց հետո անմիջապես մտավ  
Կազանի համալսարանի իրավաբանական ֆակուլտետը,  
բայց մի ամսից հետո «ուսանողական անկարգություն-  
ներին» ակտիվ մասնակցություն ցույց տալու պատճո-  
ռով նրան գուրս արին և աքսորեցին Կազանից վոչ այն-  
քան հեռու Կոկոչշինո յետ ընկած գյուղը: Այստեղ ել

Վլադիմիր Իլիչը չի մնում առանց գործի, նա խորանում ե Մարքսի ուսումնասիրության մեջ:

Վլադիմիր Իլիչը հայտարարություն ե տալիս, խընդրելով վոր իրեն ընդունեն համալսարան, բայց նրան վոչ միայն մերժում են ընդունել, այլ և զբկում են քննություն տալու իրավունքից: Կառավարությունը նրան արգելում ե նույնիսկ արտասահման անցնել: Միայն 1891 թ. նրան աջողվում ե քննություն տալ Լենինգրադի համալսարանում: Բայց նա չզբաղվեց իր մասնագիտությամբ, նա անընդհատ աշխատում եր մարքսիստական խմբակներում: 1893 թ. Վլադիմիր Իլիչը վերաբնակվում ե Լենինգրադում և այստեղ ամբողջովին նվիրվում ե հեղափոխական աշխատանքի: 1895 թվի ապրիլին Վլադիմիր Իլիչն անցնում ե արտասահման, այնտեղ կապ ե ստեղծում «Աշխատանքի ազատագրում» գաղտնի կազմակերպության հետ և կազմակերպում ե մարքսիստական-հեղափոխական գրականության Ռուսաստան Ռուսաստան ներմուծելու գործը:

Լենինգրադ վերադառնալուն պես նա ստեղծում ե «Բանվոր դասակարգի ազատության պայքարի միությունը»: 1896 թ. դեկտեմբերին վոստիկանությունը ձերբակալում ե անդամների մեծ մասին (վորոնց թվում և ընկ. Լենինին) և ուղարկում ե բանտ: Բանտում ել Վլադիմիր Իլիչը չի թողնում իր հեղափոխական գործունեյությունը. նա շարունակում ե հոգվածներ, զբույշիներ և անլեգալ թերթիկներ գրել: 1897 թ. փետրվարի վերջերին Վլադիմիր Իլիչին աքսորում են Սիբիր, յենիսյան նահանգի Շուշենսկոյե գյուղը: Այստեղ նույնպես նա չի ընդհատում իր աշխատանքը: Ռուս. Սոց.-Դեմ. Բան. Կուս. I համագումարը, վորը տեղի ունեցավ 1898 թ., ընտրում ե ընկ. Լենինին, իր բացակայությամբ, «Բանվորական թերթի»

պաշտոնական խմբագիր: Աքսորատեղում Վլադիմիր Իլիչը ավարտում ե իր «Կապիտալիզմի զարգացումը Ռուսաստանում» նշանավոր գիտական աշխատանքը: 1900 թ. հունվարին լրանում ե նրա աքսորի ժամանակամիջոցը և ընկ. Լենինը վերադառնում ե Լենինգրադ, ամբողջովին նվիրվում ե հեղափոխական գործին, վորի համար 3 շաբաթով ձերբակալվում ե: Սրանից հետո նա արտասահման ե անցնում և այստեղ կարգի յե բերում սոցիալ-դեմոկրատական «Խոկրա» (Կայծ) թերթը: 1903 թ. կուսակցության II համագումարին Վլադիմիր Իլիչը վճռականապես հրապարակ ե գալիս ստեղծելու հաստատուն, անսասան ու ամուր կուսակցություն: Բայց շատերը համաձայն չեյին: Տեղի յեն ունենում պառակտումներ և կատաղի վեճեր: Կուսակցությունը բաժանվում ե յերկու մասի.—մենցեմիկների (սոց.-դեմոկ.) և բոլշևիկների (կոմմունիստներ): ընկ. Լենինն անցնում ե կոմմունիստների գլուխը: Բոլոր հեղափոխական բանվորները համախմբվում են Լենինի շուրջը: 1905 թ. հեղափոխության ամենայեռուն շրջանում Վլադիմիր Իլիչը գալիս է Լենինգրադ: Բայց ամեն ինչ արդեն վերջացել եր: Հեղափոխությունը ճնշված եր: Պրոլետարիատի համար ծանր որեր եյին հասել: Ամեն կողմից ճնշում ու վիրավորանք: Բայց ընկ. Լենինը կանգնած ե անսասան իր գիրքում:

Նա կարողանում եր առաջուց նախատեսնել և խափանել չարիքը: Կուսակցության մեջ մտնում են բանվորական մասսաներ և նա անընդհատ աճում ե, աճում ու ամրապնդվում: 1907 թ. Վլադիմիր Իլիչը նորից գնում ե արտասահման:


Յեվ ահա 1917 թ. փետրվարի 6-ին բոնկեց հեղափոխությունը: Տասը տարի արտասահման մնալուց հետո Վլադիմիր Իլիչը շատապում ե Ռուսաստան:

Ապրիլի 3-ին նա գալիս և Լենինգրադ և ուժեղ թափով պատրաստում ե զինված ապատամբություն, կերենսկու ժամանակավոր կառավարությունը փորձում է վերջապահամասնականների ազիտացիային և ջախջախել նրանց:

Հնկեր Լենինը ստիպված է լինում թագնվել և գաղտնի տանել ուժեղ ազիտացիան ու պատրաստել ապստամբությունը: Նրա շուրջն արգեն համախմբվել ելին բանվորա-զյուղացիական ուժերը: 1917 թ. հոկտեմբերին բոնկեց Հոկտեմբերյան հեղափոխությունը, Վլադիմիր Լենինի ղեկավարությամբ: Հաղթությունը մնաց բանվորների կողմը: Սերը դեպի Լենինն աճում ու աճում եր: Ամեն մի պրոլետար զգում եր, վոր Լենինը Խորհրդային Ռուսաստանի շունչն ե: Յեզ Լենինին ընտրում են առաջնորդ, պատասխանատու առաջնորդ ամբողջ Ռուսաստանի:

Յեզ ահա իլիչը ղեկավարում է պրոլետարական պետությունը: Բայց թշնամիներն ել քնած չելին: 1918 թ. ոգոստոսի 30-ին աջ եւ եր-ունի կապլանը ծանր վիրավորում ե ընկ. Լենինին: Իլիչը դեռ վերքից չառողջացած, արգեն աշխատանքի յե անցնում: Իոկ այդ աշխատանքը թեթև չեր: Յեզ նա ծանրանում է իլիչի ուսերին: Նրա ղեկավարությամբ պրոլետարական Ռուսաստանը հաղթեց թշնամիներին: Յեզ միշտ նա: Միայն նա: Բայց այդ բոլորը նրան եժան չի նստում: Հսկայական աշխատանքը ջատում ե նրա ուժերը: Դեռ 1922 թվի սկզբներին նա նեղվում եր գլխացավերից: Նույն թվի ամառը հիվանդությունը նրան ուժեղ հարված է հասցնում:

Մակայն նա կովում է հիվանդության դեմ և նորից



Լենինը առանձնահետակում

աշխատանքի յե կովում: Բայց, յերկում ե, վոր արգեն շափազանց հոգնած ե:

1923 թ. նա ստանում է ևս յերկու կալված, իսկ չորրորդը՝ կտրում է նրա կյանքի թելը:

Մոնո-ի 9-րդ դարոց

### ՔՈՒՅՐԸ ՅԵԶԲՈՐ ՄԱՍԻՆ

Ամբողջ պրոլետարիատի և մեր ծանր սպի որերին ամենաերջանիկ յերեկոն ընդամենը մի քանի ժամ՝ տեսց: Իլիչի կենդանության որով մենք այսպես սպասում ելինք նրան մեզ մոտ: Մեզանից քչերն ելին տեսել նրան, բայց բոլորն ել հույս ունեցին տեսնել ու լսել:

Զվիճակվեց: Իլիչը չկա: Թեև նա մեր մեջ է, բայց  
նա այլևս չկառ ու չի լինի...

Յեղ ահա այդ յերեկոյան տեսանք մենք նրան, ով  
ապրել է նրա հետ, ով իր մանկության որերին խաղա-  
ցել է նրա հետ, ով հետեւ է նրա ամբողջ հեղափոխական  
աշխատանքին:

Նրա քույրն եւ Դիտում ենք նրա դեմքը ուշադրու-  
թյամբ, անթարթ: Աշխատում ենք մի ինչ-վոր հարազատ  
բան տեսնել, և գտանք: Գտանք աչքերի ծալվածքում, շըր-  
թունքներում, ամբողջ դեմքի վրա այն գծերը, վորոնց  
մենք վարժվել ենք Իլիչի նկարների միջոցով: Նայում  
ելինք քրոջը, բայց նրանում փնտում եյինք Իլիչին:

Նա խոսում եր հեղափոխական յեղբոր մասին, առաջ-  
նորդի մասին...

Նա խոսում եր իր փոքրիկ յեղբոր՝ Վալովյայի մա-  
սին, վորի հետ միասին խաղացել եմանկության որերին...

— Դե, ահա, խշխացին, կասես ծառերի տերեւներ  
լինեն, — ասանց նա, ժպտալով մեր այնպես շտապով  
թուղթ ու մատիտ պատրաստելու վրա:

Մենք աշխատում ենք բաց չթողնել մի հատիկ խոսք,  
լսում ենք ու գրում:

Առանց շտապելու, պարզ պատմում ե նա իր Վալյո-  
դյա Լենին յեղբոր մասին:

— Ահա նա, կասես կենդանի լինի: Նա գեռ միայն ինը  
տարեկան եւ: Զարածիճի, կայտառ, Պատահում եր յերե-  
մըն, մեծ քույրերն ու յեղբայրները պարապում են, իսկ  
փոքրիկ Վալովյան խանգարում ե նրանց: Հայրս կանչում  
ե նրան իր առանձնասենյակը և հարցնում:

— Ետ ինչու դու դասերդ չես սովորում...

— Իսկ յես բոլորը գիտեմ, — վստահ պատասխան ե  
տալիս Վալովյան:

Հայրս սկսում ե նրան հարցնել, իսկ Վալովյան ջրի  
նման պատասխանում ե բոլորը: Հայրս, վորպեսզի ավելի  
յերկար պահի, սկսում ե հինն ել հարցնել: Վալովյան  
հինն ել գիտե: Խելոք, ընդունակ տղա յեր Վալովյան:



Ն. Վ. Վավիլով

Դպրոցում նա ուշադիր եր, և պարապմունքները հեշտ ե-  
լին նրա համար: Վալովյան հաճախ իր Ոլյա քրոջ աշ-  
խատունակությանը նախանձում եր: Ոլյան դաշնամուր  
եր նվագում: Յերաժշտության մեջ մեծ ընդունակու-

թյուններ, չուներ, բայց նա ամենը աշխատանքով եր ձեռք բերում: Շատ անգամ Վալոդյան նստում եր նրա կողքին և յերկար նայում:

— Նախանձելի յե, ձիշտն ասած, այսպիսի աշխատունակությունը, ասում եր նա:

Վալոդյայի լավ կողմերից մեկը նրա շիտակությունն եր: Թե խաղալիք կոտրելիս (նա սիրում եր կոտրել խաղալիքներ, ուզում եր իմանալինչ ե գոնվում «մեջը»), թե քանոն կոտրելիս կը գար, ցույց կը տար.— «Յես կոտրեցի»...

Ինը տարեկան հասակում Վալոդյան գիմնազիա մըտավ և վոսկե մեղալով ավարտեց: Վերջին դասարանում յեղած ժամանակ նա (այդ ժամանակ 17 տարեկան եր) մի ուսուցչի, վորը մեծ ընտանիք ունենալու պատճառով հնարավորություն չուներ սովորելու, պատրաստեց համալսարանի համար:

Վալոդյան համալսարան մտավ, բայց շուտով ազատամության համար նրան արձակեցին և վոչ մի տեղ չընդունեցին: Վլադիմիր Իլիչը մենակ պատրաստվեց և 1891 թվին ավարտեց համալսարանը:

Սոցիալիստական աշխարհահայացք նրա մեջ Մարքսի ուսմունքը մշակեց: Նա շատ ու յերկար եր կարդում Մարքսի գրքերը: Քսան տարեկան հասակից նա ինքը ըսկըց գրվածքներ տալ:

Շատ եր հարգում Վալոդյան իր մեծ յեղբայր Ալեքսանդրին: Ինչպես ձեզ հայտնի յե, Ալեքսանդրը հեղափոխական աշխատանքի համար մահվան դատապարտվեց: Յեզ Սաշան Վալոդյայի համար հեղինակություն եր: Մանկության որերից, նախքան մի վորեե բան անելլ, Վալոդյան հարցնում ու հայտարարում եր: — «Ինչպես Սաշան»:

1895 թվին Վլադիմիր Իլիչը ձերբակալվեց: Նույնիսկ բանտում նստած, նա շարունակում եր ուսումնասիրել

Մարքսը և ուրիշ սոցիալիստների: Նա մինչև այն աստիճան եր գրավվել Մարքսի ուսումնասիրությամբ, վոր յերբ մի անգամ նրա մոտ բանա եր յեկել քույրն ու ասել, թե շուտով նրան բաց են թողնելու, նա կատակով պատասխանել եր

Ինչու այդպես շուտ: Յես դեռ պատրաստ չեմ, դեռ բոլոր նյութերը չեմ հավաքել...



Քննանիքում յեզ բույր-յեղբայրների հետ: Լենինը գիմնազիատ հագուստով: Ծննդների յետեվք կանգնած ե նրա յեղբայր Սահենանդը:

Յեզ Իլիչը հավաքում եր... Ի մի յեր հավաքում կուսակցությունը, կազմակերպում բանվորներին: Այս յեղավ նրա գործը ամբողջ կյանի ընթացքում: Յեզ նա իգուր չվատնեց իր ույժերը: Նա թողեց իրենից հետո իր

կուսակցության շուրջն ամուր կազմակերպված բանվորություն ու գյուղացիություն:

Շատ աշխատեց Վաղիմի իլիչը: Նրա աշխատունակությունը ապշեցուցիչ եր: Նա չխնայեց իր ույժերը: Հաճախ ընկերները ցույց ելին տալիս նրան իր ծանը աշխատանքը: Իսկ նա ինքը յերբեք ծանր աշխատանքի համար չեր գանգատվում, այլ բոլորը ծածկում եր մարդկանցից: Բայց այդպիսի սաստիկ աշխատանքները ջլատեցին նրա ույժերը...

Եյս ըռպելիս չկա նա: Զկա մեծ գիտնականը և մշտածողը, չկա ընկերը և առաջնորդը:

Բայց նրա ջանքերը ի զուր չեն կոչի: Նրա հարազատ դուսարը—Ռ. Կ. Կ. կավարտի նրա սկսած գործը:

Լյուցյա, Կիմ յեվ Լյուդյա

## Վ. Ի. Լենինի ՄԱՆԿՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԸ

Իլիչի մանկության տարիները կոկուշինո գյուղում, պյուղացիների պատմածի համաձայն, անց են կացել շատ ազատ պայմանների մեջ:

Ուլիանովների ընտանիքում աղայական տների սովորություններից վոչ մեկը չեր գործադրվում. Իլիչի հայրը հասարակ ձեռվ գնում եր գյուղացիների մոտ, իսկ այս վերջիններն ել գալիս ելին նրա մոտ ոգնություն ու խորհուրդներ ստանալու: Մայրը ձրի գեղորայք եր բաժանում գյուղացիներին և կարծես մի տեսակ կիսաբժշկուհու համարում ուներ նրանց մոտ: Վալորյան ել հաճախ գլուխում եր գյուղ, վորտեղ ձեռք եր բերել իրեն համար մանկության մտերիմ ընկերներ:

Վալորյան հաճախ քաղաքից գույնզգուն կոճիներ եր բերում ու խաղեր սարքում: Խաղի ժամանակ նա ոգտարվում եր չուգունե կոճիով և մյուս փոքրիկների ջգրուշատ քիչ անգամ եր տանուլ տալիս:

Կոճի խաղալուց զատ, նա առանձնապես սիրում եր նետաղեղ: Իր պատրաստած այս նետաղեղով գնում եր հեռու դաշտերը, կամ «Պովարնի» աղբյուրը, և աշխատում եր այստեղ կտցարներ վորսալ, ինչպես այդ անում ելին գյուղական բոլոր յերեխաները:

Գնում եր գիշերա-արոտի: Չիերի արոտաեղը գտընվում եր անտառի անկյուններից մեկի մի հրաշալի մարդագետնում, գյուղից 3—4 վերստ հեռավորության վրա: Գիշերա-արոտը գյուղական կենցաղի ամենահիանալի կողմերից մեկն է կազմում:

Գիշերա-արոտ գնալով, յերեխաներն իրենք իրենց աչքում մեծանում են: Այստեղ նրանք ազատ են: Յեվյերկյուղալի յեր, և՛ ուրախալի: Գիշերը անտառի վրա փայլվող աստղերի տակ—հերիաթները, ծիծաղը, չարաձձիությունները և հանաքնները, ստվերները և «սարսափելի» հերիաթների ու յերազների անտառային ուրվականները, գիշերային խորին լուսության մեջ ձիերի վրնջյունը գիշերա-արոտը անտառում դարձնում ելին չափաղանց գրավիչ: Յեվյալորյան, վոր սիրում եր բնությունը իր գրքի չափ, այնպես եր տարվում «անտառի խորքերը» զբոսանքներ այնպես եր ցանկությամբ, վոր հանդուգն վեճերի յեր կատարելու ցանկությամբ, վոր հանդուգն մեջ եր բերում իրենից մեծերի հետ, մեջ եր բերում իր ամբողջ բոնվում իրենից մեծերի հետ, մեջ եր բերում իր ամբողջ ճարտարախոսությունն ու անկեղծությունը, միայն թե կարողանար համոզել նրանց, վոր իրեն ել տանեն գիշերա-արոտի:

— Ինձ ել տարեք գիշերա-արոտի: Յես բոլորիդ հա-

մար պատրաստել եմ թեյ, շաքար: Խարույկ կը վառեմ,  
փայտ կը կուրատեմ:

Բայց մեծերն ասում եյին նրան.

— Վոչ, վոչ, Վալոդյա: Դու փոքր ես: Անտառում  
գայլեր ու արջեր են ապրում: Այնտեղ վհուկը փոքրերին  
գողանում է, մենք քեզ ի՞նչպես տանենք:

Վալոդյան իր ամբողջ քաջությունն ի մի յեր հավա-  
քում և նրանց հետքը բռնած գնում եր գիշերա-արոտի:

Կառապան Ֆեկին Յակով Դիմիտրիկը (Անայնկա-  
գյուղացի) հիշում ե Վալոդյային, յերբ սա 2—3 տա-  
րեկան եր: Ֆեկինը նրան իր կառքն եր նստեցնում ու  
քաղաք տանում: Հիշում ե նաև մեծին՝ Ալեքսանդրին:  
Կոկուշկինից մինչև կառապանների գյուղը յերեք քառորդ  
վերստ եր: Մանուկները մեկը մյուսին առաջ տալով վա-  
զում եյին նրա մոտ, յերբ հարկավոր եր լինում քաղաք  
գնալ: Յերիտասարդ, ամրակազմ Ֆեկինը, ինչպես ճռ-  
տիկների, ձեռների վրա յեր տանում նրանց: Տղաները  
շտապեցնում եյին նրան, միասին լծում ձիերը և չարա-  
ճըճիները հանդիսավոր կերպով քշում եյին ձիերը դեպի  
Արտաշեների տունը, ուր ապրում եղ Ուլիանովների ամ-  
բողջ ընտանիքը:

— Կայտառ եյին յերկումն ել,—պատմում ե դեռ ևս  
կենդանի, բայց արդեն ձյունի նման սպիտակ ծերունի  
Ֆեկինը:—Վալոդյան ավելի ճարպիկ ու ժիր եր Ալեք-  
սանդրից: Գուցե այդ նրանից եր, վոր Ալեքսանդրն ար-  
դեն խելահաս եր դառել:

Յերիտասարդ Ուլիանովները գյուղի պատանիներին  
մասնակից եյին անում իրենց բոլոր ուրախություններին:

Գյուղի պատանիներն իրենց «բարձրաստիճան» բարե-  
կամների և հովանավորողների շնորհիվ զիտեյին և ճաշա-  
կել եյին քաղաքի բոլոր համեղ բաները: Գյուղի համար

կատարյալ տոն եր լինում ամեն անգամ, յերբ Ուլյանով-  
ները գալիս եյին քաղաքից: Գյուղական յերեխաներին բա-  
ժանում եյին հասարակ քաղցրավենիներ: Վալոդյան ու  
Ալեքսանդրը պահում եյին իրենց վորպես «հերոսներ»,  
պաշտպաններ նրանց մանկական շահերի: Հետո արդեն,  
յերբ Ուլյանովներին դժբախտություն դժբախտության յե-  
տեկից հասավ, տղաների բարեկամներն ու ընկերները  
ցելով, ով ինչպես կարողանում եր, արտահայտում եր իր  
կարեկցությունը դեպի այդ ընտանիքը:

Մանուկ Լենինը թարմ մնաց կոկուշկինո գյուղացի-  
ների հիշողության մեջ: Յերբ նրանց ցույց տվին 1887 թ.  
«Հեղափոխության ճանապարհներ» թերթի յերկրորդ հա-  
մարը, վորի մեջ կար Լենինի նկարը, նրանը իսկույն ճա-  
նաչեցին:

— Ի՞նչպես չճանաչել, ահա նա դպրոցական տարա-  
գով. պարզ բան ե, վոր նա յե: Կարծես հենց ես բոպեյիս  
կենդանի կանգնած ե աչքիդ առաջ:

Մարիա Աբբակումովան, Վասիլիսա Ալեքսանդրովնան,  
Ֆեկին Յակովը, — սրանք բոլորն ել շատ լավ ճանաչում  
են Ուլյանովների ամբողջ ընտանիքը:

## ԻԼԻՇԻ ԾՆՆԴԱՎԱՅՐՈՒԹՅ

— Մենք շատ մոտիկ բարեկամներ եյինք Վալոդյայիր  
հետ, — պատմում ե ամբողջապես կնճիռներով ծածկված  
նեփեղեվը: Ուլյանովների տան կից կար մի մեծ  
գրաշար նեփեղեվը: Ուլյանովների բնակարան: Յես բացի մո-  
այգի, իսկ այգու մեջ փոքրիկ բնակարան: Յես բացի մո-  
այգի, իսկ այգու մեջ փոքրիկ բնակարան: Յես բացի մո-  
այգի, իսկ այգու մեջ փոքրիկ բնակարան: Յես բացի մո-

հասակակից եյի: Մենք յերկուսս ել սովորում եյինք, նաև դիմագիայում, յես՝ ժողովրդական դպրոցում: Շատ շուտ մտերմացնք: Դրա համար ել մեզ «անբաժաններ» եյին անվանում...

Հիշում եմ ահա փխրուն մանուկին, իր հասակից փոքրը յերեացող, ժիր, չարաձճի, բայց միշտ անկեղծ, ազնիվ, խելոք ու խոհուն:

Նա շուտով իմ ուսուցիչը դառափ: Վորտեղ իմ խելքը չեր կտրում, Վալողյան ողնության եր հասնում: Ե, իսկ յես ել լավ ուղեցույց եյի: Դե ինձնից ավելի աջող վոչ վոք չկար, վոր Սվյագայում լողանալու լավ տեղեր ընտրեր, ինձանից ավելի լավ վոչ վոք չգիտեր վորտեղ և ինչպես ձուկ վորսալ: Վալողյան միայն ինձ հետ եր միշտ լողանում ու ձուկ վորսում: Ինձ հետ եր շինում սառցային լեռներ, սահնակներ և հեսց ինձ հետ ել թուչնորսության գնում:

Վալողյան թոշունների մե-էծ սիրահար եր: Այդ հողի վրա մեր մեջ մի անգամ ընդհարում տեղի ունեցափ: Մի ինչ-վոր թունակ իրար մեջ չկարողացանք բաժանել: Կովի բռնվեցինք մարաքի զլիխն, և վերջացավ նրանով, վոր յես Վալողյային ցած գլորեցի մարաքից: Ճիշտ ե, Վալողյան չվասավեց: Մենք շուտով հաշտվեցինք, ավելի շուտ քան մորիցս զնգսոց սահնալը: Հիշում եմ, իլյա Նիկոլայեիչին շատ մոտ եյին հայտնի չուփաշ մանկավարժ իվան Յակովլիկիչ Յակովլիկը (այժմ զնացել և Մոսկվա) և իր տարրինակություններով ամբողջ Սիմբիրսկին հայտնի յերգեցողության ուսուցիչ կոնստանտին Անդրեյկիչ Մատորինը: Մատորինը մեր մանկական չարությունների սիրելի առարկան եր: Հիշում եմ, ամեն գալուն Մատորինի վերարկի զրապանից դուրս եր ցցված լինում ֆրանսիական բուլկի: Մի անգամ յես բուլկին զրապանից հանեցի և թագ-

ցրի: Մատորինը գանգատվեց իլյա Նիկոլայեիչին և ինձ մեծ անախորժություն եր սպառնում, բայց Վալողյան բոլորն իր վրա ընդունեց: Այսինքն, դա մի յեզակի դեպք չեր: Վալողյան միշտ ել հանցանքը իր վրա յեր վերցնում, յեթե վորեւ չարաճիճության մասին աեղեկություն եր ունենում:

1885 թ. յես Վալողյայի հետքը կորցրի: Դեռ մանուկ հասակից կարեքը մղեց ինձ տպարան, աշխատում եյի ամբողջ որը, 14 ժամ:

## ՀԻՆ ԲԱՆՎՈՐԻ ՀԻՃՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԻԼԻԶԻ ՄԱՍԻՆ

Ցինդել Փաբրիկայի բանվորների ժողովին հին բանվոր Սուվորվ պատմում ե.

— Այդ վաղուց ե պատահել: Յես 23 տարեկան եյի, աշխատում եյի Պիտերում: Պետերհոփի մոտի մասսայական ժողովի ժամանակ առաջին անգամ տեսա լենինին:

Այն ժամանակները մենք փոքր հարցեր ունեյինք. մեզ հուզում եյին գործատերերի մանրիկ բժանանդրությունները: Մենք խոսում եյինք այն մասին, թե ինչպես բարձրացնենք աշխատավարձը և զոնե մի փոքր բարեկավենք մեր զրությունը ֆաբրիկաներում և գործարաններում: Իսկ լենինը մեզ պատասխանեց.

— Միմիայն այն ժամանակ, յերբ վոր կը տապալենք ցարական իշխանությունը, հնարավոր կը լինի բարեկավել բանվորի գրությունը: Յեվ միմիայն այն ժամանակ, յերբ բանվորները պինդ ու ամուր կը կազմակերպվեն իրենց թշնամի կալվածատերերի և կապիտալիստների դեմ:

Խոսում եր նա պարզ, հասկանալի, և մենք սիրում եյինք նրան:

Այդ՝ գարնանն եր: Մենք այն ժամանակ ժողովվել ելինք ջրով լիքը մեծ ու խորը խանդակի շուրջը: Հանկարծակի վրա տվեց վոստիկանությունը, — մենք ցրվեցինք զանազան կողմեր:

Տեսանք, Լենինի յետեկց վազում ե մի վոստիկան սուլիչը ձեռին: Այն ժամանակ բանվոր Ֆոմինը մի հարվածով ցած զլորեց վոստիկանին, իլեց սուլիչը, իրեն ել հրեց ու զցեց խանդակի մեջ: Մինչ նա թփրտում եր այնտեղ, մենք փախանք անտառ, այնտեղից ել թեյատուն:

## ՊԱՐԱԿԱՆԵՐ, ՎՈՐՈԽՑ ՄԵԶ ԱՃԽԱՏԵԼ Ե ԸՆԿ. ԼԵՆԻՆԾ

Մինչև 1908 թվականը բոլորովին չեյի յեղել Լենինի բնակարանում, յեթե հաշվի չառնենք 1906 թվի այցելությունը, յերբ նա ապրում եր Կունկալայում (Ֆինլանդիա): Բայց այնտեղ միշտ ել շատ մարդ եր լինում և մենք այնտեղ գործով եյինք գնում մեկ-յերկու ժամով:


Առաջին անգամ ընկեր Լենինի մոտ իր բնակարանում յեղա Փընկում (Շվեյցարիա) 1908 թվի աշնանը: Յես յեկա Ռուսաստանից սեպտեմբեր ամսին: Կայարանում դիմավորեց ինձ Նադեժդա Կոնստանտինովնան և տուն տարավ իրենց մոտ: Ինձ ներս տարան յերկու սեպտեմբերից և խոհանոցից բաղկացած շվեյցարական մի փոքրիկ բնակարան: Մի փոքր ավելի մեծ սենյակում ապրում եմ ին Վլադիմիր Իլիչը և Նադեժդա Կոնստանտինովնան, միշտ սեպտեմբերից կենում եր Նադեժդա Կոնստանտինովնայի մայրը: Նադեժդա Կոնստանտինովնան և նրա մայրը տանտիկնություն եյին անում, իրենք եյին կերակուր պատրաստում: Ճաշում եյին բոլորը միասին խոհանոցում:

Վլադիմիր Իլիչը որվա մեծ մասն անց եր կացնում գրադարանում և բոլեկիկական «Պրոլետար» թերթի խըմբագրատանը: Հետագայում, յերբ մենք — Զինովիել և յես ընակարան վարձեցինք, ընկեր Լենինը յերեկոները մեզ մոտ թերթ կարգալով եր անց կացնում:

1908 թվի գեկտեմբերին մենք տեղափոխվեցինք Փարիզ: Այստեղ ել «Իլիչները» (այսպես եյինք մենք կոճառված անվանում նրանց) ապրում եյին նույնափիսի համեստ և նույնափիսի մինիատյուր բնակարանում, վորը գտնվում եր Մարի-Ռոզ փողոցի վրա: Վլադիմիր Իլիչը որվա մեծ մասը անց եր կացնում գրադարանում: Տանը նա յերեկոներն եր աշխատում: Հազվագյուտ գեպքերում եր ընդհատում Վլադիմիր Իլիչը իր սովորական պարապմունքները, այն ել մի-Լենինը գիմնազիան ավարտելու տարին միայն գործի համար ու զեկուցման, ժողովի կամ գործերի մասին ընկերների հետ զրուցելիս:

Վլադիմիր Իլիչը թատրոն համարյա թե չեր գնում: Յեթե աջողվում եր նրան ազատ բուպե ունենալ, գնում եր զբոսանքի գլխավորապես քաղաքից գուրս: Վլադիմիր Իլիչը շատ եր սիրում սունկ հավաքել:

1911 թվի ամառը մենք բոլորս միասին Փարիզի մոտիկ Լոնդոնու փոքրիկ դյուղում՝ անցկացրինք, վորտեղ



հիմնվել եր բոլշևիկական կուսակցական դպրոց, Վլադիմիր Իլյչը շաբաթվա մեջ 6 ոլ աշխատում եր, առանց մի ըոպե դադար տալու իրեն։ Սակայն դրա փոխարեն շաբաթվա մեջ մի որ, բայց վոչ յերբեք կիրակի որերը, յերբ, նրա ասելով, զբոսնողների միջով անցնելն անգամ հնարավոր չեր լինում, հանգստանում եր լիովին։ Մենք այն ժամանակ չորս՝ Վլադիմիր Իլյչը, Նադեժդա Կոնստանտինովան, Զինովիևը և յես նստում եյինք վելուիպեղ և գնում եյինք քաղաքից դուրս առավոտվա ժամը 6-ից մինչև յերեկոյան ժամը 10—11-ը, Վլադիմիր Իլյչի դրած պայմանն եր, այդպիսի դեպքերում,—վոչ մի խոսք քաղաքականության մասին։

Առաջին անգամ, յերբ մենք գնացինք, այդ ինձ տարորինակ եր թվում. յեթե քաղաքական հարցերի մասին չի կարելի խոսել, հապա ինչի մասին պիտի խոսեյինք։ Բանից յերեաց, վոր Վլադիմիր Իլյչի հետ կարելի յեր շատ բաների մասին խոսել, առանց քաղաքական հարցեր շոշափելու։ Վլադիմիր Իլյչը հրաշալի վելուիպեկիստ եր։ Ճանապարհին նա ուշադրությամբ հետևում եր Նադեժդա Կոնստանտինովային և ինձ ու հաճախ մեզ քաշում եր իր վելուիպեղի յետեկից։

1912 թվի գարնան տեղափոխվեցինք Կրակով, յերբ Պետրոգրադում սկսվեց հրատարակվել բոլշևիկական «Պրավդա» ամենօրյա թերթը։ Սկզբում մենք ընկեր Լենինի հետ տեղափորկեցինք մի բնակարանում։ Նրանք ու մենք յերկուական սենյակ եյինք բռնել, բայց բոլորս միասին եյինք ճաշում խոհանոցում։ Հետագայում մենք իրար կից աներում եյինք ապրում։ Վլադիմիր Իլյչը սովորաբար առավոտյան ժամը 9-ին եր վեր կենում և պարապում եր մինչև պոստ ստանալը։ Պոստը գալիս եր ժամը 12-ին։ Պոստի ընթերցանության բոլորս միասին եյինք հավաք-

վում։ Այստեղ քննության եյին առնվում այն բոլոր գործերը, վորոնք կապ ունեյին Ռուսաստանից յեկած տեղեկությունների հետ։ «Պրավդա»-ի հաջորդ համար պատրաստվելիք հոդվածները բաժանում եյինք մեր մեջ, ապա ճաշում եյինք (թե ճաշին և թե ընթրիքին շարունակ նույն կերակուրն եր՝ սուպ և կոտետ), և այնուհետև ամեն մեկն իր սենյակն եր առանձնանում։ Վլադիմիր Իլյչը հանգստանում եր ու պարապում, իր սենյակից գուրս չեր գալիս մինչև յերեկոյան ժամը 9-ը։ Յերեկոյան ժամը 9-ին Վլադիմիր Իլյչը ինքն անձամբ հավաքում եր հոդվածները Ռուսաստան ուղարկելու համար։ Առաջինը միշտ նա յեր պատրաստ լինում և ինքն եր պոստը տանում կայարան։ Վլադիմիր Իլյչը կրակովից «Պրավդա»-ին ուղարկվելիք բոլոր հոդվածները մեկ-մեկ նայում եր։ Նա դարձիվ առիթը ձեռքից չեր թողնում գովել մեկին իր աջող աշխատանքի համար։

Վլադիմիր Իլյչը ժամանակ եր գտնում, ապրելով Կրակովում, Ռուսաստանի սահմանագլխին, զբաղվել անմիջականորեն Ռուսաստանի գործերով, ձմեռը շաբաթը մեկ յերկու անգամ ել գնալ սառուցների վրա սահելու։

Ամառը, —յերկու ամառիրար յետեկից, —ապրում եյինք մենք կրակովի մոտիկ Պորոնինո գյուղում։ Գնում եյինք այստեղ մայիսից և վերադառնում սեպտեմբերին։ Այստեղ լենինները անփոփոխ յերկու սենյակ ու խոհանոց ունել լենինները անփոփոխ յերկու սենյակ ու խոհանոց ունեյին զյուղական խրճիթում։ Այստեղ ել — անխոնջ ու տոկուն աշխատանք շաբաթվա յոթ որվա ընթացքում։ Նրա զբոսանքը լինում եր փոստ գնալը և մեզ այցելելը։ Մենք պատրաստին մոտիկ եյինք —ապրում։ Յերբեմն ավելի յերկարագություն պատրաստում եր անտառ գնալը սունկի, շատ բատե զբոսանքը լինում եր պարբռում — ընդամենը մեկ յերկու անգամ հազվագյուտ դեպքերում — լեռները։

Անխոնջ եր Վլադիմիր Իլիչը: Նա կարող եր, առանց ընդհատման աշխատել ժամեր ու որեր: Վլադիմիր Իլիչը հսկայական նշանակություն եր տալիս թվերին, ստատիստիկային: Հիշում եմ, ինչպես Վլադիմիր Իլիչը ինքը զբաղվեց կուսակցության կազմը վորոշելով՝ հիմնվելով կոպեկային ամսավճարների վրա, վորը մացնում եյին բանվորները «Պրավդայի» «Յերկաթյա ֆոնդը»: Թվերը կենդանանում եյին Վլադիմիր Իլիչի վերամշակած աշխատանքների մեջ: Նրանք վերածվում եյին կուսակցական անդամների, համակրողների, թերթի ընթերցողների, նրանք համախմբվում եյին խմբակների մեջ, նրանք իրենցից ներկայացնում եյին բանվոր դասակարգի գիտակից մասը, նրա առաջամարտիկը: Վլադիմիր Իլիչը ամեն մի գործ հասցնում եր վախճանի: Նա չեր ցըվում, այլ միշտ կենտրոնացնում եր իր մաքերը ուսումնասիրելիք հարցի շուրջը: Մի բան, վոր չեր կարողանում տանել Վլադիմիր Իլիչը, —այդ աղմուկն եր: Յերբ վոր աշխատում եր Վլադիմիր Իլիչը, շուրջը բացարձակ լուսվածյուն եր թագավորում: Մենք բոլորս զիտեյինք Իլիչի այս առանձնահատուկ կողմը և ամեն կերպ պահպանում եյինք նրա հանգիստը: Այդ գիտեր նույնպես փոքրիկ Ստյոպան, Վլադիմիր Իլիչի սիրելին: Նա ել, պատահում եր, ձայնը կտրում եր, յերբ իմանում եր, վոր Վալորյան գրում ե: Բայց դրա փոխարեն, հենց վոր Վալորյան վերջացնում եր գրելը, Ստյոպան ու Վլադիմիր Իլիչը զգալ եյին տալիս իրենց գոյությունը: Այդ ժամանակ տունը ամբողջովին տակն ու վրա յեր լինում:

Յերնում, իսկ հետո Յյուրիիսում, ուր ապրում եր ընկ. Լենինը 1914—1917 թվականներին նաղեժդա կոնստանտինովնայի մոր մահից հետո, Լենիններն ապրում եյին մի. այն մի սենյակում, առանց խոհանոցի: Այդ մի սենյակում

ապրում ու աշխատում եյին յերկուսը միասին այն ժամերին, յերբ փակված եր լինում հասարակական գրադարաննը:

Զ. Լիլինա

## ԼԵՆԻՆԸ, ՎՈՐՓԵՍ ՄԱՐԴ

Բուրժուազիան իր գրվածքներում Լենինին ներկայացրել ե վորպես դաժան, չոր, անողոք մի մարդ: Վորքանքիչ եյին ճանաչում բուրժուական զրողներն ընկեր Լենինին: Վլադիմիր Իլիչն անինա, անողոք եր բուրժուազիայի և բոլոր յերկրների սոցիալ-դավաճանների վերաբերմամբ: Բայց ինչպիսի ջերմ սիրով եր սիրում Վլադիմիր Իլիչը բանվոր դասակարգին և ամեն մի բանվորի առանձնապես վերցրած: Ի՞նչպես ամբողջովին բացվում եր նա, ինչպես կուսակցական աճող յերիտասարդության ընդառաջ եր գնում: Նա յերբեք չեր հոգնում պարզել ու բացատրել ամեն մի ընկերոջն առանձին-առանձին, ինչ վոր նրան մենակ դժվար ե եղել հասկանալ: Բավական եր միայն հայտնել Վլադիմիր Իլիչին.—յես չեմ հասկանում, ոգնեցեք պարզաբանելու, —և Վլադիմիր Իլիչը այնքան եր բացատրում, պարզում, մինչև վոր բոլոր մութ կետերը պարզ ու հասկանալի եյին դառնում:

Յերիտասարդությունը գիտեր ու գնահատում եր Վլադիմիր Իլիչի բնակության այդ գիծը, և յերբեմն նույնիսկ ի չարն եր գործ գնում: Մտնել Վլադիմիր Իլիչի մոտ, հարց տալու կամ խորհուրդ հարցնելու համար, հասարակից ել հասարակ բան եր: Իմ միտս և հետեւյալ դեպքը: Ընկերներ Զինովիևը, Վլադիմիրովը և Ստավրովին Բերնից Ժընկ ուղևորվեցին ծանոթանալու Պլեխանովի և

Լենինի հետո։ Նրանք յերեքն ել հետո նկարագրում։ Եյին այս յերկու տեսակցությունը։ Պլեխանովի մոտ նրանց ընդունում են հյուրասենյակում և մատնաշափ մեծության դավաթներով սուրճ են հրամցնում։ Հիշում եմ, ընկեր Ստավուկին ասում եր ինձ։ «Յեվ սարսափելի յեր ինձ—բանվորիս—նստել փխրուն աթոռակի վրա և ձեռք տալ պստիկ գավաթին»։ Իսկ ընկեր Պլեխանովը, ասում եյին նրանք, մեզ շարունակ սովորեցնում եր ու սովորեցնում։ Իսկ յերբ մենք ընկեր Լենինի մոտ յեկանք, մեզ տարան ներս, լենինի մոտ։ Յերկար ժամանակ նա մեզ հետ զրույց եր անում, իսկ հետո հրավիրեց թեյ խմելու։ Նա մեզ խոհանոց տարափ։ Այնտեղ սեղանին դրած եր թեյնոցը յեռացրած ջրով, գավթաներ, հաց, կարագ, թեյը լցնում եր նաղեժդա կոնստանտինովսան։ Մեր մեջ կենդանի խոսակցություն եր սկսվել Ռուսաստանի անց ու դարձի և կուսակցական գործերի մասին։ Չեյինք ուզում իլիչի մոտից հեռանալ, — հայտնեցին ինձ յերեքն ել։

Վլադիմիր իլիչը միշտ ել զարմանալի չափով ուշադիր եր դեպի «տատիկը» — դեպի նաղեժդա կոնստանտինովսայի մայրը, և առանձնապես դեպի նաղեժդա կոնստանտինովսան։ Յերբ հիվանդացել եր նաղեժդա կոնստանտինովսան, Վլադիմիր իլիչն ինքն եր վառում վառարանը, ոգնում եր տատիկին տանտիկության մեջ և աշխատում եր, վորքան հարավոր ե, ազատել նաղեժդա կոնստանտինովսային ցավ ու հոգսերից։

Վլադիմիր իլիչն ուր ել վոր գնար, մտցնում եր աշխատություն և ուրախություն։ Յես յերբեք չեմ տեսել Վլադիմիր իլիչին լքված, ընկճված վիճակում։ Յերբ Վլադիմիր իլիչը լոռում եր, կենտրոնանում իր մեջ, այդ ժամանակ մենք իմանում եյինք, վոր նա վճռում ենոր, բարդ պրոբլեմներ։ Բայց խնդիրն արդեն լուծված ե, ճանապարհը վո-

րոշված, և Վլադիմիր իլիչը նորից ահա սիրում ե հանաքներ անել ու ձեռք առնել մեզ՝ յերիտասարդներիս։ Բայց այդ միշտ ել այնպիսի ձեռվ եր անում, վոր վոչ միայն չեյինք վիրավորվում, այլ նրա հետ միասին ծիծառ դիմադրից թուլանում եյինք։

Վլադիմիր իլիչը հետ հեշտ ու ուրախալի յեր աշխատելը։ Կրակովում 1912—14 թվի ըրջանում ինձ հանձնարարված եր Ռուսաստանի համար գաղանի զրականություն ուղարկելու գործը ղեկավարել։ Այդպիսի աշխատանքի մեջ հաճախակի պատահում են անաջողություններ, տապալումներ։ Ամեն մի տապալումից հետո կասես թե մեռած լինես։

— Հը, ի՞նչ ե, նորից բոլոր հարևաններիցդ դժգան եք (իլիչի դարձվածքն եր), — հարցնում ե իլիչը։

— Այն, վատ ե։ Նորից անաջողություն։ Զգիտեմ ինչ անել։

— Դե դուք ել սկսեցեք ելի սկզբից, այս անգամ հավանորեն ամեն բան աջող կանցնի, — սովորաբար զվարթ պատասխանում եր ընկեր Լենինը։

Յեվ մենք սկսում եյինք սկզբից և նորից աշխատում, վորովհետեւ գիտեյինք, վոր Վլադիմիր իլիչը հետաքրքրվում է Ռուսաստան մացրած ամեն մի թերթով ու գրքույկով։

Կրակովում մենք հաճախ նստած եյինք մնում առանց վողի։ Գալիս և Վլադիմիր իլիչը, տեսնում ե, վոր քիթս կախած ե։

— Ի՞նչ ե պատահել։

— Այ, տեսնում եք, Վլադիմիր իլիչ, վոր չկա, ի՞նչ պես աշխատենք։

— Յեվ դուք պլուխներդ կախել եք։ Փողը ձեղ ե ման գալիս, դուք վողին։ Փող կը լինի։

— Վորանեղից։

— Միւնույն չե՛: Դուք առայժմ աշխատեցեք:  
Յեվ մենք այսուհետեւ աշխատում եյինք, վորովհետեւ  
իլիչը մեղ աշխուժություն եր ներշնչում:

✓ Զ. Լիլինա

## ԼԵՆԻՆՆ ՈՒ ՅԵՐԵԽԱՆԵՐԸ

Հնկեր Լենինը, վոր յերբեք ինքը յերեխաներ չունեցավ, ջերմ սիրում եր յերեխաներ: Ինձ նադեժդա կոնստանտինովսան պատմում եր, թե ինչպես իլիչը աքսորատեղում կապվել եր Միշային,—իր ընկերներից մեկի յերեխային, և ինչպես ծանր ազգեց նրա վրա, յերբ հայրը մերժեց յերեխային տալ Լենինին, յերբ վոր նրանք պիտի աքսորից վերադառնային: Ինձ վիճակվեց դիտել Վլադիմիր իլիչի սերը դեպի իմ փոքրիկ վորդի Սայոպան: Յերբ Սայոպան ծնվեց, Վլադիմիր իլիչը յերկար դիտում եր նըրան և հարցնում՝ ինչու յե լալիս: Յերբ Սայոպան սկսեց մեծանալ, ման զալ և խոսել, նրա և Վլադիմիր իլիչի միջև մի ամուր կապ ստեղծվեց: Վլադիմիր իլիչն աշխուժ, ուրախ, հափշտակված խաղում եր Սայոպիս հետ: Նա յերբեք չեր հոգնում մտնել մահճակալի և բազմոցի տակ Սայոպի գնտակի յետեկից: Նա ուսերի վրա ման եր ածում Սայոպին, վագում եյին իրար յետեկից, և կատարում եր Սայոպի բոլոր հրամանները: Յերբեքն Վլադիմիր իլիչը և Սայոպան ամբողջ սենյակը տակն ու վրա եյին անում: յերբ աղմուկը չափազանցության եր հասնում, յես աշխատում եյի կանգնեցնել, բայց իլիչը միշտ ել հայտարարում եր. «Մի խանգարեք, մենք խաղում ենք»:

Մի անգամ մենք Վլադիմիր իլիչի հետ փողոցի միջով գնում եյինք նրանց տունը: Սայոպան վագում եր մեր ա-

ռաջից: Վլադիմիր իլիչը հանկարծ ասաց. «Ա՞յս, ափսոս, վոր մենք ել չունենք մի այսպիսի Սայոպան»: Վլադիմիր իլիչը սիրում եր վոչ միայն Սայոպին, այլ ընդհանրապես յերեխաների: Այդ բանում համոզվեցի 1921 թվին, այն տարին, յերբ սով եր Ռուսաստանում: Պետրովագի յերեխաների որաբաժնի քանակը խիստ կրծատման եր յենթարկվել: Յես յեկա Սոսկվա, դես ու գենընկա, շեմքեր մաշեցի, բայց չկարողացա հավելյալ որաբաժնիներ ստանալ: Իմանալով ընկեր Լենինի սերը դեպի յերեխաները, յես գիմեզի նրան: Նա ինձ ընդունեց և խընդուրեց, վոր մանրամասն գեկուցեմ Պետրովագում յերեղից, վոր մանրամասն կատարած մեր աշխատանքների մասին: Նա ինձ լսեց իլիչին հատուկ խորին ուշադրությամբ, մի շարք հարցեր տվեց և տեղնուտեղը իմ ներկայությամբ շաբաթողկոմին հեռախոսի մոտ կանչեց և կարգադրեց հաղարժողկոմին հավելյալ բաժին:

✓ Զ. Լիլինա

## ԽՈՐՀԲԴԱՎՈՐ ՎՐԱՆՔ

(1917 թ. հուլիսից հետո Լենինի յեւ Զինովիյեվի թագնվիթության վելու ըրջանի կյանքից)

Հուլիսի 3-ի՝ լույս 4-ին յեկավ ինձ մոտ ընկեր Զոֆը և հաղորդեց, վոր կուսակցության կենտրոնական կոմիտեն ամբողջ սենյակը տակն ու վրա եյին անում: յերբ աղմուկը չափազանցության եր հասնում, յես աշխատում եյի կանգնեցնել, բայց իլիչը միշտ ել հայտարարում եր. «Մի խանգարեք, մենք խաղում ենք»:

պայմանավորված տեղում: Մի քանի ժամանակից հետո ծածկված կառքերով յեկան լենին ու Զինովիկը: Մի քանի բոլելից հետո մենք արդեն կայարանումն եյինք և, տեղափորվելով վագոնի նախադռանը, հասանք մինչև Ռազլիվ կայարանը: Այստեղ արդեն զգացինք, վոր ամենամեծ վատանգներն անց են կացել: Մի քանի բոլելից հետո հասանք Վլադիմիր իլիչի և Զինովիկի առաջին վորչը. դա մարզի ծածկակտուրն եր, ուր սկզբում մնում եյին լենին ու Զինովիկը:

Առաջին գործն այն յեղավ, վոր լենին ու Զինովիկը փոխեցին իրենց արտաքինը՝ դեմքը. մազերն անմիջապես տակից խուզեցին: Դրությունն այնքան ել հաճելի չեր. չորս կողմում ապրում եյին ամառանոցավորները, վորոնք վայելում եյին բնությունն աշխատավոր դաստակարդի հաշվին, և բնական ե, վոր նրանք, հակառակ լինելով բանվորական ամեն մի շարժման, հնարավոր գեպքում հաճույքով իրենց վրա կը վերցնեյին լրտեսական միստիան:

Ծածկակտուրն ուներ իր ձեռնառու կողմերը, հիանալի դիտարանի տեղ եր ծառայում և զգալի չափով ոգնություն եր հասցնում, այն ե՝ գալիս եր ընկերներից մեկը, հարցնում Վլադիմիր իլիչին, հյուրին առաջնորդում եյին բակի խորքը, իսկ մինչ այդ Վլադիմիր իլիչը և Գրիգորիյ Յեվեյկիչը ծածկակտուրի բազմաթիվ ձեղքերից դիտում եյին: Այսուհետեւ հյուրին թողնում եյին հիանալու իր շրջապատով: Վլադիմիր իլիչը տալիս եր տեսածների յեղքակացությունը, և ապա արդեն այսպիսի փորձերից հետո յեկող ընկերը տեսակցելու հնարավորություն եր ստանում:

Այսպիսի դեպք ել եր պատահում. գալիս ե մի անգամ ընկեր Ն.-ը, նույնպես հայտնում ե, վոր իրեն անհրաժեշտ ե տեսնել Վլադիմիր իլիչին, բայց, դժբախտաբար, վոչ

Վլադիմիր իլիչը, վոչ Գրիգորիյ Յեվեյկիչը չճանաչեցին ընկերոջը, նա ել պնդում ու ասում եր, վոր անհրաժեշտ ե տեսակցությունը: Խորհուրդ արեցինք և վորոշեցինք մի բան պատահելիս դիմել ծայրահեղության, բայց, բարեբախտաբար, մեր մարդը գուրս յեկավ:

Բայց վորքան ել հիանալի եյին ծածկակտուրի հարմարությունները, այնուամենայնիվ դրությունն այնքան ել հաճելի չեր. ամեն մի բոպե կարող եր վորեւ մեկը նկատել, դրա համար ել ստիպված եյինք ավելի ապահով տեղի մասին մտածել: Խոտհարքի ժամանակն եր: Ապա ի՞նչպես կը լինի, յեթե Վլադիմիր իլիչը և Գրիգորիյ Յեվեյկիչը վորպես հնձվորներ տեղափոխվեն խոտհարքը, մանավանդ վոր արտաքինը փոխելուց և մազերը խուզելուց հետո նրանք շատ նման եյին հնձվորների: Լավ միտք եր, և Վլադիմիր իլիչն և Գրիգորիյ Յեվեյկիչը հավանեցին այս ծրագիրը. պետք ե ասել, վոր ծածկակտուրն ել, ամենայն հավանականությամբ, ենքան ել դյուր չեր գալիս փախըստականներին:

Խոտհարքը գտնվում եր Ռազլիվ կոչվող վոչ այնքան մեծ լճի և անտառի յետեր, ուր համակլու համար պետք եր գնալ ջրով չորս վերստ և անտառով մեկ ու կես վերստ: Այստեղ արդեն մթնոլորտն ուրիշ ե, չկա այն հասարակությունը, վորը բնակվում ե ամառանոցային վայրերում: Նրանք հազվագյուտ դեպքերում են այս կողմերը յերեսում: Մշտական բնակվողներն այստեղ աշխատավոր, բանվոր հնձվորներն են, վորոնք չեն փնտում բանվորական շարժման թագնված դեկավարներին: Ծածկակտուրը փոխարինվեց ուրիշ բնակարանով, «վրանով» (շալաշով), ճյուղերից շինված և վերեկց ել խոտով ծածկված: Այս, այդ «վրանը» պետք եր անվանել «հեղափոխության շտաբ», վորովհետեւ այստեղ Վլադիմիր իլիչը Գրիգորիյ Յեվեյկիչի հետ միա-



իսկ հետո—արձանագրություն կազմելու համար ուղում ե ազգանունը դուրս քաշել, փորը, ի հարկե, նրան չի աջող- վում։ Դրանից ենքան ել հաճելի բան դուրս չեր գա. անտառապահ Ակսենովը կարող եր ճանաչել Գրիգորի Յեկ- սեյկչին և, ի հարկե, հաղորդել այնաւեղ, ուր ցանկալի չեր, իսկ բացի այդ գայթակղեցուցիչ ել եր։ չե փոր Վլա- գիմիր Իլիչը և Գրիգորիյ Յեկսեյկիչը գնահատված եյին 200.000 ռուբլի. այն ժամանակա հաշվով այդ մի հսկայա- կան գումար եր, թեալետ նրանք գնահատման մեջ սխալվել եյին. բանվոր դասակարգի ղեկավարներին նրանք չափա- զանց եժան եյին գնահատել. այժմ, ի հարկե, նրանք զինը գիտեն։

Ինձ եր վիճակված այդ գործը հարթել։ Յես գնացի նախ իմանալու, թե ինչ տպավորություն ե թողել Ակսե- նովի վրա կարծեցյալ վորսորդը։ Գալիս եմ ու հարցնում. «Միխայլովիչ, միթե այդպէս են վերաբերվում պաշտո- նակից ընկերոջը. կարծեմ, միասին ենք չորս տարի զին- վորություն արել, իսկ դու նույնիսկ մտածում ես իմ հրացանը խելե»։—Բայց ինչպես թե. յես վճրատեղից գի- տեյի, թե հրացանը քոնն ե, չե փոր նա, «չուխոնցի զմբոն», փոչ մի խոսք ուսւերեն չեր խոսում։ Յես հարց- նում եմ ով ե, ով չի, փոչ մի պատասխան չի տալիս։

Համոզվելով, փոր լուրջ փոչինչ չկա և փոր անտառա- պահ Ակսենովը պարզապես Զինովիկին ֆիննի տեղ ե դրել, փորը ինձ մոտ ե աշխատում, մենք բոլորս հանգստացանք։

Վլագիմիր Իլիչը և Գրիգորիյ Յեկսեյկիչն ամեն որ կար- դում եյին այն բոլոր թերթերը, փորոնք հրատարակվում եյին այդ ժամանակ։ Թերթերը միշտ նույն ճանապարհով եյին ձեռք բերվում։ Հիշում եմ, թերթերը հաճախ գրում ու նկարագրում եյին, թե ինչպես են Վլագիմիր Իլիչը և Գրիգորիյ Յեկսեյկիչը փախել արտասահման. յերբեմն ջր-

սույզ նավակներ եյին մեջ բերում, յերբեմն սավառնակ- ներ. իսկապես ճիշտ եր միայն մի բան,—վոր ամբողջ ճանապարհորդությունը կատարվել եր ջրով, միայն վոչ սուզանավով, այլ հասարակ զույգ թիավար նավակով։ Կարգալով նման տեղեկություններ, Վլագիմիր Իլիչը ուղ- տանց ծիծաղում եր, անվանելով բուրժուական թերթերի հրատարակողներին «ծաղրածու խրտվիլակներ»։

Յեվ այսպես, բուրժուական թերթերը կատարությու- նից փրփրում եյին, իսկ Վլագիմիր Իլիչը հոգված հողվա- ծի յետելից եր գրում, կատարելով իր աշխատանքը սիրած ուռենութիւնու թիւի տակ։ Վլագիմիր Իլիչը և Գրիգորիյ Յեկսեյ- կիչը հարմար առիթը և դեպքը բաց չեյին թողնում պա- րապելու և ֆիզիքական աշխատանքով. ճիշտում եմ, ինչ- ուապելու և ֆիզիքական աշխատանքով. ճիշտում եմ, տեղի չտալով փորձված բեռնա- պես նրանք յերկուսն ել, տեղի չտալով փորձված բեռնա- կիրների, պատղարակների վրա գրած կրում եյին խոտի մեծ խորձերը, գեղեր գնում. ճիշտում եմ, ինչպես Վլագի- միր Իլիչը ճարպիկությամբ խոտը յեղանով բարձրացնում էր, և վերջ ի վերջո մի մեծ դեղ կանգնեց։ Յերեկոները եր, և վերջ ի վերջո մի մեծ դեղ կանգնեց։ Յերեկոները սալու։

Յեվ ապրում եյինք այսպես, իսկ ժամանակը Գոր- գում եր. արգեն բնությունը իրեն զգալ եր տալիս։ Հետզ- հետեւ պարբերական եյին գառնում անձրեները։

Ճիշտում եմ, ինչպես հանկարծակիի բերեց մեզ առաջին հորդ անձրեն. Առավոտյան յեղանակը հրաշալի յեր, հազիվ միայն թեթև քամին խշխացնում եր ծառերի տերեները, արեն արդեն բարձրացել եր, Յես գոհ եյի այդ որվա յե- ղանակից, մտածելով, փոր ահա կը չորանա խոտը և կարե- լանակից, մտածելով, փոր ահա կը չորանա խոտը և կարե- լինի հավաքել։ Դժբախտաբար ճացից հետո բարձրա- լի լինի հավաքել։ Դժբախտաբար ճացից հետո բարձրա- լի լինի հավաքել։ Դժբախտաբար ճացից հետո բարձրա- լի լինի հավաքել։

վերջի վերջու գարձավ կտտաղի քամի: Ապա արագությամբ յերկինքը ծածկվեց ոև ամպերով:

Այս նշաններից յես հասկացա, վոր հորդ անձրեւ եւ գալու և հարկավոր եւ շտապով խոտը հավաքել. այդ ժամանակ Վաղիմիր իլիչը և Գրիգորիյ Յեփսեյիչը, տեսնելով, վոր հսկայական աշխատանքի արդյունքը կարող եւ իդուր կորչել, սկսեցին ոգնության համանել: Խոռն ազատեցինք անձրեց, կարողացանք ժամանակին հավաքել: Յեվ հենց նոր եյինք վերջացրել, սկսեց անձրել կաթիթել, իսկ հետո այսպէս հորդացավ, վոր վրանը թացացավ, և մեզ, ներսը նստողներիս սկսեց քիչ-քիչ թրջել:

Վաղիմիր իլիչը իրարանցման մեջ եւ առաջարկում եւ մեզ կարգի զցել մեր բնակարանը, գնալ անտառից ճյուղեր բերել, նորից խոտով ծածկել, վորպեսզի գիշերը ցըրսից չդողանք, թրջվելով մինչև վոսկորներս: Վաղիմիր իլիչի առաջարկը գտանք իրավացի, դրա համար ել միահամուռ գործի անցանք: Վերցրինք կացինը, մեկը ճյուղեր եւ կոտրում, մյուսը կրում, և վայրկենապէս ճյուղերը տեղ հասցրինք: հետո, դարսելով դրանց, նորից խոտով ծածկեցինք, վորովհետեւ այդ ժամանակներից սկսել եյին անձրել տեական դառնալ:

Հետո հետեւ ցուրտը սաստկանում ու սաստկանում եր և հարկավոր եր մտածել այն մասին, վոր հնարավոր չեալիս այդտեղ մնալ: Անհրաժեշտ եր ապրելու ուրիշ վայր փնտռել, ապահով ու ավելի հարմար աշնանային յեղանակներին: Ընկեր Շոտմանի առաջարկի համաձայն, վորոշվեց, վոր Վաղիմիր իլիչն անցնի Ֆինլանդիա, իսկ Գրիգորիյ Յեփսեյիչի վերաբերմամբ վորոշվեց, վոր նա գնա ու մնա Լենինգրադում:

Վաղիմիր իլիչի Ֆինլանդիայում տեղափորվելու գործը հանձնվեց ընկեր Շոտմանին, իսկ ինձ հանձնարարվեց ան-

հրաժեշտ վկայականներ ձեռք բերել: Ոգտվելով այն հանգամանքից, վոր տեղական Սեստրորեցկի զինագործարանում անձագրեր եյին տրվում Ռայվուրում ապրող և գործարանում աշխատող բանվորներին սահմանն անց ու դարձանելու, յես գործարանի կառավարքիչ Դիմիտրևսկու ստորագրությամբ սահմանն անցնելու անցաթղթեր ձեռք բերի: Մնացել եր միայն, վոր Վաղիմիր իլիչը և Գրիգորիյ Յեփսեյիչի նկարվեն, և նկարները կպցնեն անցաթղթերին:

Վաղիմիր իլիչը և Գրիգորիյ Յեփսեյիչը մագերը խուզեցին, պարիկ հագան. յեկավ ընկեր Լեշենկո Դ. Պ-ն., վորը և նկարեց Վաղիմիր իլիչին և Գրիգորիյ Յեփսեյիչիին:

Փաստաթղթերը պատրաստ եյին, մնացել եր վորոշել, թե ինչպես պիտի անցնել նոր վայրը: Վորոշվեց վոտով անցնել անտառը, գնալ Դիբուն, իսկ այնտեղից Լենինգրադ այդպես ել արվեց:

Մոտավորապես մի ամիս հետո Նադեժդա Կոնստանտինովին Ուլյանովին անհրաժեշտ եր անցնել Ֆինլանդիայի սահմանը Վաղիմիր իլիչի մոտ: Նադեժդա Կոնստանտինովին ան վորպես Ռայվուրի գեղջկուհի՝ Ագաֆյա Առամանովայի անվան փաստաթղթերով նույն ձևով անցավ սահմանը:

Ն. Ցեմելյանով

## Լենինի վրա ԿԱՏԱՐՎԱԾ ՄԱՀԱՓՈՐՁԸ ՄՈՍԿՎՅԱՅԻՄ

Վաղիմիր իլիչին միշտ ուղեկցում եր, դեռ Լենին գրադից սկսած, մի շատ փորձված շոփեր, ընկեր Ստեփան Կաղիմիրովիչ Գիլը, վոր աշխատում եր Փողկոմիորհի ավտոկայանում և վորին յես գնահատում եյի, իբրև մի-

վերին աստիճանի ճշտապահ, ճարպիկ, յեռանդուռ ու արագ լսրանող աշխատավորի. նա ծանոթ եր մեքենային և գիտեր շոփերի ամբողջ աշխատանքը առանց պակասության. Յես նրան մի քանի ուրիշ շոփերների հետ նկատի եյի առել Հոկտեմբերյան հեղափոխության յեռման շրջանում և հենց նրան նշանակեցի Վլադիմիր Իլիչի մոտ, հենց վոր պահանջ յեղավ:

Զնայած ժողովրդի ահազին բազմությանը, վորի աշ-  
երի առջև խելացնոր սոց-հեղափոխականութին կրակեց  
Վլադիմիր Իլիչի վրա, ընկ. Գիլը համարյա միակ վկան եր,  
վոր տեսել եր մահափորձի ամբողջ պատկերը և այն ա-  
մենը, ինչ վոր յեղել եր նրանից հետո, ուստի նրա պատ-  
մածը առանձնապես գնահատելի ու կարևոր է:

Ճակատագրական որը, ոգոստոսի 30-ին Վլադիմիր  
Իլիչը, ինչպես ամեն շաբաթ, գուրս յեկավ միտինդի բան-  
վոր մասսայի ամենախուռն տեղը:

— Սկզբում,— պատմում եր ինձ ընկ. Գիլը,— մենք  
գնացինք «Խելքնայա» բորսան, վորտեղ միտինդ եր:  
Այստեղ ժողովուրդ շատ կար: Միտինդը աջող վերջացավ\*)  
և մենք գնացինք նախկին «Միխելսոն»-ի գործարանը,  
Սերպուխովսկայա փողոցը, վորտեղ մենք առաջ ել յերկու  
անդամ յեղել եյինք: Ավտոմոբիլով ուղղակի բակը մտանք:  
Բակում շատ ժողովուրդ կար: Վոչ մեզ հետ ավտոմոբի-  
լում և վոչ ել բակում պահակ չկար, և Վլադիմիր Իլիչին  
վոչ վոք չդիմավորեց—վոչ զավկոմը և վոչ ել մի ուրիշը:  
Նա բոլորովին մենակ գուրս յեկավ ավտոմոբիլից և արա-  
գությամբ անցավ արհեստանոցները: Յես շուռ տվի ավ-

\*) Քննությունը պարզեց, վոր այստեղ ել սոցիալ-հեղափո-  
խականները հետեւում եյին Վլադիմիր Իլիչին, բայց նրանց մի  
քան խանգարել եր մտածած մահափորձը կատարելու:

տոմոբիլը գեղի բակի դուռը և կանգնեցրի արհեստանոց-  
ների մուտքից տասը բայլի վրա:

10—15 րոպե հետո մոտեցավ մի պորտֆելավոր կին,—  
հետո, քննության ժամանակ պարզվեց, վոր հենց դա յեր  
մարդասպան կապլանը,—և ինձնից հարցրեց. «Ընկեր Լե-  
նինն եր, կարծես, վոր յեկավ, չ՞»: Յես պատասխանեցի.  
«Չգիտեմ ով յեկավ»... Նա ծիծաղեց և ասաց. «Եդ ի՞նչ-  
պես ե, դուք շոփեր եք, և չգիտե՞ք ումն եք տանում»:  
— «Եհ, յես վորտեղից իմանամ, ինչ-վոր հոետոր ե, քիչ  
հոետորներ են գնում-գալիս, բոլորին հո չես ճանաչի,—  
պատասխանեցի յես նրան հանդիսաւ:

Նա հեռացավ ինձնից և յես տեսա, թե ինչպես նա  
ներս մտավ գործարանը: Յես մտածեցի. — ինչու այդ կնի-  
կը այդպես կպավ ինձնից. ինչ համառն եր... բայց վորովհետև  
հետաքրքրվողներ համարյա միշտ ել շատ եյին լինում, թե  
ով յեկավ, ումը բերի, մինչև անգամ յերբեմն շատերը  
վոտը գնում եյին ավտոմոբիլին ու դիտում յեկողին, ոստի  
և յես այդ կնոջ խոսքերին առանձին ուշադրություն չը  
դարձրի: Մենք միայն մի հաստատ կանոն ունեինք.—  
յերբեք վոչ վոքի չասել, թե ով եր յեկողը, վորտեղից ե  
յեկել և ուր ենք գնալու:

Մոտավորապես մի ժամ անցած, գործարանից դուրս  
յեկավ ժողովրդի առաջին մեծ խումբը—մեծ մասը բան-  
վորներ—և համարյա ամբողջ բակը լցրեց: Յես հասկացա,  
վոր միտինդը վերջացավ, և սկսեցի պատրաստվել մեկնե-  
լու ու խկույն լարեցի մեքենան: Մի քանի բոպեյից հետո  
գործարանից դուրս յեկավ մի ուրիշ մեծ խումբ, վորի մեջ  
քայլում եր Վլադիմիր Իլիչը: Յես նստած եյի դեկի մոտ,  
և մեքենան պատրաստ պահեցի:

Վլադիմիր Իլիչը խոսակցում եր բանվորների հետ,  
վորոնք նրան բազմաթիվ հարցեր եյին տալիս: Նա շատ

Դանդաղ շարժվում եր ավտոմոբիլի ուղղությամբ։ Մեքենայից յերեք քայլ հեռավորության վրա Վլադիմիր Իլիչը կանգ առաջ դռնակի դիմաց և մտադրվում եր նստել։

Դռնակը բաց եր. ամբոխի միջից մեկը բացել երայն։ Այդ ժամանակ նա խոսակցում եր յերկու կանանց հետ և բացարություն եր տալիս նրանց մթերքները ներմուծելու վերաբերմամբ, և յես լսեցի Վլադիմիր Իլիչի խոսքերը։

— Կատարելապես ճիշտ ե, արգելող խմբերը շատ անձիշտ գործողություններ են թույլ տալիս, բայց այդ բոլորը անշուտ կը վերացվի։ Խոսակցությունը տևեց յերկու — յերեք րոպե։ Վլադիմիր Իլիչի յերկու կողմը կանգնած եյին դարձյալ յերկու կին, նրանից մի քիչ գեղի առաջ անցած։ Հոծ ամբոխը նրան սաստիկ սեղմել եր, և յերբ նա ուղում եր վերջին քայլերն անել գեղի ավտոմոբիլը, հանկարծ կրակոց լսվեց։ Այդ ժամանակ յես նայում եմի Վլադիմիր Իլիչին, յերեսս կիսովին գեղի յետ դարձրած։ Յես վայրէնապես յերեսս շուռ տվի կրակոցի — ձայնի ուղղությամբ, և տեսա, զոր մի կին ավտոմոբիլի ձախ կողմից, առջևի թեփ մոտ, նշան ե դնում Վլադիմիր Իլիչի ձախ թիակի տակին։ Մեկը մյուսի յետից դարձյալ ատըրձանակի յերկու կրակոց լսվեց։ Յես իսկուն մեքենան պնդացրի, թուա գեղի ատրճանակ կրակողը ու նադանով նշան բռնեցի նրա գլխին։

Նա բրառնինգը շպրտեց իմ վոտների տակ, արագությամբ շուռ յեկավ, իրեն զցեց ամբոխի մեջ ու փախավ դռան ուղղությամբ։

Զորս կողմը այնպիսի խուռն բազմություն եր, զոր յես սիրտ շարի կրակել նրա յետեկից, զորովհետեւ զգում եմի, զոր հավանաբար կը սպանեմ բանվորներից մեկն ու մեկին։ Յես ընկա նրա յետեկից և մի քանի քայլ փակեցի,

բայց հանկարծ գլխումս միտք ծագեց թե՝ ախար Վլադիմիր Իլիչը մենակ ե, ինչ յեղավ նրան։ . . .

Յես կանգ առա։ Մի վարկյան սարսափելի, մեռելային լոռություն եր, ապա բոլորն ել սկսեցին գոչել։

— Սպանեցին, սպանեցին . . .

Յեվ ամբողջ բազմությունը միանդամից գուրս նետվեց բակից — թե աղամարդիկ, թե կանայք . . . և մի չտեսնը ված կոփկոտոց բարձրացավ։ Յես շուռ յեկա ու տեսավագիմիր Իլիչին գետնի վրա ընկած։ Յես նետվեցի գեղպի նա։ Այդ մի քանի ակնթարթում ծայրեծայր լցված բակն արդեն դատարկվել եր, և կրակող կինը անհետացավ ամբոխի հետ։

Յես վազեցի Վլադիմիր Իլիչի մոտ և նրա կողքին չոքելով՝ թեքվեցի գեղի նա։ Նա ուշը չեր կորցրել և հարցրեց։

— Եղ մարդուն բռնեցին, թե չե։

Ինչպես յերեւմ եր, նա կարծում եր, թե իրեն կրակողը աղամարդ է։

Յես տեսա, զոր նա ծանրությամբ և հարցնում, փոխված ձայնով և մի տեսակ խռապու, ու ասացի նրան։

— Լուցեք, մի խոսեք, ձեր զրությունը ծանը է։

Այդ ըստեյին զլուխս բարձրացնում եմ ու ինչ տեսնում. արհեստանոցից նավասառու զլխարկով մի տարորինակ մարդ ե վազում. հուզված ե սաստիկ, ձախ ձեռը թափահարում ե, իսկ աջը զրպանում և կատաղի թափով արշավում ե գեմուգեմ Վլադիմիր Իլիչի վրա։

Նրա ամբողջ կերպարանքը ինձ սաստիկ կասկածելի թվաց, և յես Վլադիմիր Իլիչին ծածկեցի ինձնով, հատկապես նրա գլուխը, համարյա պառկեցի նրա վրա և զոռացի ամբողջ ուժով։

— Կանգնիր . . . և նրա վրա ուղղեցի ատրճանակ։

Նա շարունակում եր վաղել ավելի ու ավելի մոտենալով մեզ:

Այդ ժամանակ յես գոռացի.

— Կանգնիր, կրակում եմ:

Մի քանի քայլ մնացած, վոր հասնի Վաղիմիր իլիչին, նա հանկարծ շուռ յեկավ դեպի ձախ ու նետվեց դեպի բակի դուռը, ձեռը զրպանից չհննելով:

Հենց այդ ժամանակ ինձ մոտ վագեց յետեի կողմից մի անձանոթ կին բղավելով.

— Ի՞նչ եք անում դուք, մի կրակեք... Յերեի կարծում եր, թե յես կրակում եմ Վաղիմիր իլիչին: Յես դեռ չեի կարողացել նրան պատասխանել, յերբ արհեստանոցից լսվեց մի տղամարդու ձայն. «Դա մերոնցից ե, մերոնցից ե», և յես տեսա յերեք հոգու, վորոնք վազում եյին արհեստանոցից ատրճանակները՝ ձեռներին՝ Վաղիմիր իլիչի ուղղությամբ: Յես կրկին գոռացի.

— Կանգնեցէք, ովքեր եք դուք, կը կրակեմ...

Նրանք իսկույն պատասխանեցին.

— Մենք՝ գործարանային կոմիտեն ենք, ընկեր, ձերոնցից...

Ճանաչելով նրանցից մեկին, վորին յես առաջուց տեսել եյի, յերբ մենք գործարան եյինք յեկել, յես նրանց թույլ տվի մոտենալու Վաղիմիր իլիչին:

Սյս բոլորը կատարվեց շատ արագ, մի քանի ըռպեյում:

Նրանցից մեկը անդում եր, վոր յես Վաղիմիր իլիչին տանեմ մոտիկ հիվանդանոցը:

Յես կտրուկ կերպով պատասխանեցի.

— Վո՞չ մի հիվանդանոց չեմ տանի, տանում եմ տուն, Վաղիմիր իլիչը, լսելով մեր խոսակցությունը, ասաց. — Տուն, տուն...

Յեվ յես կոմիտեյական ընկերների հետ, — իսկ մեկը զինվորական կոմիտարիատից եր, — ոգնեցինք Վաղիմիր իլիչին վոտքի յելնելու, և նա ինքնիրեն, մեր ոգնությամբ մի քանի քայլ գնաց մինչև ավտոմոբիլը:

Մենք ոգնեցինք նրան բարձրանալու մոտորի աստիճանի վրա, նա նստեց ավտոմոբիլի կուպեյի յետեկի նստարանին, իր սովորական տեղը:

Յերկու ընկեր նստեցին ավտոմոբիլ, մեկը իմ կողքին, մյուսը՝ ներսը: Յես քշեցի սաստիկ արագ, ամրող ուժով, մուղի ներում եր ճանապարհը, ուղիղ կրկմէ: Յես մի վորքան ներում եր ճանապարհը, ուղիղ կրկմէ: Յերանի անգամ նայեցի Վաղիմիր իլիչին: Ճանապարհի կերպանի ամբողջ իրանով թեքվեց դեպի յետ—նստարանի սից նա ամբողջ իրանով թեքվեց դեպի յետ—նստարանի վրա, համարյա պառկեց. չեր հառաջում և վոչ մի ձայն վրա, նամարյա պառկեց. չեր հառաջում և վոչ մի ձայն չեր հանում: Նրա յերեսը գունատ եր: Ներսում նստած չեր հանում: Նրա յերեսը գունատ եր: Տրոյցյան գուներում յես ընկերը նրան բռնել եր թեթեակի: Տրոյցյան գուներում յես ընկերը նրան բռնել եր թեթեակի: Վաղիմիր իլիչի ընակարանի նինն ե», և քշեցի ուղղակի Վաղիմիր իլիչի ընակարանի նինն ե», և քշեցի յերեսը ել ոգնեցինք Վաղիմիր իլիչի մոտ, բակը: Սյստեղ յերես ել ոգնեցինք Վաղիմիր իլիչի մոտ, բակը: Մենք համար դուրս յեկավ, չին գուրս գալու ավտոմոբիլից: Նա դժար դուրս յեկավ, մեր ոգնությամբ, ըստ յերեսութին ցավից տանջվելով, բայց վոչ մի ձայն չեր հանում:

Մենք ասացինք նրան.

— Մենք ձեզ գրկած ներս կը տանենք:

Նա կտրուկ հրաժարվեց:

Մենք սկսեցինք խնդրել ու թախանձել, վոր նա թույլ տա գրկած տանել իրեն, բայց վոչ մի խոսք չոգնեց և նա հաստատապես ասաց.

— Յես ինքս կերթամ... Ու դառնալով ինձ, ավելացրեց.

— Պիջակս հանեցեք, այդպես ավելի հեշտ կը լինի

գնալը:

Յես զգուշությամբ նրա պիջակը հանեցի, և նա հեն-

վելով մեզ վրա՞ դիք սանդուխքով բարձրացավ յերբորդ հարկը։ Նա բարձրանում եր բոլորովին լուռ։ Մոտենալով դուանը, մենք զանգահարեցինք, և բաց արին դուռը։ Յես նրան ուղղակի ննջարան տարա ու պառկեցրի մահճակալին։ Ուզեցի շապիկը հանել բայց անկարելի յեղավ, ու յես շապիկը պատռեցի։ Նույն ըոպեցին յեկավ Մարիա Իլինիչնան։ Նա գոչեց. «Ի՞նչ ե պատահել», նետվելով նախ դեպի Վլադիմիր Իլիշը և ապա դեպի ինձ, ու ասաց.

— Հեռախոսի զանգը տվեք, շուտով, շուտով...

Այդ ժամանակ յես զանգահարեցի Վլադիմիր Դմիտրիիչ Բոնչ-Բրույերին և ամեն ինչ բացատրեցի։ Այդ ժամանակ ներս վաղեց Աննա Պետրովնան և իսկույն դուրս թռալ գետի Փողկոմխորհը, և նրա հետ յեկավ ընկեր Ա. Ն. Վինոկուրովը։ Յերբ յես հեռախոսով խոսեցի Վլադիմիր Դմիտրիիչի հետ, դրանից հետո Մարիա Իլինիչնան խնդրեց ինձ նախազգուշացնել Նադեժդա Կոնստանտինովնային, և վորքան կարելի յե՝ զգուշաբար։ Նադեժդա Կոնստանտինովնան կոմիտարիատումն եր։

Յերբ յես իջնում եյի բակը, մեկը իմ յետելից հասավ ժողկոմխորհից, վորպեսզի միասին զնանք նախազգուշացնելու Նադեժդա Կոնստանտինովնային։ Մենք կանգնեցինք սպասելու նրան բակում։ Մի քիչ հետո նա յերեաց ավտոմոբիլով։ Յերբ յես սկսեցի մոտենալ նրան, նա յերեի իմ այլալիված գեմքից գուշակելով, վոր վորեւ բան ե պատահել, կանգ առավ և հարցըց, նայելով ուղիղ իմ աչքերին։


— Վոչինչ մի ասեք, միայն ասացեք, վողջ և, թէ մեռած...

— Ազնիվ խոսք եմ ասում, — պատասխանեցի յես, — Վլադիմիր Իլիշը թեթև վիրավորված է։

Նա մի բոպե կանգ առավ ու զնաց վերև և մենք լուռ գնացինք նրան ուղեկցելու։ Ներս մտանք բնակարանը։ Յես մի քանի բոպե մնացի այնտեղ և զնացի տուն։

### ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԻ ՀԲԱԺԵԾԸ ԻԼԻՉԻՆ

Հենց նույն գիշերը պատգամավորների միջոցով իմաց տրվեցավ զյուղերն ու ավանները։ Գավառակը հազիվ



Գյուղացիներ Խովարեավուում են գ. Տ. Լենինի մարմինը Գորկիից կունենա ընդամենը ինը հազար բնակչություն։ Մյուս կունենա ընդամենը ինը հազար բնակչություն։ Մյուս առավոտյան, զյուղացիները — ծերեր, փոքր յերեխաներ, վորը վորով, վորը սահնակով, գալիս եյին գետին, վորը վորով, վորը սահնակով, գալիս եյին գետին, վորը վորով, այսպես հավաքվեց մինչև հինգ հազար ժողովուրդ։ Գիշերը գեղջկուհիները պատրաստել եյին նշա-

նաբաններով զբոշակներ, ժամավեններ: Ճանապարհին, Յամ գալիս, պոկտում եյին յեղենու ճյուղեր, պսակներ հյուսում ու ժամավեններով զարդարում: Հարևաններից բաժանվող իլիչին հրաժեշտ տալու համար Յամից Փորկի եյին շտապում վոտով, սահնակով բոլորը, հսկա ամբոխ կազմած: Նրանց չեյին բերում ուրիշները, վոչ ել կազմակերպությունները,—բերողը դեպի իլիչն ունեցած նրանց անկեղծ սերն եր: Գեղջուկ ծերերին, պառավանքերին, յերեխաններին չկար ուրիշ առաջնորդող, բացի կորուստի կենդանի վիշտը, բացի գեպի մեռնող հարևանն ունեցած կենդանի սերը:

— Մենք մարդիկ դուրս կը բերենք, յեթէ հարկավոր ե, հայուր հազարներով ձիեր կը հանենք զործի,—ասում եր վշտացած գավառը Գորկիում՝ իլիչի վորբացած հարազաններին, ընկերներին: Յեվ հիրավի, չքացան ճյունի լեռնակույտերը, մի որվա մեջ Գորկիից կայարան 4 գերստ ճանապարհը գյուղացիք մաքրեցին: Նրանք իրենց սիրելի հարևանի համար աշխատում եյին ամբողջ հոգով վերջին և տխուր բոպեյին: Յեվ ծերունիները լալիս եյին նրա անշարժ դիմում մոտ, վորի շուրջն ամբողջ որ ու զիշեր շարժվում եյին, հրաժեշտ տալիս գեղջուկները, գեղջկուհիներն ու յերեխանները: Պառավանքերը պարզասրտությամբ աղոթում եյին և արտասուք թափում:

— Նա պարզ եր մեզ հետ,—ասում եյին զյուղացի հարևանները,—ավելի պարզ, քան մեզանից մեկն ու մեկը: Մեկ ել տեսար, կը մոտենար գեղջուկին, խոսակցություն բաց կաներ, հարց ու փորձ կաներ ամեն բանի մասին: Յերբեմն ել մեղմությամբ կը հանդիմաներ, վոր հին ձեռվ ենք հերկում հողը, զյուղատնտեսներին ականջ չենք դնում... Յեվ այնպես ուրախալի յեր, վոր ամենամեծ մարդը Ռուսաստանի զրուցում ե քեզ հետ, ինչպես քեզ հարազատ յեղբայր գեղջուկը:

## «Տ Ո Ւ Գ Ա Ն Ե Ց»

— Իսկ ինձ հետ տեսեք ինչ պատահեց, —պատմում ե մի ուրիշ հարևան: —Մի անգամ իրիկվա դեմ, արգեն սկսել եր մթնել, բարձրանում եմ յեղենիների անտառը: Խում եմ ճարճատյուն. մեկը ճյուղեր և կոտրատում:



Ա. Ա. Լենինի եռվարկավորուրյաւնը Գորկիից դեպի կայարան

ինչ-վոր տղաներ եյին. Նայեցի, պուկ յեկան, իսկ մյուս կողմից մեկը դեպի ինձ ե գալիս: Յես թույլ շտվի ինձ հիմարի տեղ դնեն: «Ախ, յես ձեր եսպես-ենպեսը», ել բան շխողի: Մեկ ել ինչ տեսնեմ, իմ առաջ կանզնած ե բան շխողի: Իլիչը, ինքը ընկեր կենինը: Եհ, մտածեցի, վլագիմիր իլիչը, ինքը ընկեր կենինը: Եհ, մտածեցի, վոտով գլանով կորա: Ամբողջ գիշերը յեփվում եյի խորովոտով գլանով կորա:

կարելի յե շուտ՝ դա տնտեսական խորհուրդը»: Գնում եմ, վոտներս իմս չեն: Ներս մտա:—«Դուք եք վառարան շինողը»,—հարցնում են ինձ այնտեղ:—Այս, յես եմ,—այսպես ասած, վառարան շինող եմ:—«Այ, տեսեք, այս վառարանը փչացել ե, պետք ե վերանորոգել»:—Շատ լավ, —աշխատում եմ, դեռ առանձին բան չկա, ու ինքս ինձ ասում եմ. «Թերես հենց սրանով ել վերջանա, յեթե աշխատեմ խղճով վերանորոգել»: Վոզերված ու սրտապնդված աշխատում եմ: Հանկարծ նաև, ինքը... Նայեց ինչպես եմ աշխատում, դեսից-դենից հարց ու փորձ արագ: Յեկ գոնե մի խոսք ասեր, վոր յես իրեն, սիրելին, հայոցանքներով եյի պատվել:

Դուլիբայեվ

## ԾԵՐՈՒԿ ԳԵՂՋՈՒԿԸ ԼԵՆԻՆԻ ՄՈՏ

Հնկեր Ա. Շոտմանը հիշում է, թե ինչպես 1920 թ. գարնանը իրադիշով Ռմակուց Սեմիպալատինուկ գնացող շուդենավի վրա պատահեց ինչ-վոր պարուսինե բալախոն հագուստի մեջ, յերկար սպիտակ միրուքով, մի 75 տարեկան ծերուկի:

Խոսակցության բոնվեցինք: Յես իմացա, վոր նո կումաւիստ ե, ծագումով կազակ, ունի վորդիներ, թոռներ ու ծռներ, վորոնցից մի տղան և մի քանի թոռներն ու ծռները կոմմունիստներ են:

«Յես շուտով մեռնելու յեմ, —ասրւմ եր նա, —բայց մեռնելուց առաջ կուզեյի տեսնել Վլադիմիր Իլիչ Լենինին: Միայն տեսնեյի նրան, հարազատիս, նրանից նետո մեռնում եմ, թող մեռնեմ»:

Հնկեր Շոտմանը պայմանավորվում է Մոսկվայում տեսնվել Պուտինցին հետ (այդպես եր ծերունու ազգանունը) և ինդրել Վլադիմիր Իլիչին ընդունի ծերունի կազակին:

— Յերբ յես ընկեր Պուտինցին առանձնասենյակ տարա, ընկեր Լենինը վեր կացավ սեղանի մոտից, մոտեցավ շփոթված ծերունուն և, յերկու ձեռների մեջ առնեցվ նրա ձեռքը, ասաց.

— Բարե, իլյա Դանիլովիչ:

Մնապասելի յեր այս իլյա Դանիլովիչի համար, ուստի բոլորովին շփոթվեց և հուզմունքից հազիվ արտասանեց. — Թանգարին գործիչ, վոզջույն Սիբիրից:

Նստեցնելով ծերունուն իր դեմ ու դեմ, լուսամուտի առաջ, ընկեր Լենինը սկսեց նրան մանրամասն հարց ու փորձ անել Սիբիրի կազակների կյանքից: Իլյա Դանիլովիչը հարցերին շատ հանգամանորեն պատասխաններ եր բոլոր հարցերիս, առանց ճնշվելու մատնացույց եր անում խորհրդալիս, առանց ճնշվելու մատնացույց եր անում խորհրդալին մեխանիզմի պակասավոր կողմերը, առանց շողոքներիցին մեխանիզմի պակասավոր կողմերը, առանց շողոքների թելու լավ գելքետները գովարանում: Վլադիմիր Իլիչը, յերկու ժամներին, Պուտինցին հավանեց: Նա նրա հետ խորսում եր վորպես մի հին ծանոթի, հիշեց իր կյանքը Սիբիրում:

Խոսակցներն այնպես եյին գրավվել, վոր չնկատեցին, թե ինչպես Ժամն անցավ: Վերջապես ինձ աջողվեց յիշուակցությունն ընդհատել: Հրաժեշտի ժամանակ Պուտինցին դիմեց Վլադիմիր Իլիչին.

— Թանգարին գործիչ, թույլ տուր Ռւբյուտուն ստանդարտից քեզ քո կենդանության որով արձան կանգնեցնենք:

Վլադիմիր Իլիչը ժպտալով սկսեց նրան համոզել, վոր այդպիսի բան չանեն:

— Դե վոր այդպես ե, թույլ տուր ստանիցայում քո անունով մանկապարտեղ բաց անենք:

— Այդ լավ բան ե, — ասաց Վլադիմիր Իլիչը:

— Իսկ այժմ, թանգագին գործիչ, թույլ տուր համբուրեմ քեզ և քո վաղջույնները տանեմ մեր կաղակներին:

Վլադիմիր Իլիչը գրկեց ծերունուն և ընկերական ջերմ համբույր տվեց նրան:

## ՅՈԹ ՏԱՐԻ (1917-1924)

(Անդրիուշում Իլիչի մասին)

Նվիրում եմ իմ այս առաջին աշխատանքը Աննա Իլինիչնային, վորի հոռահիմ յես մոտիկից ձանաչեցի Իլիչին և կարողացա այս տեղերը գրել նրա մասին:

### 1. ԼԵՆԻՆԳՐԱԴ 1917 ԹՎԻՆ

1917 թվի ապրիլ 3-ին եր:

Նախորեկի յերեկոյան Աննա Իլինիչնան ասաց ինձ, վոր պետք ե վալողյան գա, և գնաց ֆինլանդական կայացում ըանը գիմափորելու Վլադիմիր Իլիչին, վորը վերադառնում եր Շվեյցարիայից: Յես տանը մնացի. խառը ժամանակ եր. բացի այդ յես այդ ժամանակ շատ փոքր եյի ու չեյի կարող հասկանալ այդ գեպքի նշանակությունը (նոր եր իրավունք իմ 11 տարին): Յեզ, յերբ պառկեցի քնելու, մտալըցել եյի Վլադիմիր Իլիչի մասին, դեռ բոլորովին շնասածում եյի Վլադիմիր Իլիչի մասին, դեռ բոլորովին շնասալով ու զարմանալով, վոր նրա գալու առթիվ հականալով յե հազարավոր ժողովուրդ վաղջունելու նրա գարվելու յե հազարավոր ժողովուրդ վաղջունելու նրա գալուստը:

Մինչ այդ յես Վլադիմիր Իլիչին ձանաչում եյի մի-

այն իլինիչնայի պատմածներից, լուսանկարներից, տեսել  
ելի նրա գրած զբքերը: Նրա վերջին լուսանկարը Շվեյ-  
ցարիայից մենք մոտ ժամանակներս ելինք ստացել, փորի  
մեջ նա ինձ շատ եր զյուր դալիս. այդ լուսանկարում նա  
գուրս եր յեկել ուրախ, ծիծաղաղեմ, ժպիտից կուշ յե-  
կած աչքերով, և նրա ամբողջ դեմքը շնչում եր բարե-  
սրտությամբ ու քնքշությամբ:

Իոկ մյուս որը, առավոտյան հենց իրեն, Վլադիմիր  
իլիչն տեսա:

Դեռ յես նոր ելի գնում լվացվելու, իսկ միջանցքում  
իմ սենյակի գեմուղեմ կանգած եր Վլադիմիր իլիչը, ար-  
գեն լվացված, և, փնչացնելով, յերեսն ու գլուխն եր սըր-  
բում յերեսսրբիչով: Դեմքը նույն եր, ինչպես նկարում,  
միայն, և հարկե, փոչ անպես սպիտակ, նույն խուզած  
բեխերը, փոքրիկ միրուքն ու աչքերը, ծիծաղկոտ, կուշ  
յեկած մանրիկ աչքերը:

— Հը, բարե, բարե, — ասաց նա, վատ արտասանե-  
լով «ը» տառը և մեկնելով ինձ դեռ ևս խոնավ ձեռքը:  
Յես բարեկցի նրան, շարունակ ներքնապես շփթվելով ու  
տարակուսելով: Արդյոք սրան են այս զիշեր հանդի-  
սավոր դիմավորել, բայց սա սովորական մի մարդ և մի-  
ջահասպակ, ճաղատ, փորի պատճառով ճակատը շատ մեծ և  
յերեւում, առողջ, լիքը, և բարեւում է ինձ ձեռք տալով և  
այնպես փաղաքշելով, ուրախ հանաքով: «Պետք ե վոր  
շատ, խելոք լինի», մտածեցի յես, նայելով նրա ճաղատ  
զլիսին:

Յեվ յես միանգամից համակրանք զգացի գեպի նա:

Հենց նույն որը բաղդ ունեցա առաջին անգամը կյան-  
քումս առանց փող վճարելու պտույտ կատարել ավտոմո-  
բիլով: Հեմ հիշում ուր, միայն գիտեմ զնացինք զրոյ մե-  
քենա բերելու: Իսկ Վլադիմիր իլիչը այդ ավտոմոբիլով

ամեն որ գնում եր Սմոլնի, վերագառնում եր այնտեղից  
ուրախ և հանգիստ առնելու համար յերկար ժամանակ  
ինձ հետ եր ընկնում, իսկ այդ այնքան ել ինձ դյուր չեր  
գալիս, փորովինետե սեղմում եր ինձ կատվի ձագի նման  
և խուտուտ եր ածում վիզու: Բարեւում ես հետք, իսկ նա  
բանում ե ձեռքդ, ապա ամբողջովին բռնում, և սկսում  
եր այնպիսի ոյիններ խաղալ զլխիդ, փոր միայն ծվծվոցդ  
եր լսվում: Այսպես, մի անգամ ինձ աջողվեց նրա ձեռ-  
քից դուրս սրբնել և փախչել սեղանի յետեր, մտածելով.  
Փոր գոնե սեղանի վրայով չի անցնի ու բռնի ինձ: Վլա-  
դիմիր իլիչը, առանց յերկար մտածելու, ընկավ սեղանի  
վրա, փորը շուռ գալու հատկություն ուներ, յերբ հեն-  
վում ելին մի կողմին, և մեկնեց ձեռքերը, ցանկանալով  
բռնել ինձ: Յես սողացի սեղանի տակ, իսկ Վլադիմիր ի-  
լիչը զլխի վայր զլորվեց հատակին, հետք շուռ բերելով  
ջրամանը, ծաղկամանը և թերթերը: Բարեբախտաբար ջը-  
րամանը չկոտրվեց, բացի այդ դատարկ եր: Մենք յեր-  
կուսս ել վեր կացանք և հրճուալով բոլորը հավաքեցինք և  
դրինք իրենց տեղը:

Այսպես անցնում ելին որեր որերի յետերից:

Ծուտով Վլադիմիր իլիչը ստիպված եր թագնվել, վո-  
րովինետե ուղում ելին նրան ձերբակալել: Վլադիմիր ի-  
լիչը, ինչպես հայտնի յե, գնաց Ֆինլանդիա: Այդ ամառը  
յես Լենինգրադում չելի: յերկու ամսով Սարատով ելի  
զնացել ծնողներիս մոտ: Ինձ հետո պատմեցին, փոր իմ  
բացակայության ժամանակ տեղի յեր ունեցել հետեւալը.

Հաղիկ եր Վլադիմիր իլիչը կարողացել թագնվել,  
յերբ այն տունը<sup>1)</sup> ուր ապրում ելինք մենք, շղթա կապած՝  
շրջապատում են զինվորները և մեր բնակարանում խիստ

1) Այդ տունը գտնվում է Շիլովկայա փողոցի վրա, Լենին-  
գրադի կողմից, № 48:

Խուզարկություն են կատարում: Փնտըռում եյին, ի հարկե, վլադիմիր իլիչին: Խուզարկություն եյին կատարում այսպես անվանած հակա-հետախույզները: Նրանց հրամայված եր գանել և ձերբակալել լենիսին, և ահա ժամանակավոր կառավարության այդ հլու ծառաները կատաղի կերպով գործի եյին կպել: Վորտեղ ասես նրանք չեյին փնտրել իլիչին.—պահարաններում, սնդուկներում, զամբյուղներում, արկղներում. խուզարկուներից մեկը նույնիսկ թանաքամանի մեջ ե նայել:

— Զլինի թե դուք մտածում եք, վոր նա կարող ե թանաքամանի մեջ մտնել,—կես կատակով հարցը ե Մարկ Տիմոֆեյկիչը<sup>2)</sup>:

Խուզարկուն շարանում ե, բայց շարունակում ե բոլոր ծակու ծուկերը պլրպտել: Վերջիվերջո, չգանելով վլադիմիր իլիչին, նրանք վորոշում են իրենց հետ վերցնել Մարկ Տիմոֆեյկին, յերեխ «անհրաժեշտ տեղեկություններ» ստանալու համար, և տանում են նրան բեռնակիր ավտոմոբիլով: Միայն առավոտյան (այդ բանը տեղի յեր ունեցել դիշերը) նա վերադառնում է տուն, և յերբ յես վերադարձ լենինցին, նա պատմեց ինձ այս դեպքի մասին:

Տնկիցները շատ եյին վրդովվել Ա 24 բնակարանի անհանգիստ կենողների այսպիսի «անվայելուչ» վարք ու բարքից և պահանջել եյին, վոր մենք տեղափոխվենք: Այս ամբողջ «բունտի» մեջ մասնակցություն. ուներ նույնպես նրանց ավագ դուսապանը, յես նրան լավ եմ հիշում, անհամակրելի դեմքով, սի աչքանի:

Այս դեպքից հետո շատ անդամ եր նա բծախնդրություն անում իմ վերաբերմամբ դատարկ բաների համար, յերբ յես խաղում եյի բակում. հեռացնում եր բակից և

<sup>2)</sup> Մ. Տ. Ելիզարովը—Անսա իլինիչնայի ամսափնը, վորը լենինդրապում մեռավ բծավոր տիֆից 1919 թ. մարտի 10-ին:

ընտիր հայհոյանքներ եր շույլում, յերբ ուշագրություն չեյի դարձնում նրա ասածներին: Յես հավատացած եմ, վոր նա ոգնում եր հակա-հետախույզներին, ցույց տալով նրանց վլադիմիր իլիչի հետքը:

Պարզ ե, վոր տնկիցների այսպիսի բացարձակ վրդովմունքը չեր կարող տհաճելի հետևանքներ չունենալ, և մենք տեղափոխվեցինք ուրիշ բնակարան, վոչ այնքան հեռու հնից, Մալից պրոսպեկտի 25 բ. տունը:

Յերկար չանցած այցելեցին մեզ հակա-հետախույզները: Ընդհանուրիս կարծիքով, նրանց բերել եր մեր աղախինը, բայց սխալ եր բերել, ընդունելով Մարկ Տիմոֆեյկիչի բարեկամին, վորը հյուր եր յեկել. մեզ մոտ, Լենինի տեղ: Յեկ քիչ եր մնում, վոր նրան ձերբակալեն: Հազիկ կարելի յեղավ նրանց համողեր, վոր սա լենինը չե: Նազիկ կարելի յեղավ նրանց համողեր, վոր սա լենինը չե: Նրանք քննեցին հյուրի բոլոր փաստաթղթերը, համեմատեցին նրա դեմքը իլիչի լուսանկարի հետ և, վերջապես, տեցին նրա դեմքը իլիչի լուսանկարի հետ և, վերջապես, դնացին, նույնիսկ խուզարկություն չկատարելով:

Այդ բնակարանը վլադիմիր իլիչն իմ որոք միայն մի անգամ յեկավ: Բայց այս անգամ նա ինձ հետ ել չեր խաղում, լուրջ եր, բոլորը լուրջ եյին խսում: Այդ արդեն հոկտեմբերյան հեղափոխությունից հետո յեր:

Վլադիմիր իլիչի հետ ի միջի այլոց յեկել եր մի ինչ վոր ընկեր, վորը պատմում եր տաժանակիր աշխատանքի մեջ անցկացրած իր կյանքի մասին և թե ինչպես հեղափոխության շնորհիվ 2 տարի շահել եր: Նա դատապարտվության միջիվ 2 տարի շահել եր: Նա դատապարտված եր յեղել հինգ տարով, վորից անցել եր 3 տարի, ված եր յեղել հինգ տարով, վորից անցել եր 3 տարի, յերբ վրա յեր հասել հեղափոխությունը: Յես զարմանքով եյի լսում ու նայում նրան: Չե վոր իմ կողքին նստած չեր եյի լսում ու նայում նրան: Վե վոր իմ կողքին նստած չեր առաջարկան մի մարդ, այլ «տաժանակիր աշխատանքի դասովորական» մի մարդ, իսկ իմ զիմում այդ «աստիճանը» տապարտված» մի մարդ, իսկ իմ զիմում այդ «աստիճանը» կապված եր առնվազը վոճրագործի հետ: Յես դեռ չգիշապիված եր առնվազը վոճրագործի հետ:

տեյի, վոր քաղաքական գործերի համար ել տաժանակիր աշխատանքի եյին ուղարկում, և շարունակ մտածում եյի, վոր ինձ հետ միասին կողքիս նստած եմ մի մարդասպան:

Այլ ևս վլադիմիր իլիչին չտեսա մինչեւ 1918 թ. գարունը:

Հոկտեմբեր 25-ին սլայթեց հոկտեմբերյան փոթորիկը: Հարկ չկա զրա մասին զրել, ամենքին ել շատ լավ հայտնի յե, բայց յես կը նկարագրեմ միայն Կոնստանտինովյան գինվորական դպրոցի զրավումը, վորը մեզնից շատ հեռու չեր գտնվում (յերեսում եր լուսամուտից):

Հոկտեմբեր 29-ին եր: Առավոտյան ժամը 7-ից մեր տան մոտ սկսվեց հրացանաձգություն: Յես նայեցի լուսամուտից: Մյուս կողմում, մեծ, ընդարձակ բակում, ուր ընկած եյին հին սայլեր, մի խումբ մարդիկ նստած գնտակների տարափ եյին տեղում դպրոցի վրա: Յես մի անգամից նրանց «մերը» համարեցի, վորովհետև կրակում եյին յունկերների վրա, իսկ յունկերները «մեր կողմը» չեյին:

Յես շարունակ լուսամուտից նրանց եյինայում, չնայած վորով չափով կյանքս վասնգում եյի, վորովհետև պատահական գնտակները մեր սենյակն ել եյին ընկնում: Շուտով մերոնք փողոցի անկյունից քաշտալով թնդանոթ բերին և մի քանի րոպեյից հետո լուսամուտի տակ լավեց թնդանոթային վորոտը: Մեր լուսամուտաները զրկվեցին 3—4 ապակուց: Այդ ինձ շատ հաճելի յերեաց և ինձ համարյա ուժով կարողացան հեռացնել լուսամուտից և տանել խոհանոց: Յերկրորդ վորոտից հետո գուրս թռան ելի 3 ապակի, և այսուհետև ամեն ինչ խաղաղվեց: Յես նորից վազեցի լուսամուտի մոտ, և տեսա, թե ինչպես «մերոնք» վրա թռան և վազեցին դպրոցի կողմը:

Մեր աղախինը (արդեն ուրիշներ) գուրս վազեց փողոց

և, վերադառնալով, հաղորդեց, վոր յունկերներն արդեն պնձնատուր են յեղել:

Յես նույնպես փողոց գուրս յեկա: Դարբասի մոտ խմբվել եյին հետաքրքրվող տնկեցները, և խոսում եյին, թէ յունկերները պարզել եյին սպիտակ սավան կարմիր խաչով, ինդղելով զինագաղար՝ վիրավորների վերքերը կապելու համար, բայց քամին սավանը շուռ ե տալիս և ստացվում նամար, բայց յեկա: Իշխան անձնատուր լինելու: Բոլշևիկները թափվում են դպրոց և, դիմագրության հանդիպելով, առանց գժվարության գրավում են այն:

Յես տեսա այդ սավանը, նա կախված եր ինգանոթի հարվածից կողքի պատի մեջ առաջացած բացվածքում և շուռ եր յեկած. կար նրա վրա կարմիր խաչ թե վոչ, չոշում, իսկ դպրոցն այն աստիճան ջարդ ու փշուր եր յեղել զնտակներից ու թնդանոթի հարվածներից, վոր անձանաչելի յեր դառել:

## 2. ՄՈՍԿՎԱՆ ՅԵՎ ԿՐԵՍԼԸ 1918—19 Թ.

1918 թվի մարտին ժողովրդական կոմիսարների Խորհրդը և ՀկԳԿ տեղափոխվեցին Մոսկվա: Վլադիմիր իլիչը նույնպես պիտի գնար: Նրա հետ գնացին Մարիա իլինիչ-նան և Նադեժդա Կոնստանտինովնան: Մայիսի 16-ին մենք ել փոխադրվեցինք Մոսկվա և բնակվեցինք կրեմլում: Մի քանի որից հետո Մարի Տիմոֆեյիչը գտավ ինձ համար Ժիթի անցաթուղթ (այդ այս րոպեյիս ինձ մոտ պահպան այսուհետև յերբեմն այցելել Վլադիմիր իլիչին, Մահի), և յես սկսեցի յերբեմն այցելել Վլադիմիր իլիչին, Մահի, իլինիչնային և Նադեժդա Կոնստանտինովնային կամ բիշ իլինիչնային և Նադեժդա Կոնստանտինովնային:

այդ յերեքին:

Մերոնք ապրում եյին ՀԿԳԿ-ի շենքի 4-րդ հարկում։ Ժողկոմիորհրդի գրասենյակների շարքում, ունենալով իրենց տրամադրության տակ նախ 4, ապա 5 սենյակ (յերբ նրանց մոտ տեղափոխվեց Դիմիտրի Իլիչը), Բնակարանը մեծ չեր, բայց գողարիկ, տաք ու պարզ և հասարակ, սիրուն կահավորված։ Վլադիմիր Իլիչի սենյակը չորսից ամենափոքրն եր ընդամենը  $5 \times 7$  արշին մեծությամբ։ Յեզ այդպիսի փոքրիկ սենյակումն եր ապրում Իլիչը։ Սենյակում գտնվող կահարասիս այն ե—մահճակալը, թախտը, զրքերի պահարանը, փոքրիկ գրասեղանը, համեմատաբար այնքան մեծ տեղ եր բռնել, վոր 3 մարդ այդ սենյակում իրենց շատ ձնշված կլ զգային։

Ճիշտ ե, որքա մեծ մասը նա անց եր կացնում բնակարանից 30—40 քայլ հեռավորության վրա գտնվող ժողկոմիորհրդում, իր առանձնասենյակում, ընդարձակ, լուսավոր, կահավորված փափուկ կաշվե բազկաթոռներով, վորոնց վրա յես կարող եյի կանգնել միայն ծնկներիս, վորովինեակ վայր եյի ընկնում։ Իսկ ինքը՝ Վլադիմիր Իլիչը յերբեք չեր նստում նրանց վրա, այլ նստում եր հասարակ հյուսած աթոռին, մի սեղանի առաջ, վորի վրա թափված եյին թղթի կույտեր և զրքեր։ Առանձնասենյակի յերկու պատը բռնված եր զրքերի բարձր ապակյա պահարաններով։ Պատահում եր, մտնում յես տուանձնասենյակը, և Վլադիմիր Իլիչի միայն գլուխն ե յերկում, կուցած կարևոր պաշտոնական թղթերի, հոգվածների կամ զրքերի վրա։

Վլադիմիր Իլիչը վոչ խմում եր և վոչ ծխում և յերկումն ել հավասար չափով ատում եր։ Առանձնասենյակում նրա «ընդունարանի» սեղանի վրա դրած եր մոխրաման տումսակով. — «Ճիշտն արգելված ե», իսկ մեջտեղում Իլիչի ձեռքով կարմիր տառերով «խիստ»։

Յես սիրում եյի գնալ առանձնասենյակը Վլադիմիր Իլիչի մոտ։ Ինձ յերբեմն հարկավոր եյին լինում մի քանի զրքեր ու դասազրքեր, և նա առանձնացնում եր ուղարկ-



Աւելի յեզ Սվերդլովք Մարտի արձանի բացմանը Մոսկվայում

գելիք գրքերը մի առանձին պահարանում, վորտեղից յես միշտ կարող եյի այդ գրքերը վերցնել։ Գնալով նրա մոտ, յես միշտ նրա հետ մի վորեն բանի մասին խոսում եյի. նա յերբեք չեր բարկանում, յեթե յես իմ գալով նրա աշխատանքը խանգարում եյի. նույնիսկ, ընդհակառակը, ինքն անմիջապես խոսակցություն եր սկսում, մի կողմ գնելով իր գործը, հարց ու փորձ անելով ինձ իմ գործերի, առողջությանս, սովորելուս մասին այնպիսի հետաքրքրությամբ, փոր յես զարմանում եյի, թե ինչու նա հետաքրքրվում ե այնպիսի մանրիկ բաներով, վորապիք եյին իմ գործերը։

Յես թանգ եյի գնահատում նրա լավ վերաբերմունքը գեպի ինձ և աշխատում եյի չվարկաբեկել ինձ նրա աշքում։ Յեթե յես փառ եյի պարապում, իսկույն Աննա Իլինիչնան ասումեր ինձ. «Ի՞նչ կասի Վալոյյան, յեթե իմանա, փոր գու չես պարապում»։ Յեվ այդ թողնում եր ինձ վրա իր ազդեցությունը։

Վլագիմիր Իլիչն ինձ համար միակ մարդն եր, փորի հետ յես յերբեք չկովեցի, և կարող եր յերեակայել, թե ինչպիսի մարդ եր նա։ Յես հարյուր անգամ ձանձրացրած կը լինեմ նրան, իսկ նա յերբեք մի հատիկ բարկացած խոսք չի ասել ինձ։ Վերցրեք ձեզ համար ամենալավ մարդուն, — ծանոթի կամ բարեկամի, թեկուզ լինիք նրա ամենամոտիկ ընկերը, այսուամենայնիվ գեթ մի անգամ հայնոյած կը լինիք իրար, թեկուզ 5 րոպեյով, իսկ կովելու, վիճելու մասին խոսելն ել ավելորդ ե։ Ինչ վերաբերում ե ինձ, յես Վլագիմիր Իլիչի հետ յերբեք չեմ վիճել, և միթե կարելի յեր նրա հետ վիճել։ Միթե յեղել ե մեկը, յերբեկցե, փոր կարողանար առարկել Վլագիմիր Իլիչի ասածներին։ Վհչ փոք և վհչ մի ժամանակ։

1918 թվի ամառվան վերջը Մարկ Տիմոֆեյիչը և Աննա Իլինիչնան հիվանդացան նշանավոր «իսպանկա» հի-

վանդությունով և ինձ առ ժամանակ ուղարկեցին Գորկի «մերոնց» մոտ ապրելու, մինչև Մարկ Տիմոֆեյիչի և Աննա Իլինիչնայի առողջանալը, վորովհետեւ վախենում ելին, չվիճի թե յես ել վարակվեմ ու հիվանդանամ։ Կարծեմ այդ առաջին անգամն եր, փոր Գորկի գնացի։

Գորկին չափազանց սիրուն տեղ ե, միանգամայն համապատասխան իր անվան. առաջ Մոսկվայի քաղաքապետ Ա. Ա. Ռեյնբուտի կալվածն եր։ Այդ կալվածում կարտնտեսական խորհուրդ, լավ կահավորված հիվանդանոց և ելեքտրական կայարան, փորից ներկայումս ողտվում ե Գորկի գյուղը։ Մի շաբաթ ապրեցի Գորկիում, վորովհետեւ Վլագիմիր Իլիչը պետք ե նորից Մոսկվայում լիներ, մնացած ժամանակ ապրեցի նրանց մոտ իրենց բնակարանում։

Մոսկվա փոխադրվելու առաջին տարիները Վլագիմիր Իլիչն առաջվա նման ուրախ եր և սիրում եր, առանձնասենյակից վերադառնալուց հետո, ինձ հետ ընկնել, այնպես փոր յես շարունակ վորեն տեղ թագնվում եյի նրանից։ Մի անգամ, ինչպես յեղավ, նա բռնեց ինձ, պառկեցրեց մեջքիս վրա, նստեց բաղկաթուին և ինձ հրեց նրա տակը, զլուխս առաջ, բռնելով վոտքերից։ Յես մի կերպ գուրս պլրծա մյուս կողմից և սողացի սեղանի տակ, հուսալով, փոր չի բռնի։ Վլագիմիր Իլիչը, առանց յերկար մտածելու, չորեքթաթ ներս սողաց և, բռնելով վոտքերից, հաղթական տեսքով գուրս քաշեց ինձ։ Այսպես միշտ մտածում եր նա մի վերեւ ոյին խաղալ գլխիս ու չնայելով «Ճարդ ու բուրդ» լինելուս, այս բոլորը ինձ համար ել զվարճալի յեր։

Ճաշից հետո եյին բերում պոստը՝ լրագրեր, ամսագրեր, ծրագրներ և այլն։

Լրագրերը տալիս եյի, իսկ մնացած ամբողջ պոստը

յես եյի վերցնում: Այդ քաղաքացիական կովի ժամանակ եր, և Վլադիմիր Իլիչին շատ տեղեկություններ եյին ուղարկում զորաճակատից, բայց այդ տեղեկությունները նա չեր կարդում, փորպեսզի ավելորդ ժամանակ չկորցնի, փորովհետև այդ բոլորը թերթերում տպվում եյին: Յեվանա յես մի կողմ եյի գարսում այդ ծրարները, տալիս եյի Վլադիմիր Իլիչին անհետաձգելի գործերին վերաբերող ծրարները, Նադեժդա Կոնստանտինովային - իր նամակները, իսկ Մարիա Իլինիչնային ի միջի այլոց տալիս եյի Վլադիմիր Իլիչի մասնագոր նամակները: Մարիա Իլինիչնան նախորոք կարգում եր այդ նամակները, փորպեսզի չծանրաբեռնի Վլադիմիր Իլիչին զանազան դատարկ նամակների ընթերցանությամբ, փորպիսի բովանդակություն ունեցին հաճախ այդ նամակները: Իսկ ինձ պահում եյի պատկերագրությամսագրերը, հետաքրքիր գրքույկները և ուրիշ այլ բաներ: Կարգի բերելով այդ ծրարները, յես ինձ բախտավոր եյի զգում, փոր ոգնում եմ Վլադիմիր Իլիչին, ազատելով նրան ավելորդ աշխատանքից, իսկ նա հանաքով ինձ անվանում եր իր «անձնական քարտուղարը»: Յես գոհ եյի և հպարտանում եյի դրանով, մինչև անդամ գրեթե լուրջ հարցնում եյի նրան՝ չի կարելի արդյոք, փոր յես ընդմիշտ մնամ փորպես այդպիսին:

Ոգոստոսի 30-ին մահափորձ կատարվեց Վլադիմիր Իլիչի կրանքի դեմ: Յես այդ ժամանակ ապրում եյի Մոսկվայից 10 վերստ հեռավորության վրա, Կունցեկ մանկական գաղութում: Իմանալով այս պատահածի մասին, յես պատրաստվեցի ու փող չունենալուս պատճառով փոտով յեկա քաղաք: Քաղաքում արգեն պատերին փակցված եյին բյութեաններ Վլադիմիր Իլիչի առողջական գրության մասին:

Ամուր որգանիզմը յերկար ու համառ կովում եր հաս-

ցրած վերքի դեմ: մի գնտակ անցել եր թիակի տակով և կանգ եր առել ձախ կողմից վզի մկաններում: Այդ գընտակը հետո հանեցին, իսկ մյուսը հենց այդպես ել մնաց Վլադիմիր Իլիչի մարմնի մեջ:

Յերբ նա սկսել եր արդեն լավանալ, ինձ մի բողեյով թողեցին նրա սենյակը մտնել, միայն այն պայմանով, փոր չխոսեմ, փորովհետև Վլադիմիր Իլիչը դեռևս շատ թույլ եր:

Հետո ներս մտա նրա մոտ: Նա պառկած եր մահճակալի վրա, նիհարած, դժգույն, նվազ, բայց այնուամենայնիվ ուրախ, և ժպտաց, յերբ ինձ տեսավ: Նորից, առաջվա նման, գիմեց իր «բարե, բարե» խոսքերով և ծիծաղեց:

Յես ուղղակի զարմացա, թե այդպիսի ցավի մեջինչպես եր կարողանում նա ուրախ ծիծաղել: Մեկ ու կես ամսից հետո նա բոլորովին առողջացավ: Սկզբում, յերբ այնքան եր կազդուրվել, փոր կարող եր ման գալ, վերցնում եր ձեռքին հինգ գրվանքանոց արձիճի գնտակիկներով լցրած քսակ, փորպեսզի ձեռքի կոտրած փոսկորը կանոնավոր առողջանա: Հետագայում այդ քսակը ինձ մնաց մարմնամարզական վարժությունների համար, իսկ Վլադիմիր Իլիչն իր ձեռքի և ուսի աշխատունակությունը չափելու համար աշխատում եր բոնել իր ականջը, փորը սկզբում շատ դժվարությամբ եր աջողվում: Վերջի վերջու առողջ, ուժեղ որգանիզմը հաղթող հանդիսացավ և Վլադիմիր Իլիչը կանոնավոր առողջացավ:

Շուտով վրա հասավ մի խոշոր գժբախտություն ել: — Լենինգրադում 1919 թվի մարտի 10-ին բծավոր տիֆից փախճանվեց Մարկ Տիմոֆեյկիչը: Աննա Իլինիչնան գեռ առաջուց եր գնացել հիվանդ մարկ Տիմոֆեյկիչը մոտ, իսկ յերբ նրա մահվան բոթը ստացվեց, Վլադիչի մոտ:

դիմիր իլիչը, Մարիա իլինիչնան և յես գնացինք լենին-գրադ թաղմանը մասնակցելու:

Թաղումից հետո բոլորովին անսպասելի կերպով Վլա-զիմիր իլիչը հանդես յեկավ յերկու-յերեք ժողովում: Յես ներկա եյի գրանցից մեկին, վոր Ժողովրդական տանն եր: Նրան դիմավորեցին այնպիսի խլացուցիչ ծափահարու-թյուններով, վոր Վլագիմիր իլիչը յերկար ժամանակ հնա-րավորություն չուներ իր ճառը սկսելու: Բայց ինչպես եր խոսում նա, պարզ, հասկանալի, գրավիչ, և թեև յես շատ բան չելի հասկանում նրա խոսածներից, այնուամե-նայնիվ ուշադրությամբ լսում եյի և ապշել՝ եյի նրա խոս-քերի և արտահայտությունների այն անվերջ քանակու-թյունով, վոր արտասանում եր նա: Յեվ հարցուրավոր բանվորներ նայում եյին և հանդիսավոր քարացած դրու-թյան մեջ լսում նրան: Լենինդրադում մենք ընդամենը հինգ որ մնացինք ու վերադարձանք Մոսկվա:

### 3. ԿՐԵՍԼ ՅԵՎ ԳՈՐԿԻ

Ինչպես արդեն ասացի, Վլագիմիր իլիչը որվա մեծ մասն անց եր կացնում իր առանձնասենյակում. տուն եր դալիս միախ ուտելու և քնելու ժամանակ: Առանձնապես խառը ժամանակ, քաղաքացիական կոիմերի յեռուն որե-րին, յերբ հանրապետությունը յերկաթե ողակի մեջ եր ընկել, նա իր առանձնասենյակում շատ ժամեր եր անց-կացնում աշխատանքի վրա:

Ճաշից հետո սովորաբար նա մի ժամի չափ պառկում եր նիրհելու: Հազվագյուտ դեպքերում հանգստանալու հա-մար զբոսնում եր կրեմլի պարապի մոտի այգում, ուր յես յերբմն հանդիպում եյի և ուղեկցում եյի նրան, իսկ նա

միշտ հարց ու փորձ եր անում իմ գործերի, դպրոցի և իմ մասին:

Յերեկոները, շաբաթը մեկ-յերկու անգամ նա գնում եր քաղաքից դուրս մաքուր ող ծծելու և հրավիրում եր Աննա իլինիչնային ու ինձ մասնակցելու այդ պառլյատին: Ի միջի այս պիտի ասել, վոր նա այնքան ել չեր սի-րում ընկերովի զբոսնել և զբոսնում եր անտառում, հե-ռու մարդկանցից և, զբոսնելով, շարունակ ինչ-վոր բանի մասին եր մտածում, մտածում...

Վլագիմիր իլիչը վորսորդություն ել եր սիրում և իր յեղոր՝ Դիմիտրի իլիչի հետ գնում եր վորսի, յերբեմն ամբողջ գիշերը, վարպեսզի առավոտն արշալուսին սկսեն վորսը, և զիշերում եյին նրանք զյուղում վորեե տեղ: Մի անգամ 100 վերատից ավելի եյին գնացել, հասել հա-մարյա Տվերի մոտերքը: Դիմիտրի իլիչը կատաղի վոր-սորդ եր, իսկ Վլագիմիր իլիչը, ճիշտն ասած, ենքան ել աչքի ընկնող վորսորդ չեր, և նրա աջող վորսերի թիվը մեծ տոկոս չեր կազմում, բայց, ըստ յերեսություն, նրան դյուր եյին գալիս մամնավորապես վորսորդության պարագա-ները, վորի ժամանակ նա թեկուզ մի քանի ժամով գա-գարում եր մտածել կրեմլում մնացած անվերջ գործերի մասին և ամբողջովին կլանվում եր բնությունով ու վոր-սորդությունով: Վերադառնում եր վոզորդությունից ուշ յերեկոյան, հոգնած, ֆիղիքապես տանջված, բայց հանգըս-տանալուց հետո կազդուրված եր մտավորապես ու հոգե-պես ու միշտ ել ուրախ, յերշանիկ, զոհ, և մի հայացքով թարմություն ու ուրախություն եր ներշնչում ուրիշ մարդ-կանց մեջ: Մեկ յերկու ժամ հանգստանալուց հետո Վլա-գիմիր իլիչը թարմացած ուժերով և նոր յեռանգով գոր-ծի յեր կպչում:

Գորկիում յեղած ժամանակ Վլագիմիր իլիչը ժամե-

ըով զբոսնում եր պուրակում ու անտառում և հոգնածություն չեր զգում: Շվեյցարիայում, պանդխտության տարիներին, զբոսանքների ժամանակ շատ անգամ եր մագրեցել լեռները, և մշտական մաքուր լեռնային ողի ու նման մագլցումների չնորհիվ նա ձեռք եր բերել զարմանալի տոկունություն: Նա շատ եր սիրում քայլել, քայլել կարողանում եր շատ յերկար ու բավական արագ, այնպես վոր Գորկիում զբոսանքի ժամանակ Վլադիմիր Իլիչի պաշտպանողական պահակի աշխատակիցները, վորոնք հետևում եյին նրան քայլ առ քայլ, հաճախակի գանգատվում եյին, ծիծաղելով, վոր նա շատ արագ ե քայլում և այնպես ե իրենց մոլորեցնում, վոր նրանք նրա հետքը կորցնում են ու յերկար փնտում, մինչև վոր նորից գտնում են: Հապա ինչպես, չե՞ վոր Վլադիմիր Իլիչը շատ անգամ ե մոլորեցրել իրեն հետախուզողներին, միայն թե առաջ նա ծածկվում եր ցարական լրտեսներից, իսկ այժմ—իր սեփական պահապաններից: Նա բոլորովին չեր սիրում պահապաններունենալ, հաճախ ճարպիկությամբ խուսափում եր նրանցից և հաշտում եր այդ բանին, միմիայն վորպես անհրաժեշտություն: Կը եմում շատ անգամ եր տան յետեր դոնից ծածուկ դուրս գնում, և այդ ժամանակ իրարանցում եր առաջ գալիս նրա անհայտանալու պատճառով:

Վլադիմիր Իլիչը սիրում եր ամառները լողանալ: Գորկիում, մոտավորապես տանից մի վերստ հեռավորության վրա, հոսում ե գեղեցիկ, վոլորապտույտ Պախրա գետակը 25—30 սաժեն լայնությամբ: Մենք նավակով անցնում եյինք մյուս ավազոտ ափը և այնտեղ լողանում: Վլադիմիր Իլիչը կարողանում եր խցանի նման լող տալ, իսկ յետակագին ջրի յերեսը չեյի կարողանում լավ մնալ և արագ լող տալ, ինչպես նա յեր լող տալիս, այնպես վոր շուտ եյի շնչակտուր լինում, և Վլադիմիր Իլիչն արագությամբ

համնում եր յետերիցս: Վրա համելով, սկսում եր ինձ ջրի մեջ այնքան սուզել ու հանել, մինչև վոր յես խնդրում եյի ինձ բաց թողնի. զրանից հետո ինձ հանգիստ եր թողնում, և յես ափ եյի համնում, փնչացնելով, դուրս թքելով: Այսպես թե այնպես յերկուսս ել համույք եյինք ստանում այդ բոլորից, և անցնելով մյուս ափը, ուրախ վերադառնում եյինք ճաշի:

Լավ յեղանակներին թեյը տերրասում եյինք խմում, և Վլադիմիր Իլիչը բաժակը ձեռքին յետ ու առաջ եր քայլում, և այնքան եր գնում գալիս, վոր յես հանգը նկատում եյի. «Ել ինչու համար եք, Վլադիմիր Իլիչ, ավտոմոբիլով ման գալիս, քանի վոր դուք այնքան շատ եք ման գալիս, վոր, ճիշտն ասած, վոտով արդեն Մուկվա հասած կը լինելիք», և նույնպես հանգը ամեն մի հինգ րոպեն համարում եյի. «ահա արդեն 5... 10... 12... վերստ անցաք»:

Վլադիմիր Իլիչը փաղաքշանքով ժպտում եր իր սիրելի, բարի ժպիտով, վոչ մի խոսքով չեր պատասխանում և ելի շարունակում եր քայլել: Ով գիտե, գուցե այդ վարկանին կարևորագույն քաղաքական հարց եր վճռում (կամ վորեւ յերկրի, հեղափոխության բախտը)... Ով ե իմանում, ինչ եր կատարվում նրա հսկա ուղեղում...

#### 4. ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆԸ

Իսկ ժամանակն առաջ ու առաջ եր շարժվում...


1922 թվի գեկտեմբերին Վլադիմիր Իլիչի որգանիզմը չգիմացավ իր ուժերից վեր յեղած բեռին. վերջին ժամանակները Վլադիմիր Իլիչն այնքան եր աշխատում, վոր նրա փոխարեն, թվում ե, 20 մարդ արդեն տապալված կը լինեյին, իսկ Իլիչը դիմանում եր: Բայց նա ել, վերջա-

սպես, չդիմացավ և անկողին ընկավ։ Մինչ այդ նա թեթև եր հիվանդանում, վորի պատճառով աշխատանքը մի քանի որով եր ընդհատվում, բայց նա շատ արհամարհանքով եր վերաբերվում դեպի այդ հիվանդությունները և հազիվ լավացած՝ նորից աշխատանքի յեր լծվում, ջանալով կորցրած ժամանակի պակասն ել լրացնել։ Յեզ բժշկվել ել չեր սիրում։

Այսպես, ուժերից վեր աշխատեց նա մինչև իր հիվանդությունը։ Պառկած անկողնում, նա գործերը չթողեց. կարգում եր, յերբեմն-յերեմն թերթի համար հոգվածներ եր թելադրում։ Նրա հիվանդությունը արագ թափով դեպի վասն եր գնում. կարձ ժամանակից հետո նըրա մարմնի աջ կողմը կաթված ստացավ և նա կորցրեց խոսելու ընդունակությունը։ Հիվանդության որերին յերկար ժամանակ նրա մոտ վոչ վոքի չեյին թողնում, բացի Մարիա Իլինիչնայից և Նադեժդա Կոնստանտինովնայից, վորոնք նրան խնամում եյին հիվանդության ընթացքում։

1923 թվի ամառը նա սկսեց հետզհետե, դանդաղորեն լավանալ։ Թերթերում հաղորդվում եր, վոր Վլադիմիր Իլիչի առողջական դրությունը զգալի չափով դեպի լավն ե գնում. նրան թույլ եր արված թերթեր կարդալ, և նա արդեն կարողանում եր փայտով մի քիչ ման գալ։ Շատ ժամանակ անցավ, մինչև վոր նա կարողացավ այդ բոլորն անել։

Ամբողջ հիվանդության ընթացքում յես միայն հունիսին առաջին անգամ տեսա հիվանդ Իլիչին. Յես յեկել եյի Գորկի և, զբոնելիս, պատահմամբ տեսա, թե ինչպես անիվավոր բազկաթոռի վրա դրած բերին նրան։ Դեռ ևս ինձ թույլ չեր արված մոտենալ նրան, և յես, թաղնված ծառի յետեր, նայեցի նրան, թեև, դժբախտաբար, չկարողացա դիմագծերը լավ տեսնել։ Մի ուրիշ անգամ յես,



Վլադիմիր Իլիչը հիվանդ ժամանակ

զբոնելիս, ճանապարհի մոտ ծաղիկներ եյի քաղում, ուր, կարծում եյի, Վլադիմիր Իլիչին զբոսանքի չեյին բերի։ Անսպասելիորեն թփերի յետեր նրան բերին բազկաթոռի վրա դրած։ Նրա հետն եյին Մարիա Իլինիչնան, Նադեժդա Կոնստանտինովնան, բժշկապետ Մոզանովը։ Նրան բերում եր ընկեր Պակալովը, պահապան խմբի գլխավորը։

Յես ինձ կորցրի. Մի կողմից, ինձ արգելված եր Վլադիմիր Իլիչի զբոսնելու ժամանակ մտակայքում զբոս նել, վորովհետև մեկին տեսնելիս նա սկսում եր հուզվել: Մյուս կողմից յես հանկարծակի եյի յեկել և վախեցա թագնվել կամ փախչել, վորպեսզի այդպիսով չփախեցնեմ Վլադիմիր Իլիչին: Յեվ այդպես կանգնած մնացի, գլուխս կորցրած, բայց հոգուս խորքում գոհ եյի, վոր ինձ աջողվեց տեսնել Վլադիմիր Իլիչին: Չգիտեմ, նա ինձ նկատեց թե վոչ:

Նրան անցկացրին, և յես գնացի տուն ծանր ու ճնշված տպավորության տակ: Համարյա հույսս կտրեցի, թե նա յերբեցէ կառողջանա. նրա կերպարանափոխված դեմքը շատ զարմացրեց ինձ:

Շուտով յես Լենինգրադ գնացի Կալինինի անվան պոլիտեխնիքական ինստիտուտը մտնելու: 1923 թվի դեկտեմբեր 21-ին, ձմեռային արձակուրդներին տուն յեկա Մոսկա: Մեկ-յերկու որից Աննա Իլինիչնայի հետ միասին Գորկի գնացինք, ուր յես կարող եյի «պաշտոնապես» տեսնել Իլիչին, վորովհետև նա արդեն բավական լավ եր զգում իրեն: Յես անհամբեր սպասում եյի տեսնել նրան և իմանալ, թե ինչպես ե դառել իմ բացակայության ժամանակ:

Մենք Գորկի հասանք հենց ճաշի ժամանակ. մտանք առաջին հարկի մեծ դահլիճը, ուր սովորաբար ճաշում եյին և ուր պիտի իջներ նաև Վլադիմիր Իլիչը: Յես սաստիկ հուզված եյի և սիրոս սաստիկ բարախում եր:

Նրան դահլիճ բերին: Նա նստել եր ուրախ, պայծառ հայացքով, ժպտուն, առողջ, —մի խոսքով իմ առաջ նորից նստած եր Վլադիմիր Իլիչը: Նրա արտաքինն ուղղակի փառավոր եր, տեսքը շատ լավ, միայն ծնկներին ընկած անկենդան կիսածոված աջ ձեռքը անիվավոր բազկաթո-

ում նստած լինելը այնուամենայնիվ հիշեցնում եյին, վոր նա դեռևս լիովին առողջացած չե:

Նրա աչքերում կար ինչ-վոր անբացատրելի, հազիվ նշմարելի հիվանդության կնիք, և յերբ նա մտածում եր, կամ ինձ մոտիկից նայում հառած հայացքով, թվում եր, վոր նա թափանցում եր իմ ներսը:

Յերբ նրան դահլիճ բերին, յես մոտեցա: Նա նստել եր բազկաթոռում, ուրախ ժպտում եր, և տեսնելով ինձ, սկսեց գլխով նշան անել և ձախ ձեռքը մեկնեց, արտասանելով ուրախ, բայց մի քիչ շնչակտուր, վոչ բարձր ձայնով. —«այ-այ-այ, այ-այ-այ» — ձայնի այնպիսի յելնեցով, վոր յես մի անգամից հասկացա, վոր նա ինձ ասում ե հին, ծանոթ «բարե, բարե»-ը: Յես մոտեցա նրան և զգուշությամբ սեղմեցի մեկնած ձեռքը: Այն աստիճան հուզվել եյի, վոր վոտներս գողում եյին, և նույնիսկ հազիվ կարողացա մրմնջալ. «Բարե ձեզ, ինչպես եք»:

Ճաշի ժամանակ յես մի փոքր հանգստացա և համառոտակի պատմեցի նրան, վոր արդեն ավարտել եմ բանֆակը, մտել եմ համալսարան և այժմ, արձակուրդներին հյուր յեկել:

Վլադիմիր Իլիչը ժպտալով լսում եր ինձ և պատասխանում եր գոհունակությամբ՝ «այ-այ-այ»: Իսկ յես ճաշի ընթացքում ամբողջ ժամանակ աչքերս նրանից չեյի հեռացնում, ուրախանալով, վոր նա այդքան լավացել ե:

Վլադիմիր Իլիչի որն այսպես եր անցնում: Առավոտյան, արթնանալով, սանիտարի ոգնությամբ լվացվում եր և ցած իջնում թեյի: Մինչև առաջին հարկը նա ինքն եր իջնում, հետո նրան նստեցնում եյին բազկաթոռի մեջ և ապա մտնում եր դահլիճ, մոտենում սեղանին, ժպտուն, թարմ:

Առավոտյան թեյից հետո նա կամ սահնակով վորսի

յեր գնում, կամ զբոսնում եր պուրակում. Նրան տաճում եր ընկ. Պակկալը, ուղեկցում եր Նադեժդա Կոնստանտինովան յերկու շնիկների հետ. վերջնները թռչոտելով և փաղփելով զվարձացնում եյին Վլադիմիր Իլիչին, իսկ Նադեժդա Կոնստանտինովան նրանց կերակրում եր շաքարով: Յես նրա հետ պուրակում միայն մի անգամ զբոսնեցի: Այդպիսի շրջագայությունը, ըստ յերեսույթին, այնքան ել չեր հետաքրքրում նրան, վորովհետեւ արդեն ձանձրալի յեր դառել, բայց նա ծիծաղում եր, յերը շնիկները ճարպիկությամբ դես-դեն եյին ընկնում, թափալզլոր գալիս: Յես ել եյի աշխատում զվարձացնել նրան, ընկնելով նրանց հետ ձյուների մեջ: Հետո բարձրանում եյի ինչ-վոր արձանի պատվանդանի վրա, չքացած արձանի դիրքը տալիս ինձ, և ի լրումն այս բոլորի, սալտոյմորտալ եյի անում, պատւյտ գալով ողի մեջ, վորը շատ ծիծաղելի յեր յերեսում Վլադիմիր Իլիչին, և նա յերկար ժամանակ ծիծաղում եր իմ ոյինբաղության վրա:

Որ ու մեջ նա վորսի յեր գնում: Նրան տաք հագցնում, նստեցնում եյին սահնակ, և նրա կողքին նստում եր ընկեր Պակկալը, վորպեսզի յետեկից բռնի նրան. լայն սահնակով ել նրան ուղեկցում եյին պահապաններից մի քանի հոգի վորսի հրացաններով, իսկ ովքեր չունեյին՝ սովորական հնացան եյին վերցնում:

Այս շրջագայությունը շատ քիչ եր նմանվում վորսի, վորովհետեւ միշտ ել «դատարկածեռն» եյին վերադառնում. պարզաբես հաճելի յեր զբոսնել անտառում սահնակով: Վլադիմիր Իլիչը սառնամանիքից չեր վախենում և ճաշին վերադառնում եր շարունակ գոհ և մշտական ժամանով, և այն հարցին, թե արդյոք չի մըսել նա ուրախ պատասխանում եր բացասաբար՝ «այ, այ»: Այնուհետեւ նստում եյին ճաշի:

Վլադիմիր Իլիչի ախորժակը բավական վատ եր և նա քիչ եր ուտում: Յես հաճախակի եյի առաջարկում նրան ինձնից որինակ վերցնել, և նա փաղաքշորեն ծիծաղում եր: Յերբ նա վորեւ կերակուր չեր հավանում, չափազանց ծիծաղելի ծամածություններ եր անում և խորամանկ տեսքով նայում մեզ: Մի խոսքով ճաշն անցնում եր հանաքներով ու զվարձալի: Մենք բոլորս ել աշխատում եյինք թույլ չտալ, վոր Վլադիմիր Իլիչը տիրի, միշտ ուրախ խոսակցություն եյինք սկսում, հաճախ դիմելով նրան:

Ճաշերից հետո սովորաբար նա հանգստանում եր, ժամը 4—5-ին լինում եր թեյ, իսկ 8-ին ընթրիք:

Ընթրիքից հետո բերում եյին վոչ այնքան մեծ կինոալպարատ ձեռքի ելեքտրոմոտորով և վորեւ նկար ցույց տալիս, գլխավորապես կոմիքական, վորին կցում եյին զվարձալի նկատողություններ, վորով Վլադիմիր Իլիչին մինչև արտասվելը... ծիծաղեցնում եյին: Ամեն անգամ մեկ մասից ավելի չեյին ցույց տալիս, վորպեսզի Վլադիմիր Իլիչին չհոգնեցնեն: Կինո-սեանսից հետո նա գնում եր իր սենյակը և Մարիա Իլինիչնայի, Նադեժդա Կոնստանտինովնայի և սանիտարի հետ միասին խոշորագիտակով (սաերեսկոպ) զանազան նկարներ եյին նայում:

Յես, վոր շատ քիչ եյի լինում և չգիտեյի թե յերեկոներն ինչ են անում այնաեղ, գնում եյի կամ զբոսնելու, կամ մի ուրիշ տեղ: Մի անգամ ինձ ասացին, վոր Վլադիմիր Իլիչը կանչում և ինձ վերե, իր մոտ: Յես չհավատացի, հանաքի տեղ ընդունեցի և չգնացի: Շուտով իմ յետեկից յեկան ու հրամայեցին անմիջապես զնալ, ասելով, վոր Վլադիմիր Իլիչն անպայման պահանջում ե ինձ:

Բանից յերեաց, նա ցանկացել եր, վոր յես ել զնայի նկարները նայելու, և առանց ինձ չեր ուղեցել նացել: Եր

ցանկությունները նա արտահայտել չեր կարողանում, և յերկար ժամանակ մտածել եյին, թե ինչն է պակաս, վերջապես գլխի եյին ընկել և ուղարկել եյին իմ յետեից: Յես գնացի և միասին սկսեցինք նայել, ամեն մի նկարին կցելով սրախոսություններ և ուրախ նկատողություններ:

Դրանից հետո յես աշխատում եյի ամեն գիշեր վերև դնալ նկարներ նայելու, և Վլադիմիր Իլիչը միշտ ուրախ զիմավորում եր ինձ իր «այ, այ, այ»-ով, յերբ յես յերեցում եյի:

Դեկտեմբերի 25-ին յերեխաների համար նույն դահլիճում կաղամակերպել եյին մի մեծ տոնածառ: Սկզբում մտածում եյին տոնածառը լուսավորել ելեքտրական լամպերով, բայց շփվելով մետաղե թելերի հետ լամպերի կեսը այրվեց, և տոնածառը լուսավորեցին փոքրիկ լամպերով ու մոմերով: Հավաքվել եյին մոտ 10 յերեխա, վորոնք սկզբում մի քիչ քաշվում եյին և շփոթվում, բայց շուտով ընտելացան և ուրախ ու անբռնազբոսիկ յերգում եյին մանկական և հեղափոխական յերգեր, վոտանավորներ արտասանում, շուրջպարեր պարում, խաղում և վերջում բոլորը Մարիա Իլինիչնայից գեղեցիկ խաղալիքներ ստացան: Վլադիմիր Իլիչը հաճույքով դիտում եր յերեխաներին, վորոնք չարաձճիություն եյին անում, վազվողում, ընկնում եյին նրա վոտքերի մոտ. նա, ըստ յերեկոյին, գոհ եր կազմակերպած յերեկույթից: Նվերներից հետո յերեխաներին ծիծաղաշարժ նկարներ ցույց տվին, և ապա ամենքը ցրվեցին իրենց աները:

## 5. ԾԱՆՐ ԼՈՒՐԸ

Մոտավորապես հունվար 7-ին գնացի Մոսկվա և ապա 10-ին Լենինգրադ, վորպեսզի պարապմունքներս սկսեմ:

Գորկիից այն ապավորությունն ու համոզմունքը տարա, վոր 6 ամսից հետո Վլադիմիր Իլիչը համարյա առողջացած կը լինի, և ինքս ինձ մտածեցի, վոր մի տարուց հետո նա նույնիսկ կը սկի աշխատել, թեև, իհարկե, վոչ առաջիւ թափով:

Հունվարի 22-ին սաստիլ բքանման քամի յեր, ելեքտրաքարշերը չելին յերթեեկում, լրագիրներ չկային, և յես ապրում եյի Լեննոյում, քաղաքի կենտրոնից 15 վերստ հեռու: Յեղանակին առաջ եր բերում մարդու մեջ տիուր, թախծալի տրամադրություն, և մարդու գլխով հազար ու մի անհեթեթություններ եյին անցնում:

Եյսպես մտածկոտ, հստած եյի սենյակումս և, ելեքտրականությունը հանգինելով, վառեցի վառարանը:

Ներս մտավ ընկերս: Մութի մեջ գեմքը չտեսա, բայց ձայնից ճանաչեցի:

— Յեկ ժողովի, — տուաց նա ինձ:

Յես ապրում եյի ջրի պահեստարանի կոմմունայում և կարծեցի, թե ժողովը ինձ հարեան կոմմունայում աեղի կունենա: Այդ պատճառով հարցրի, թե որակարգն ինչ ե, և ասի, վոր իսկույն կը գամ:

— Բայց վոչ կոմմունայում, այլ III հանրակացարանում (համալսարանի), արտակարգ ժողով ե... Վլադիմիր Իլիչը վախճանվել ե...

— Ի՞նչպես թե: Յերբ, — բացականչեցի յես, ցնցվելով. — չի կարող պատահել:

— Յերեկ յերեկոյան, ժամը 7-ին:

Յերեկոյան ժամը 7-ն եր: Յես արագությամբ փակեցի վառարանը և վազեցի համալսարանի III հանրակացարանը: Թափվում եր ձյունը, սարսափելի քամի յեր, բոլոր կողմերից շտապում եյին ժողովի լուր սահածողները: Յես վոչ մի բանի վրա ուշագրություն չեյի դարձնում և

գնում եյի արագ, համարյա վազում, իսկ զլխումս լնկերոջս հաղորդած ծանր բոթը կռվում եր զիտակցությանս հետ, վորը համառությամբ հրաժարվում եր ընդունել այս:

«Չի կարող լինել... սխալ ե... պրովոկացիա... իլիչը չի կարող մեռնել... չպետք ե...» կայծակի արագությամբ անցնում եյին զլխովս, իսկ միաժամանակ մի բան ծակում եր. — մեռավ... մեռավ... մեռավ...

Կատարվածի կիսագիտակցությամբ յես ակումբի դահլիճը մտա, ուր արդեն շատ ժողովուրդ եր հավաքվել. շուտով դահլիճը լցվեց այնքան, վորքան հնարավոր եր, միաժամանակ սանդուխքների վրա խոնվել եյին դահլիճում տեղ չգտած ուսանողները: Շատերը, մեծ մասը, վոչինչ չգիտեյին, հանաքներ եյին անում, ծիծառում...

Վարագույրը բացվեց: Բեմի վրա վլագիմիր իլիչի նկարն եր կարմիր շրջանակի մեջ, ոև տախտակե ֆոնի վրա: Բոլորի դեմքերը լրջացավ, բոլորը լուցին: Նախագահության միջից վեր կացավ կոլեկտիվ բյուրոցի անդամ ընկեր Մեերսոնը:

— Ընկերներ, — դանդաղ արտասանեց նա, — յերեկ, յերեկոյան ժամը 7-ին, վախճանվել ե վլագիմիր իլիչ Լենինը...

Բոլորը մի մարդու նման վոտքի կանգնեցին և միասին յերգեցին թաղման քայլերգը: Մի քանիսը լալիս եյին: Յես ինձ, կարծես, յերագի մեջ եյի զգում: Այդ գիշեր յերկար ժամանակ յես չեյի կարողանում քնել, իսկ յերք քնեցի, յերազումս վլագիմիր իլիչին տեսա կենդանի, առողջ և յես խաղում եյի նրա հետ առաջվա նման:

Առավոտյան իրերից մի քանիսը վերցրի, վոտով քաղաք զնացի, տոմսակ ճարեցի և նույն գիշերը ճանապարհ ընկա Մոսկվա:


Մինչև չհասա Մոսկվա, չկարողացա միանդամայն

համոզել ինձ, վոր վլագիմիր իլիչը ել չկա ես աշխարհում, թեև լրագրերում արդեն կարդացի նրա մահվան մասին: Յես չեյի կարողանում ինձ պատկերացնել, վոր նա ել կարող ե մեռնել այնպես, ինչպես և ամեն մի մարդ, և մտածում եյի, վոր նա իրավունք չունի մեզնից հեռանալու: Նա պատկանում եր բոլորիս, և յես չգիտեյի, թե ինչպես կարելի յե ապրել առանց իլիչի:

Սուգի զրոշակները, փողոցներում խոնված ահագին ժողովուրդը և Թատրոնական հրապարակում սև անվերջ, յերկար հյուսվող մարդկային կենդանի ժապավենը — բոլորը հիշեցնում եյին այդ հակա վիշտը...

## 6. ՄՆԱՌ ԲԱՐԵՎ, ԻԼԻԶ

Զեռք բերելով անցատումս, շտապեցի Միությունների Տունը: Միայն այստեղ յես համոզվեցի, վոր այդ բոլորն



Լենինի գամբարանը Մոսկվայում Կարմիր երազարտի վրա:

իրականություն եւ վերջին անգամ տեսա այն թանգագին դեմքը. այլևս ուրախ չեր, չեր ծիծաղում, բայց զարմանալի հանգիստ ու անշարժ, կասես իլիչը քնած եր միայն:

Յես պատվո պահակ կանգնեցի: Այդ կարճ վարկյանին—5 րոպեյում յես վերջին անգամ մոտիկից նայեցի նրան: Յես չկարողացա, առանց հայացքս հեռացնելու, նայել նրան, վորովհետև յերեակայությունս կենդանացրեց նրան, և յես սկսեցի տեսնել, թե նա ինչպես շարժվում է: Յեվ յես լոելյայն ասում եյի. «Վեր կաց, Վլադիմիր իլիչ, ուրախացրո՞ւ բոլորին, ինչու յես պառկել այստեղ և լոել...»:

Ինձ փոխարինեցին, և յես հեռվից նայում եյի, թե ինչպես դագաղի մոտից յերկու ճյուղով անվերջ հոսում եր ու մարդկային կենդանի գետը, հոսում եր գիշեր ու ցերեկ...

Անցնող ամբոխի միջից անդադար լաց ու ճիչ եր լսվում. տխուր հնչյունները թաղման քայլերգի՝ արձագանքում եյին Սյունազարդ գահինի կամարների տակ, իսկ գետը հոսում եր շարունակ, և դագաղը, վորին հովանի եյին անում չորս բարձր արմավենի և սե-կարմիր գրոշակներ, վորպես մի կղզի, հանգստանում եր ու գետի ալիքների մեջ... Յեվ հնչյունները թաղման քայլերգի տարածվում եյին, լայնանում, աճում...

Այդ որերը ժողովուրդը վերջին անգամն եր տեսնում իր իլիչին: Յեվ իլիչն առաջին անգամ եր լուս նրանց առաջ...

— Մնաս բարե, իլիչ, — բացականչեց մի բանվոր, անցնելով դագաղի մոտով:

Մնաս բարե, իլիչ: Աշխարհը չի մոռանա քեզ, մա-

տաղ սերունդը սնվում է քո ավանդներով, ապագան միմիայն մեզ կը պատկանի:


Դու սկսեցիր—մենք կը վերջացնենք: Հարկավոր չե արտասվեր:

Մեծ ճարտարապետը թողեց մեզ նոր կյանքի հատուկագիծը, — մենք կը կառուցենք այն:

«Մնաս բարե, իլիչ»...

Գ. Լոգաչեվ

Լենինգրադ, 1924 թ. փետրվ.



# ՆՅՈՒԹԵՐԻ ՑԱՆԿԸ

Ցերեա

Նախարան, — Մարիա Որտխելաշվիլի . . . . .

3

## ՄԱՍՆ I.

Լենինի անկառն . . . . .	7
Ճառ իլիչի հիշատակին . . . . .	—
Մոսկվա ուղարկված նամակ . . . . .	8
Սելյուժա Ձալեյի նամակը . . . . .	—
Լենինը վերադառնում և Ռուսաստան 1917թ. . . . .	9
Իլիչը թաքնվում և . . . . .	—
Մոսկվայի խորհրդում . . . . .	11
«Խփել-փախչել» . . . . .	13
Կրեմլի բակում . . . . .	—
Մանկապարեզում . . . . .	14
Տոնածառ Ժողկոմխորհում . . . . .	—
Յերբ գնում ելինք զետնախնձոր բերելու . . . . .	15
Սվերդլովյան զահինձում . . . . .	16
Իլիչը և բանվորները . . . . .	17
Իլիչը շաբաթնորյակում . . . . .	18
Իլիչի բնակարանը . . . . .	19
Խոդինկում . . . . .	20
Ով զտավ իմ ձեռնոցը . . . . .	22
Ինչ զիտեմ յես Վլադիմիր Իլիչի մասին . . . . .	23
Վլադիմիր Իլիչի ձառը . . . . .	—
Ինչ զիտեմ յես Լենինի մասին հորս պատմածից . . . . .	24
Հիշողություն Լենինի մասին հորեղբորս պատմած . . . . .	—
Հանդիպումն Լենինի հետ . . . . .	25
Կարմիր հրապարակում . . . . .	28
Ավտոմոբիլի մեջ Լենինի հետ . . . . .	30
Ինչպես յես յեղա Լենինի մոտ . . . . .	32
«Մեր Իլիչը» . . . . .	—
Խոդրագիր Իլիչին . . . . .	34
Լենինը միտինգում . . . . .	36

## ՄԱՍՆ II.

Վլադիմիր Իլիչի թագումը . . . . .	38
Ինչպես իմացանք Լենինի մանը . . . . .	—
Դեպի Իլիչի զազաղը . . . . .	43
Ինչպես զիմանցորեցինք Իլիչի մարմնին . . . . .	45
Մոսկվայի փողոցների տեսքը հունվարի 27-ի սգի որը . . . . .	46
Ինչպես հրաժեշտ ավինը գ. ի. Լենինին . . . . .	47
Աշխատենք . . . . .	52
Լենինի յետից . . . . .	54



	Հիմք
Թանգաղին առաջնորդ Վ. Ի. Լենինի մահը . . . . .	56
«Մենք քեզ միայն գագաղում տեսանք» . . . . .	—
«Լուս եր, տխուր, ցուրտ եր սաստիկ . . . . .	57
Հունվարի 27-ին . . . . .	58
Առաջնորդի մահը . . . . .	59
Անփոփոխելին . . . . .	60
Լենինի հիշատակին . . . . .	61
«Մեռել ե...» . . . . .	62
Լենինի հիշատակին . . . . .	—
Իլիչի թաղումը . . . . .	63
Նրա գերեզմանը . . . . .	—
«Զենք հավատում» . . . . .	64
Հրաժեշտ . . . . .	65
«Միթե պիտի սառի» . . . . .	66
Մանուկները . . . . .	67
Իլիչի մահվան առիթով . . . . .	68
Լենինի մահվան առիթով . . . . .	70
Ռազմական, Լենինյան . . . . .	72
Թաղման քայլերգ . . . . .	74

*Թարգմանություն Գեղրդական Գրքին*

**ՄԱՍՆ** III.

Վ. Ի. Լենինի կենսագրությունը . . . . .	75
Քոյլը յեղբոր մասին . . . . .	79
Վ. Ի. Լենինի մանկության տարիները . . . . .	84
Իլիչի ծննդավայրում . . . . .	87
Հին բանվորի հիշողությունները իլիչի մասին . . . . .	89
Պարագաներ, վորոնց մեջ աշխատել ե ընկ. Լենինը . . . . .	90
Լենինը վորպես մարդ . . . . .	95
Լենինս ու յերեխանները . . . . .	98
Խորհրդավոր վրանը . . . . .	99
Լենինի վրա կատարված մահափորձը Մոռկայում . . . . .	107
Գյուղացիների հրաժեշտը իլիչին . . . . .	115
«Տուգաննեց» . . . . .	117
Ծերուկ գեղջուկը Լենին մոտ . . . . .	118
Յոթ տարի (1917—1924) . . . . .	121

*Թրու.*

*Թարգմ.*



ԳԻՆՆ Ե 50 ԿՈՊ.

ԱՐ 1  
ՋՐԱԿ 1  
—  
2

---

# „ԿԱՐՄԻՐ ԾԻԼԵՐ“

ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԱՁԱՐԴ ԱՄՍԱԳԻՐ

Բ Ա Ժ Ա Ն Ո Ր Դ Ա Զ Ի Ն Ը

Տարեկան	.	.	.	.	.	.	.	.	.	3	ո.	50	լ.
6 ամիսը	.	.	.	.	.	.	.	.	.	1	ո.	80	լ.
3 »	.	.	.	.	.	.	.	.	.	—	—	90	լ.
Ն ը	.	.	.	.	.	.	.	.	.	—	—	35	լ.

ՓՈՍՏԻ ԽԱԽԱՍՏՐԻ ԲՈՒԺԱՆՈՐԴԱՂԹՎՈՎԻ ՀԱՇՎԻՆ

ՀԱԱԳԵՑՆ ԹԻՖԼԻՍ, ԹՈՒԹԱՎԵԼԻ ՓՈղ., Ն 31, ԼՈՒԺՈՂԿՈՅ, ԳՐԱԿԱՆ-ԳԵՂԱՔ-  
ՎԻԱՏԱԿԱՆ ԱԵԼԳԻՍ, «ԿԱՐՄԻՐ ԾԻԼԵՐ»-Ի ԽԱՐԱՊՐՈՎԹՅՈՒՆ

---